

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

32րդ. ՏԱՐԻ ԹԻԻ 49 (1599) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒԱՐ 5, 2013
VOLUME 32, NO. 49 (1599) SATURDAY, JANUARY 5, 2013



Պաշտոնաթերթ
Ս. Դ. Հնչակեան Կուսակցության
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104



HAPPY NEW YEAR



ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

ԵՒ

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՄԱՍԻՍ - 2013

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՔԱՐՈՋԸ

«Ջի հաւատքն ձեր մի՛ իցեց իմաստութեամբ մարդկան, այլ գորու-բեամբ Աստուծոյ» (Ա. Կորնթ. Բ. 5)

Մարդկութեան պատմութեան մէջ մեծագոյն հրաշքն է Աստուածորդու՝ մեր Տիրոջ եւ Փրկչի Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը, որուն մէջ կը տեսնենք Աստուծոյ գորութիւնը: Աստուծոյ գորութիւնը ամբողջապէս ըմբռնելու համար բաւական է մարդկային իմաստութիւնը, քանզի այն սահմանափակ է իր կարողականութեամբ:

Աշխարհը, եթէ միայն մարդկային իմաստութեամբ պիտի փորձէր թարգմանել Յիսուսի Ծննդեան խորհուրդը, ապա Անոր Ծնունդը կը պարպուէր աստուածային գորութեան խորհուրդէն: Հաւատքի պրիսմակէն միայն կարելի է տեսնել ու հասկնալ Աստուածորդու խոնարհումը երկինքէն-երկիր, որով մարդկութիւնը առաջնորդեց դէպի լոյս եւ կեանք:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի»:

Քրիստոսի Ծնունդը՝ Աստուածայայտնութիւնն է, որուն խորհուրդը կ'ընկալենք հաւատքով եւ իր Ծնունդին մէջ կը տեսնենք մեր կեանքին նոր ծնունդը:

Արդարեւ, աւելի քան երկհազարամեակ մը մարդկութեան կեանքը լուսաւորուեցաւ եւ կերպարանափոխուեցաւ Յիսուսի Ծնունդով: Գիտութիւնը անընդհատ նոր յաջողութիւններ արձանագրեց, մարդը տիեզերքի անջրպետին մէջ կայաններ ստեղծեց, աշխարհը համակարգիչի մը մէջ ամփոփուեցաւ, բայց միշտ աւելի ծանր կշռեց եւ յաւերժականութիւն հաղորդեց Յիսուսի Ծնունդը, քանզի Անոր մէջ մարդկութիւնը տեսաւ իր ծնունդը եւ գալիքը, իսկ գիտական նուաճումները դարձան միայն նոր աստիճանները բարձրանալու առ Աստուած:

Ուրեմն, հաւատքի պրիսմակէն մէջէն նայեցէք Յիսուսի Ծնունդին, եւ մի՛ փորձէք մարդկային իմաստութեամբ թարգմանել աստուածային գորութիւնը, որը գերի վեր է քան մարդկային ամէն գորութիւն:

Յիսուսի Ծնունդը՝ մարդկութեան առջեւ բացուած երկինքն է, որ մեզ կը միացնէ Աստուծոյ, որպէսզի Անոր լոյսին ճառագայթով մը դարձնենք մեր կեանքը: Ի գուր չէ, որ Եկեղեցւոյ հայրերը Յիսուսի Ծնունդը կը տեսնեն որպէս խորհուրդը խաղաղութեան: Յիսուսի Ծնունդին մէջ աշխարհը պէտք է նորոգէ ինքզինքը: Անոր Ծնունդը աստուածային հրաշքն է աշխարհի կեանքին մէջ: Իսկ Անոր Ծնունդին հաղորդակից մարդը այո՛ իր հոգին կը կերպարանափոխէ, բայց աւելին՝ կը հրաշագործէ իր կեանքը այնպիսի ուժակամութեամբ մը, որ տուեալ անձին հոլութեան մէջ կը տեսնենք արմատաւորումը Յիսուսի Ծնունդին:

Իւրաքանչիւր տարուոյ աւարտին աստուածային օրհնութիւն է, որ կը սպասէ մեզ, երբ մեր հոգեւոր կեանքը պէտք է կը զգայ աստուածային ներգործութեան, որպէսզի մեր հոգեւոր հոլութեան մէջ վերակերտենք մարդը համաձայն Աստուծոյ պատկերին: Յիսուսի Ծնունդը, արդարեւ, զգաստութեան հրա-



ւէրն է, որպէսզի կեանքն ապրինք Տիրոջ կեանքի օրինակով, մեր հոգեւոր հոլութիւնը ձեռքագտելով ժամանցելին ներկայացնող բոլոր տեսակի յոռի նշաններէն, բարքերէն ու վարդերէն, որոնք մեր մէջ կը խեղդեն ծնունդը նոր մարդուն, խոնարհ մարդուն, բարեգործին, խաղաղութիւն տնայացողին: Եթէ հաւատքով չտեսնենք Յիսուսի Ծնունդը, եւ աստուածային գորութեան մղումով չներթափանցենք Անոր հոլութեանը մէջ, ապա շատ հեռու կը մնանք Աստուծոյ, եւ մեր մէջ կը խեղդուի նաեւ Աստուծոյ ստեղծագործակից դառնալու բարի միտումը:

Ով՛ քրիստոնեայ մարդ, աղօթքով իջիր հոգիիդ մինչեւ ամենախորը մասերը, որովհետեւ միայն խոնարհ հոգով կրնաս դիմաւորել Աստուածորդին: Մտերին մէջ ծնունդ առնող Աստուածորդին անարատ մօր մը սիրոյ եւ գուրգուրանքին մէջ իր կեանքը դարձուց խոնարհ կեանքին հրաշքը, ճանապարհն առ Աստուած բոլորին համար:

Յիսուսի Ծնունդը, արդարեւ, մարդուն առջեւ բացուած ճանապարհն է առ Աստուած: Ազգերու մեծ ընտանիքին մէջ մեր Սուրբ Եկեղեցին իր ներկայութեամբ դարձաւ Դուռը՝ դէպի Աստուած տանող ճանապարհին: Անթիւ սերունդներ իրենց կեանքը մշտապէս նորոգեցին մեր Տիրոջ հրաշալի Ծնունդին մէջ ու Անոր հետ կապեցին իրենց կեանքը: Քանզի անոնք լաւագոյնս հասկեցան, որ կեանքն ապրելի Յիսուսով կը բացատրէր հոգեւոր ու բարոյական կեանքով արժեւորել Աստուածապարզեւ մեր կեանքը: Մեր նախնիք Աստուածգիտութեան լոյսին ակնդէտ իրենց մէջ գտան գերագոյն խորհուրդներ ու տեսիլքներ, որոնք հայ քրիստոնեային հոլութեան մէջ իմոթեցին սրբութիւններ, որոնցմով պայմանաւորուած է մեր ազգի յաւերժականութիւնը, հաւատքը. հայրենիքն ու մշակոյթը եւ աւելին՝ համամարդկային արժէքներու հանդէպ յարգանքը, խաղաղութիւնը, ժողովուրդներու միջեւ եղբայրութեան ոգին, արդարութիւնը: Մեր Սուրբ Եկեղեցւոյ եւ ազգի պատմութիւնը այս բոլորը կ'արտացոլեն: Մեր Տիրոջ Յիսուսի Ծնունդը մեր հոգեւոր հոլութեանը մէջ կ'ամրապնդէ աստուածայինը, որպէսզի մեր կեանքի ընթացքն ըլլայ բարի: Մարդը տառաժամօրէն պէտքն ունի անուցա-

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

«Եւ երբ տունը մտան՝ տեսան մանուկը իր մօրը՝ Մարիամի հետ, եւ երեսի վրայ իյնալով՝ երկրպագեցին անոր. ապա բանալով իրենց գանձերը՝ անոր մատուցին նուէրներ՝ ոսկի, կնդրուկ եւ գմուռս: Եւ որովհետեւ տեսիլի մէջ ազգարարութիւն եղած էր իրենց չվերադառնալ Հերովդէսի մօտ, ուրիշ նամբով գացին իրենց երկիրը:» (Մատթէոս Բ. 11-12):

ԱՍՏՂՈՎ ՄԸ ՍԿՍԱԻ... աստղ մը՝ որ երկնակամարին վրայ գիշեր ատեն երբեք չէր տեսնուած եւ ուրեմն, ըստ ինքեան, խորհրդաւոր եւ անակնկալ երեւոյթ մը կը պարզէր: Սոյն նորայայտ աստղին երեւումը կոչ մը պիտի հանդիսանար Բեթղէհէմէն արեւելք տեղ մը գտնուող աստղագուշակ մոզերուն համար, որպէսզի ճամբայ ելլէին՝ առանց գիտնալու իրենց վերջնական նպատակակէտը, որ հետագային յայտնի պիտի դառնար անոնց:

Գուցէ գուշակութիւն ընելու սովորութիւնն էր, որ պիտի մղէր զանոնք նշմարելու այդ աստղը՝ որուն առաջնորդութեան ուղիին հետեւիլ, մինչ ուրիշներ չէին անդրադարձած անոր կարեւորութեան: Ինչ ալ ըլլար պատճառը՝ մոզերը կազմ ու պատրաստ գտնուեցան նախաձեռնելու այդ անակնկալ ճամբորդութեան: Կարելի է երեւակայել թէ ճամբու ընթացքին աստղին առաջնորդութեամբ իւրաքանչիւր քայլ մասնաւոր իմաստ մը կը ստանար եւ ակնկալութեան զգացում մը կ'արժարձէր, յատկապէս ճամբու վերջաւորութեան իրենց սպասող այն խորհրդաւոր դէպքին առնչութեամբ:

Իսկ մենք, որ քաջածանօթ ենք Ս. Ծննդեան պատմութեան, գիտենք թէ մոզերու ճանապարհը զանոնք առաջնորդեց Մանուկն Յիսուս Քրիստոսին: Աւետարանէն գիտենք նաեւ թէ երբ անոնք Տիրոջ առջեւ կանգ առին, երեսի վրայ իյնալով երկրպագեցին եւ իրենց մեծագին գանձերը բանալով ընծաներ տուին Անոր:

Սուրբ Աւետարանը մեզի կը յայտնէ հետաքրքրական տեղեկութիւն մը եւս, որուն արձագանգ կը հանդիսանայ մեզմէ իւրաքանչիւրին ճամբորդութիւնը հոգեւոր կեանքի մէջ: Քրիստոսի ներկայութիւնը վայելելէ ետք՝ իմաստուն մոզերը ներշնչուեցան «ընդ այլ ճանապարհ» երթալու. տարբեր այն սովորական ճամբէն, որով անոնք կրնային ընթանալ. տարբեր այն մէկէն, որ զանոնք Բեթղէհէմ առաջնորդած էր: Ինչպէս որ աստղին առաջնորդութեան հետեւող իւրաքանչիւր քայլ մասնաւոր նշանակութիւն մը ունեցած էր, այնպէս ալ վերադարձի ճամբուն վրայ իւրաքանչիւր քայլ անմիջական նոր իմաստ մը պիտի ստանար: Թէպէտեւ այս անգամ իրենց նպատակակէտը քաջածանօթ էր, մոզերը տուն պիտի հասնէին որպէս փոխուած մարդիկ, որոնք «ընդ այլ ճանապարհ» երթալ ընտրած էին Քրիստոսի հետ իրենց ունեցած հանդիպումին պատճառով:

Սոյն փորձառութիւնը մեզմէ շատերուն ծանօթ է, այսինքն՝ առաջնորդուել կացութեան մը՝ զոր չենք ակնկալեր, եւ ապա անդրադառնալ որ այդ անակնկալ կացութիւնը մեզ փոխած է: Այս տարի եւս ալ այդպիսի փորձառութիւնն մը ունեցած էր, երբ ուխտագնացութիւն մը կը գլխաւորէի դէպի պատմական Հայաստանի ամենաներշնչիչ



վայրերէն մէկը՝ Ս. Խաչ Մայր Տաճարը Աղթամար կղզիին վրայ: Երբեք չէի ակնկալած որ օր մը Աղթամարի Տաճարին մէջ Ս. Պատարագ կրնայի մատուցանել, անշուշտ նկատի առնելով մեր ժամանակներու իրականութիւնները: Բայց եւ այնպէս՝ այս ամառ առիթը ներկայացաւ եւ նոր ակնկալութեանց զգացումը նոր իմաստ մը տուաւ ուխտաւորի իմ ճամբորդական քայլերուս դէպի Աղթամար կղզին:

Ս. Պատարագի ընթացքին Քրիստոսի ներկայութեան է որ կը գտնուինք. եւ կը փոխարինենք մոզերը՝ անոնց պէս Տիրոջ առջեւ ներկայանալով եւ պաշտամունք մատուցանելով: Այս է հիմնական իրողութիւնը իւրաքանչիւր Պատարագի ընթացքին՝ որ կը մատուցուի: Բայց Աղթամարի մէջ Ս. Պատարագի ընթացքին յիշեալ գաղափարը շատ ուժեղ կերպով ազդեց իմ վրաս: Այդ գաղափարի ազդեցութեան տակ եւ վերադարձայ Աղթամարէն նոր հայեացքով՝ տեսնելով նոր ճանապարհ մը իմ առջեւ եւ մեր ամբողջ ժողովուրդին առջեւ:

Ճամբու ընթացքին յիշեցի անցեալի բոլոր ուխտաւորները, որոնք պաշտամունքի կու գային այդ սուրբ տաճարը: Մտածեցի հաւատացեալ հայերու կողմէ կառուցուած այն բոլոր եկեղեցիներուն մասին, դարաւոր տաճարներէն մինչեւ աշխարհացրիւ սրբավայրերը, այնպիսի վայրեր, ուր հայ քրիստոնեան կայք հաստատած էր՝ ապրուստ հոգալու եւ զԱստուած պաշտելու: Մտածեցի հաւատքի եւ տեսլականի մասին եւ այդ բոլորէն վեր՝ սիրոյ, որուն մարմնաւորումն է իւրաքանչիւր Հայ Եկեղեցի:

Ասոնք անցեալին վերաբերող մտածումներ էին: Սակայն երբ Աղթամար կղզիէն նաւով կը մեկնէի, մտածումներուս կիզակէտը դարձաւ ապագան, որուն խորհրդանիշը կը հանդիսանար վանայ ծովուն վրայ բացուող լայնածիռ հորիզոնը, հարուստ՝ կարելիութիւններով եւ յոյսերով: Պատկերացուցի Ամերիկայի մեր համայնքները, մեր Հայաստանի հրաշալի Հանրապետութիւնը.

ՄԱՍԻՍ - 2013

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԱՌԱՋՆՈՐԴ՝ ՄԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ՍՈՒՐԱՏԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՍԸ

«Իսկ Մարիամ այս ամէնը կը պահէր իր սրտին մէջ եւ կը խորհրդածէր անոնց վրայ» (Ղուկ. 2, 19)

Գերջարգելի եւ Գերապատիւ Վարդապետներ, Առաքինազարդ Քոյրեր, Յոյժ սիրելի հաւատացեալներ,



Ս. Ծննդեան տօնը քրիստոնէական ամենահին տօներէն մին է որուն ընթացքին կը մասնակցին քրիստոնէական զանազան արարողութիւններու, եւ միաժամանակ առիթն է նաեւ կատարելու բոլորիս համար սովորութիւն դարձած աւանդական արարքներ՝ փոխադարձ մաղթանքներ, նուէրներ, ընտանեկան ճաշկերոյթներ, մսուր, կաղանդի ծառ, այցելութիւններ ծնողներուն եւ հարազատներուն, ինչպէս նաեւ մասնակցութիւններ եկեղեցական ծիսակատարութիւններուն...

Սակայն այս տարի, Ս. Ծննդեան տօներու ուրախալի մթնոլորտին շաղախուեցան թախծալի եւ սրտածմլիկ դէպքեր: Ամերիկայի Միացեալ Նահանգներու բնակիչները ցնցուեցան Նիւթաուն քաղաք՝ Սանտի Հուք անուան մանկապարտէզի սպանդէն, ուր քսան անմեղ մանուկներ եւ վեց ուսուցչուհիներ թիրախ դարձան բիրտ ու քստմնելի մարդասպան ոճիւրիս: Միջին Արեւելքի մէջ՝ մանաւանդ Սուրիա, ուր մեր հարազատ հայրերը արդէն երկու տարի է վեր իրենց համաքաղաքացիներուն հետ միատեղ, կը տառապին եղբայրասպան եւ քաղաքացիական անարկո պատերազմէն, որուն վախճանը եւ ծանր հետեւանքները տակաւին կը մնան անորոշ...

Որպէսզի այս եւ ասոնց նման աշխարհի մէջ տեղի ունեցած բազմաթիւ տխուր դէպքերուն դիմաց, կարենանք այս տարուան Ծննդեան տօները ապրիլ աւելի հոգեւոր շահաւէտ եւ նպաստաւոր կերպով քան նախկինները պէտք է որ աւելի ամուր ու խոր կերպով կառչինք մեր քրիստոնէական հաւատքին ու արժէքներուն:

«Սեւեռենք մեր աչքերը մեր հաւատքի պետին վրայ՝ Յիսուսի, որ զայն կը տանի կատարելութեան» (Եբր. 12, 2), ընդունինք Քրիստոսը որպէս կեդրոն տիեզերքի եւ պատմութեան: Եւ որպէսզի ա՛յս տարուան Ս. Ծննդը իւրաքանչիւր դրոշմ մը ունենայ իւրաքանչիւրիս համար, ապրինք ու ըմբռնենք զայն իր քրիստոնէական ամբողջ տարողութեամբ, հետեւինք մեր Երկնաւոր Մօր՝ Սուրբ Կոյս Մարիամի հաւատքի տիպարին, որուն անասանութեան ու մեծութեան մասին կը վկայէ Յովհաննէս Մկրտիչի մայրը՝ Եղիսաբէթ, երբ կ'ըսէ. «Երանի անոր որ հաւատաց թէ պիտի իրագործուին Տիրոջ կողմէ իրեն ըսուած խօսքերը» (Ղուկ. 1, 45):

Բենետիկոս ԺԶ. Սրբազան Քահանայապետը Հաւատքի Տարուան առթիւ հրատարակած՝

«Դուռն Հաւատոց» առաքելական նամակին մէջ, խօսելով Աստուածածնայ հաւատքին մասին կը գրէ հետեւեալը. «Հաւատքով

Մարիամ ընդունեցաւ հրեշտակին խօսքերը եւ հաւատաց աւետիսին, որ ինք Աստուծոյ Մայր պիտի ըլլար, անձնուէր հնազանդութեամբ... Նոյն հաւատքով ան հետեւեցաւ իր Որդու ջարդութեան ընթացքին եւ մնաց իրեն հետ մինչեւ Գողգոթայի բարձունքը: Հաւատքով՝ Մարիամ ճաշկերոյթ Յիսուսի յարութեան պտուղները եւ պահելով ամէն յիշատակ իր սրտին մէջ, փոխանցեց զանոնք Տասներկուքին, որոնք Վերնատան մէջ իրեն հետ հաւաքուած էին ընդունելու համար Սուրբ Հոգին» (Դուռն Հաւատոց, թիւ 13):

Սիրելիներս ի Քրիստոս, մաղթանքս է որ բոլորս միասին, որպէս անդամներ մէկ եկեղեցուց, դիմաւորենք ու ապրինք յառաջիկայ Սուրբ Ծննդեան տօնական օրերը ա՛յս Մարիամեան անասան հաւատքով: Թող այս հրաշագործ Ծնունդը ըլլայ առիթ մը՝ պահելու Աստուածաշունչի խօսքերը մեր սրտերուն մէջ եւ խորհրդածելու անոնց վրայ, որպէսզի անոնցմով սնած ու զօրացած հաւատքով վերափոխենք մեր կեանքը եւ վերադառնանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի որ աշխարհի միակ Փրկիչն է: Ինչպէս որ կը շեշտէ Սրբազան Քահանայապետը՝ ապրին ամբողջական ու կատարեալ հաւատք մը ի Քրիստոս ու հռչակենք զայն խոր համոզմով: Արտաշայտենք այս հաւատքը մասնակցելով ծիսական եւ եկեղեցական զանազան արարողութիւններուն եւ ի մասնաւորի՝ Պատարագի Սուրբ Զոհին Հաղորդութեան, որ՝ «Աղբիւրն ու զազաթնակէտն է քրիստոնէական կեանքին»: Մեզմէ իւրաքանչիւրը թող իրագործէ եւ վկայէ իր հաւատքը կեանքին մէջ, որպէսզի անոր գեղեցկութիւնն ալ արտացոլայ մեր առօրեային մէջ: Հայցելով Մանուկ Յիսուսին օրհնութիւնը բոլորիդ վրայ, ի սրտէ կը մաղթեմ անասան եւ հաստատուն հաւատքով ապրուած Սուրբ Ծնունդ եւ Նոր Տարի մը, լի խաղաղութեամբ եւ երջանկութեամբ:

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ

Ձեզի մեզի մեծ աւետիս:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԱՒԵՏԻՍ

Ս. Ծննդեան եղանակն է դարձեալ: Երկնեանց լոյսերով, արծաթաշող ու ոսկեփայլ զարդերով, եւ արուեստական ճիւղերու կամ ծաղիկներու կամարներով նորէն պճնուած են քաղաքներու մեծ պողոտաները: Խանութներ ու վաճառատուններ իրենց ցուցափեղկերը զարդարել են գունազեղ առարկաներու, բազմատեսակ ապրանքներու ճոխութեամբ, հրապուրելու համար անցորդները՝ տօնական օրերու ընթացիկ առեւտուրի:

Երբ մարդիկ կը տօնախմբեն Բեթլեհեմի խեղճուկ մսուրին մէջ խանձարուրուած Յիսուս Մանուկին ծնունդը, կը թուի թէ, Անոր անձին գալուստէն աւելի կ'ողջունեն այն խորհուրդը, կարօտներն ու խոստումները, որոնք մարմնաւորուած են Քրիստոսի անունին եւ հռչակած ճշմարտութեան մէջ:

Որչափ դառն ու տխուր իրականութիւն է, որ գնումներու աճապարանքին մէջ միւրճուած եւ աշխարհիկ խրախմանքներով կլանուած՝ շատեր յաճախ կը մոռնան, թէ իրօք որո՞ւն ծննդեան տօնն է, զոր կ'ոգեկոչեն: Նոյնչափ տխուր եւ ցաւալի է նկատել, որ նոյնիսկ սրտառուչ պաշտամունքներով Յիսուսի Ծնունդը տօնակատարող բազմութիւններէն շատեր չեն ապրիր Անոր բերած նոր կեանքին վսեմ սկզբունքները:

Ս. Ծնունդը կ'աւետէ թէ՛ Յիսուս Քրիստոս երկինքի փառքը թողելով մարմնացաւ եւ մարդացաւ մեղապարտ մարդկութիւնը փրկելու համար: Բարձեալն Աստուած խոնարհեցաւ եւ մինչեւ երկիր եկաւ, որպէսզի մարդ արարածը երկրէն մինչեւ երկինք բարձրացնէ: Ասիկա շարականերգուին խօսքով մեծ եւ սքանչելի խորհուրդ մըն է, որովհետեւ դժուար է երեւակայել եւ լիովին հասկնալ, թէ ինչպէս Տիեզերքի Արարիչը մարմնացաւ մարդու մէջ, որպէսզի բարձրացնէ մարդը իր մեղանշական կեանքէն դէպի աստուածային կեանքի բարձր մակարդակին: Այդ էր որ Յիսուս ըրաւ իր հրաշափառ Ծնունդով, իր աննման կեանքով, իր մահուամբ եւ յարութեամբ: Ամէն անոնք, որոնք կ'ընդունին



Ձինք իբրեւ Փրկիչ, Աստուծոյ որդիները կ'ըլլան ո՛չ արեան ճամբով եւ ոչ մարմինի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծոյ ծնելով Յովհաննու 1.13(Այ՛ս է Ս. Ծննդեան աւետիսը:

Բոլոր անոնք որոնք կը զանգատին, թէ երկու հազար տարի է ի վեր Քրիստոս չէ կրցած մարդիկ մեղքէ ազատել, գիտնալու են թէ Ան կրցած է փրկել բոլոր անոնք, որոնք ընդունած են զինք իբրեւ իրենց կեանքի Տէր եւ Փրկիչ: Իսկ անոնք, որոնք զինք չեն ընդունած տակաւին իրենց մեղքի ճիրաններուն եւ խաւարին մէջ են:

Յովհաննէս Առաքեալը կը վկայէ թէ Քրիստոս է «ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով կը լուսաւորէ մարդկութիւնը» (Յովհ. 1.9), Քրիստոս տակաւին կը շարունակէ աշխարհին լոյսն ու յոյսը ըլլալ, բոլոր անոնց համար, որոնք պատրաստակամ են խաւարէն Լոյսին դառնալու: Արդ, բոլոր «լուսոյ որդիները» Ս. Ծնունդի առթիւ սրտի բերկրանքով կրնան յայտարարել՝

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ. Ձեզի, մեզի մեծ աւետիս»

Վեր. Վահան Յ. Թութիկեան
Գործադիր Տնօրէն
Հայ Աւետարանական
Համաշխարհային Խորհուրդի

ՆՈՐ ՏԱՐԻ ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ

Նոր օր է գալիս, Նոր կեանք մեզ տալիս, Բերք, բարիք բերում, Առողջ կեանք բաշխում...

Կեանք տալիս հողին, Ու պարարտ հողը Մեզ բերք նուիրում...

Անուշ մանուկներ, Նա ձեզ է փնտռում, Սիրում է սրտանց Յոյսեր ներշնչում...

Ողջոյն, Նոր Տարի, Բեր մեր աշխարհին Ծով խաղաղութիւն, Մեր, եղբայրութիւն...

Զիւն, անձրեւ բերում,

Մայր Հայաստանին Միշտ ամուր պահիր, Որ եռագոյնը Յաւերժ ծածանի...

ՏԱՐԵՄՈՒՏ ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Մէկ տարի էլ անցաւ, Մեր կեանքից Պոկուեց եւս մի էջ, Անհունի մէջ մշուշուեց, թաղուեց Անցեալը սնամէջ: Այսպէս է կեանքը: Անցնողը կ'անցնի, Կը ծնուեն նոր մարդիկ,

Կ'երագեն, կը տեմչան Ապրելու երջանիկ: Մէկ տարի էլ անցաւ, Մեծացանք տարով, Մարեց, խաւարեց անցնող տարին Դե՛հ, ի՞նչ երթաւ բարով:

www.massispost.com
daily news updateds

ԳԱՂԱՓԱՐԻ ՈՒԺԸ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Մարդ անհատին այս աշխարհի վրայ ապրած տարիները սահմանափակ են: Հետեւաբար՝ եթէ անոր ուշքն ու միտքն ալ պիտի սահմանափակուին միայն այդ տարիներու տարածքին վրայ ապրելիք իր կեանքով, ապա ո՞ւր մնաց տարբերութիւնը մարդուն եւ անասունին: Եթէ մարդ միայն իր գոյութիւնը ապահովելու եւ ստամոքսը կուշտ պահելու բնագործ ապրէր, ապա՝ իր նախնական վիճակէն դուրս ելած չէր ըլլար: Բայց երբ իր առօրեայ մտքին, վեհ գաղափարներու եւ ապագայ սերունդներուն աւանդ մը թողելու գիտակցութիւնը ունեցաւ, սկսաւ քաղաքակրթութիւն մշակել: Մարդը գիտակցեցաւ, որ թէեւ ինք մահկանացու է, բայց իրմէ ծնած վսեմ գաղափարները կրնան գոյատեւել դարեր շարունակ: Հետեւաբար՝ այդպիսի գաղափարներու յղացման ու հետապնդման միջոցաւ, ան ոչ միայն կրնար իմաստաւորել ու արժեւորել այս աշխարհի վրայ իր գոյութիւնը, այլեւ՝ նոյնիսկ անմահանալ:

Հայ մարդն ալ, որպէս հնագոյն ժողովուրդի գաւակ, այդ գիտակցութեամբ կերտեց իր ինքնուրոյն մշակութիւնը եւ այդ ճամբով նպաստած եղաւ նաեւ համաշխարհային քաղաքակրթութեան կերտման: Պատմահայր Խորենացին դրուատեց եւ օրինակելի տիպարներու վերածեց այդպիսի անհատ առաջնորդներ, որոնք մտքով անցածը չէին անուծ, այլ ուշադրութիւն էին դարձնում միայն մնալունին եւ անանցականին: Հայ ազգը, հակառակ փոքր ածու մը ըլլալուն, իր դարաւոր գոյութիւնը կը պարտի իր այն գաւակներուն, որոնք գիտակցօրէն աշխատեցան ժողովուրդի մէջ տարածել վսեմ գաղափարներու հետեւելու անհրաժեշտութիւնն ու արդիւնաւէտութիւնը:

Բայց ինչպէ՞ս բացատրել այն հակասութիւնը, որ հանճարներու ծնունդ տուող հայ ազգը, դարերով ոտնակոխ եղած է օտարներու տիրապետութեան տակ: Արդեօ՞ք անոր համար, որ ժողովուրդը օրին ընդհանրապէս չէ հասկցած իր հանճարները, չէ կրցած ընկալել անոնց գաղափարները եւ զանոնք կիրառել իր առօրեայ կեանքին մէջ: Արդեօ՞ք անոր համար, որ չէ կրցած հաշտեցնել հանճարներու ջատագոված վարքը իր առօրեայ վարքին հետ: Անոնց գծած ուղիին

հետեւելը իր առօրեայ հանգիստի խռովման պատճառ գտած է եւ նոյնիսկ հալածած է զանոնք: Ու միայն ուշացումով, երկար տարիներ ետք գիտակցած է անոնց արժէքին, շատ մը պատեհ առիթներ ձեռք տալէ ետք: Հալածեալներու շարքը երկար է. Խորենացիէն մինչեւ Կոմիտաս, Չարենց ու Սեւակ, Պապ ու Արշակ թագաւորներէն մինչեւ Մխիթար Սպարապետ ու Անդրանիկ, եւ այլն...

Մեր հանճարներուն ջատագոված գաղափարներուն մէջ առանձնապատուկ շեշտ մը դրուած է հաւաքական գործակցութեան գաղափարախօսութեան վրայ, որպէս փրկարար ու ժողովուրդի տառապանքներու վերացման: Մաշտոցէն մինչեւ Չարենց այդ պատգամն է, որ ուժգին հնչած է, բայց զարմանալիօրէն չէ դարբնուած հայ անհատի մտածելակերպին մէջ: Դժբախտաբար հայուն շեշտուած անձնասիրութիւնը միշտ ալ խոչընդոտ հանդիսացած է անձնականէն ու հատուածականէն վեր ազգասիրական ձգտումներու զարգացման: Աւելին, հաւաքական ուժի պիտակին տակ, ազգային մասնիկներ ձգտած են մենաշնորհեալ իրավիճակներու ստեղծման, փորձելով իրենց տիրապետութիւնը տարածել ազգի մեծամասնութեան վրայ, բայց յանգած հակառակ արդիւնքի, վնասելով ազգային յառաջխաղացքին:

Չխորանանք մեր պատմութեան մէջ: Նայինք քսանամեակէ մը ի վեր անկախացած Հայաստանի զարգացումներուն: Ազգասիրական գիտակցութեամբ լի ո՞ր մէկ անձը պիտի համարձակէր բնապահպանական աղէտներու յառաջացման գնով, կողոպտել երկրի ընդերքի հարստութիւնները յօգուտ իր անձնական շահին: Ո՞ր մէկ ազգասէրը պիտի համարձակէր իր անձնական շահին համար զրպանել անհաւոր երկրաշարժէն տուժած ժողովուրդի համար սահմանուած օգնութիւնները, աղէտէն մօտ քսանհինգ տարիներ ետք իսկ աւելի քան չորս հազար ընտանիքներ տնագուրկ պահելով: Ո՞ր մէկ ազգասէրը պիտի համարձակէր հազարաւոր գոհւածներու արեան գնով ազատագրուած տարածքներէն հարստութիւն դիզել, բայց եւ չնպաստել ո՛չ գոհուածներու ընտանիքներուն ապահովման եւ ո՛չ ալ այդ

տարածքներու վերաբնակեցման գործին: Ո՞ր մէկ ազգասէրը պիտի համարձակէր իր անձնական շահին համար պատճառ դառնալ գիւղացիներու խեղճացման, գիւղերու դատարկման եւ ժողովուրդի օտարացման:


Սեփական ժողովուրդի ստրկացումն ու օտարումը Տղամարդկութիւնն է, այլ՝ Ոճրագործութիւն: Փառամոլ, եսասէր ու կարճատես մարդու անասնական մտածելակերպ է: Ի՞նչ իմաստակութեամբ նորօրեայ օլիգարխները կը դիմեն այսպիսի հայրենաքանդ քայլերու, տկարացնելով իրենց ոտքի տակի հողը եւ ապագայ սերունդներու գոյերթը: Աւելի զարմանալին Սփիւռքահայ այն մարդիկն են, որոնք ականատես ըլլալով հանդերձ Աղէտի Գօտի ժողովուրդի ծառայութեան համար կառուցուած հինգ միլիոնանոց պահեստին հարիւրյոթուն հազարով, սեփականաշնորհման, կը լուեն ու կը շարունակեն գործակցիլ այդ ոճրագործներուն հետ: Աւելի զարմանալին Սփիւռքահայ այն մարդիկն են, որոնք այդ ոճրագործներուն Սփիւռքեան օժանդակներ այցելութեան ընթացքին, գանոնք կը պատուեն հիւրասիրութեան սեղաններով, փոխան բողոքի ցոյցերու:

Այս այսպանելի ընթացքով, մենք պարզապէս հող կը պատրաստենք այն հերթական աղէտին, որ անպայմանօրէն պիտի գայ մեր ազգի գլխուն, ինչպէս որ եկան անցեալի աղէտները, որոնցմէ դասեր չքաղեցինք: Եւ այնքան ատեն, որ մենք պարզ գոյութիւն մը քարշ տալու՝ ուր հաց, հոն կաց մտածելակերպով կ'առաջնորդուինք ու հետամուտ չենք մեր կեանքերը վսեմ գաղափարներով իմաստաւորելու. այնքան ատեն որ չենք վարակուած իրաւ հայրենասիրական գաղափարներով, այնքան ատեն որ չենք գիտակցիր հաւաքական գործակցութեամբ անարդարութեան եւ անօրինակաւորութեան դէմ պայքարի անհրաժեշտութեան, այնքան ատեն որ կը հանդուրժենք տանիլ օլիգարխներու

հայրենաքանդ լուծը ու ամէն մէկ օլիգարխի դիմաց հազարաւորներու բողոքի բանակով չենք ծառանար, մենք կը մնանք դատապարտուած մեր պատմութեան մէջ դժբախտութեան նոր էջ մը արձանագրելու:

Վեհ գաղափարներէ գուրկ օլիգարխներու համար, անտառի օրէնքն է գերակայ: Անոնց սահմանափակ մտածելակերպով, բիրտ ուժն ու նիւթն են խնդիրներու բանալին: Երբ անոնք ժամանակաւորապէս կը յաջողին կեղեքել ժողովուրդը եւ իրենց կամքը պարտադրել անոնց վրայ, կը կարծեն թէ ինչպէս անձնական, նոյնպէս ազգային խնդիրներ կարելի է նիւթականով լուծել: Իմաստակ եւ յիմար մարդու մտածելակերպ է այդ: Վկայ մեր պատմութիւնն ու ազգային գոյերթը, որ պիտի չի յարատեւեր առանց վեհ գաղափարներով տոգորուած գիտակից առաջնորդներու: Վկայ Կարսի այսպանելի եւ ամօթալի խայտառակութիւնը, երբ հակառակ ռազմական դիրքի, մարդուժի եւ գինամթերքի առաւելութեանց, առանց փամփուշտ մը արձակելու, անառիկ բերդը յանձնեցինք թշնամիին: Ինչո՞ւ, որովհետեւ բանակն ու ժողովուրդը յուսալքուած էին ու պարպուած ազգասիրական գաղափարներէ: Ժեներալներու ներկայութիւնը չապահովեց Կարսը: Հերոս գնդապետ Մազմանեանի նմաններուն ու անոնց ոգիին պակասն էր, որ պատճառ դարձաւ Կարսի յանձնումին: Երբ ունիս գաղափարապաշտ ժողովուրդ, որ Մազմանեանի նման կը հաւատայ յանուն ազգի ու հայրենիքի իմացեալ մահով անմահանալու իրականութեան, ապա նիւթական վտիտ միջոցներով իսկ կարելի է հրաշքեր իրականացնել: Վկայ Մարդարապատն ու Արցախեան հերոսամարտը:

Անցած տարիներու իրադարձութիւնները Կարսի խայտառակութիւնը կը յուշեն: Որպէսզի չկրկնուի այդ խայտառակութիւնը, գաղափարապաշտ, խենթերու բանակը պէտք է ստուարանայ եւ Չարենցեան պատգամին անսալով՝ հաւաքական ուժ դառնայ: Միայն այդ պարագային, Պարոյր Սեւակի բնութագրութեամբ՝ ամէն մէկս մեր հոգու պարտքը տալով, պիտի գտնենք հնարը չընկնելու եւ չհանգելու, այլ՝ կանգուն մնալու, լինելու եւ շատանալու:



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԽԱՉԻԿ ԵՒ ԺԵՆԻԱ ՔԷՇԻՇԵԱՆ
ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏՈՆԵԼՈՎ ՄՏՔԻ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԻ ԻՍԿԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Անշեղ սկզբունքներով համակ-
լած, հեռատես, խիզախ եւ
յանձնառու լողուններով, հայ
ժողովուրդի արթուն պահակը՝
Ս.Գ.Հ.Կ.ը 2012-ին նշեց իր
հիմնադրութեան 125 Ամեակը:
Տարին ընթացաւ աննախադէպ
միջոցառումներով, թէ՛ հայրենի
հողին վրայ եւ թէ՛ Սփիւռքի
տարածքին եւ անկասկած բոլոր
ձեռնարկներն ալ լիովին ծառայեցին
իրենց հզօր նպատակին:



2012 Հոկտեմբերին, Արեւմտ-
եան Ամերիկայի մէջ ծրագրուած
եւ կայացած՝ Ս.Գ.Հ.Կ.ի 125 Ամեակին
նուիրուած գերազանց գիտաժողովը,
Հնչակեան գաղափարախօսութեան
125 տարիներու քարոզչութեան
բացայայտ գրաւականն ու
պատմական անհրաժեշտութիւնը
հանդիսացաւ, իր ծաւալուն-խօսուն
բեմով եւ կարող պատմաբաններու
պատմանիւթերով:

Ս.Գ.Հ.Կ.ի էութեան եւ
գոյութեան, ընկերային եւ
քաղաքական վերելքին, ազգօգուտ
գործունէութեան եւ փշոտ
ճանապարհի մասին՝ հայ միտքը
գարգացնող եւ լուսաբանող սոյն
նախաձեռնութիւնը՝ հին ուղեգիծ-
ներու վերահաստատման եւ նոր
խարխիսի մը ամրապնդման առողջ
մտայղացումն էր. Հնչակեան
կուսակցութեան գաղափարա-
բանութեան, նուիրումին, իրաւունք-
ներու ճանաչման եւ ընելիքի վսեմ
գիտակցութեան եւ ուղիին յստակ
ներկայացումով:

Իր ծնունդէն ի վեր, հայ
ժողովուրդի ապագայի բաղձանք-

ները մարմնացնող եւ անոր
ընկերային, քաղաքական եւ
սոստեսական ազատութիւն խոստա-
ցող Մայր կուսակցութիւնը, իր
գերագոյն պարտականութիւնը
նկատեց Հայ ժողովուրդի ապա-
հովութիւնը եւ ազատագրութիւնը
եւ ստեղծուեցաւ այդ սուրբ
նպատակին համար: Ան միշտ
գորավիզ կեցաւ հայ հոգիին, հայ
մշակոյթին, հայ բեմին, հայ մամուլ
եւ հայ եկեղեցիին, պայքարելով
անարդարութեան ու տգիտութեան
դէմ: Հնչակեան մամուլը, իր բոլոր
օրգաններով, եղաւ վսեմ մարդա-
սիրութեան շիճուկը, իր ջերմ
քարոզչութեամբ եւ գաղափարա-
խօսութեամբ եւ ամենուրէք լոյս
տեսաւ որպէս հայ ժողովուրդի
անկաշառ եւ աննահանջ մարմինն
ու միտքը:

Հնչակեան կուսակցութեան
հարուստ պատմութեան ամենա-
թանկագին ատաղձները եղան նաեւ
իր գաղափարականներու, հերոս-
ներու եւ հազարաւորներու
փաղանգը, որոնք եղան գալիք
գաղափարականներու եւ սերունդ-
ներու փառքն ու հմայքը, տեսիլք
ունենալով ծառայութիւնը եւ
գարգացումը հայ անհատին,
որպէսզի ան շարունակէ իր անշեղ
ուղին եւ պայքարի ու գոյատեւէ
թէ Սփիւռքի եւ թէ հայրենիքի
մէջ:

125 տարիներու պատմութիւն
մը անկարելի է մէկ օրուայ մէջ
ներկայացնել կամ համարել, բայց
անվիճելիօրէն կարելի է հաստատել
Հնչակեան գաղափարականին
անբեր եւ չքծնող հոգին եւ
Հնչակեան գաղափարախօսութեան
հզօր եւ մաքուր տեսլականները
հայ ազգի պատմութեան եւ
ազատագրական պայքարի ուղիին
վրայ:

Հայ ժողովուրդի պատմութեան

հրամայական պահանջներուն եւ
մարտահրաւէրներուն ընդառաջ, Ս.
Գ. Հ. Կ. գոյութեան անհրա-
ժեշտութիւնը՝ մեծ իրողութիւն մը
եւ կենսականութիւն մը եղած է
Սփիւռքի եւ Մայր հայրենիքի մէջ,
որ իր օրգաններով, մամուլով,
հրատարակչական ընդարձակ
գործունէութեամբ եւ քարոզ-
չութեամբ ուժեղ կամուրջ մը կը
հանդիսանայ Մայր հայրենիքի եւ
Սփիւռքի միջեւ:

125 տարիներու անխոնջ
գործունէութեան գիտակցութեան
խթանով եւ Սապահ Գիւլեանի
խօսքերով «...Ապրիլ ժողովուրդի
ցաւերով, ժողովուրդի հետ,
ժողովուրդի համար» մեր բաղձանքն
է որ այսօրուայ աշխատանքը ըլլայ
ապագայ պատմաբաններուն եւ
սերունդներուն նուիրական
կենսանիւթ մը, ի շահ Հայ
ժողովուրդին եւ անոր լուսաւոր
ապագային:

Բարի երթ եւ բեղուն
հազարամեակներ Ս.Գ.Հ.Կ-ին:

ՀԵՐԹԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ (ՏԱՐԵՄՈՒՏ)
ԼԵՐՄԵՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Դէ՛հ, ժամանակն է հերթափոխութեան
Վա՛ր դիր գէնքերդ
Ու պարպուիր քո սին երազանքներից,
Նրանք մաշուել են ժամանակի հետ...
Տուր ինչ որ ունես, յանձնիր գալիքին,
Փոխանցիր նրանք ողջ բաղձանքներից,
Իսկ ինք ապրիր, թաղուիր յուշերումդ...

ԺԸՆԵՒ ԵՒ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԴՐՈՒՄԸ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻ ԴՈԿՏ. ԱՐԷԼ ՔՅՆՅ. ՍԱՆՈՒԿԵԱՆ

1995 թուականի Հոկտեմբերին նոր ժամանած էի Շընեւ, ստանձնելու համար տեղւոյն հայ համայնքի հոգեւոր հովուութեան պաշտօնը, եւ այս առթիւ ժամադրութիւն մը ունէի գաղութի հեղինակաւոր ներկայացուցիչներէնսի ողբ. Կրօնիկ Փափագեանի հետ: Հանդիպումը պիտի կայանար Շընեւի համալսարանի հանդիպակաց փողոցին անկիւնը գտնուող Landolt սրճարանին մէջ, որ դեռ պահած էր իր ասանդակաւ հին ոճը եւ պատմական հնայքը: Զրոյցի ընթացքին, ի միջի այլոց, Պրն. Փափագեան ինձի տեղեկացուց, որ սրճարանը ուր կը գտնուէինք, աստեղին եղած էր համալսարանական յեղափոխական ուսանողութեան ամենասիրուած վայրերէն մէկը, ուր տեղ 1880-ական թուականներէն սկսեալ տողանցած են ուսահպատակ նարդիներ, սոցիալիստներ, մարքսիստներ, անարխիստներ, համայնավարներ, յանձին իրենց ականաւոր ներկայացուցիչներու փ Միխայիլ Բակունինի, Ալեքսանդր Հերցընի, Գեորգի Պլեխանովի, Վերա Զասուլիչի, Պետր Միխայիլովիչ Քորփոթքինի, Պաւել Աքսելոտի, Վլատիմիր Իլիչ Լենինի եւ ուրիշներու: Մեծ հաւանականութեամբ, շարունակեց գրուցակիցս, այս սրճարանին մէջ իրենց հանդիպումները ունեցած են նաեւ մեր անդրանիկ հայ յեղափոխականները՝ Հնչակեան Կուսակցութեան հիմնադիր անդամները:

Անշուշտ, այն տեղեկութիւնը հաստատելու համար մեզի կը պակսին գրաւոր համապատասխան վկայութիւններ. պատմուածք հին ժընեւցիներուն ծանօթ բերանացի աւանդութիւն մըն է, սակայն այդ չի նշանակեր թէ ճշմարիտ չէ. անգիր աւանդութիւններուն նման, ինչպէս եկեղեցիները, մեր ազգային զգացումներու բազմին վրայ այս մէկն ալ նոյնքան նուիրական է, որուն նկատմամբ միշտ զգացած են ջերմութիւն եւ ակնածանք, ամէն անգամ երբ հոն այցելած կամ անցած են այդ հիւրընկալ հաստատութեան առջեւէն:

Արդարեւ, մեր ժողովուրդի բազմադարեան պատմութեան հերոսական էջերէն մին հանդիսացող օՍմանեան բռնապետութեան դէմ ԺԸ. դարու երկրորդ կէսին ծաւալած հայ-ազգային ազատագրական շարժումի սկզբանաւորութենէն յիշատակելի հետք մը կապուած է այս սրճարանի սեղաններուն շուրջ, ասկէ բիշ մը անդին գտնուող համալսարանի յարաններուն եւ գրադարանի ընթերցարաններուն, ինչպէս նաեւ Շընեւի տարբեր փողոցներուն ու բնակարաններուն մէջ, ուր ապրած եւ գործած են Հնչակեան Կուսակցութեան հիմնադիր անդամները՝

Rue des Pitons 1*, Blvd. de la Cluse 17**, Rue de Carouge 68***, Chemin de Cygne 4(IV), Rue du Pont d'Arve 17(V), Blvd. des Philosophes 14-20(VI) եւ Plainpalais(VII).

Մեկնելով այն փաստէն, որ առկա յօդուածը նկատի առնուած է հրատարակուելու «Մասիս»-ի Նոր Տարուան բացառիկին մէջ, մեզի տրամադրուած էջերուն քանակը չչարաշահելու, նաեւ մեր ըսելիքները արտօնուածէն աւելի չերկարելու միտումով, պիտի աշխատիմ ուղղակի կեդրոնանալ փաստագրական այն միւթերուն վրայ, որոնք մեծաւ մասամբ պահպանուած են Զուիցերիոյ Համադաշնութեան Պետական արխիւներուն, շ Ազգային Գրադարանին, Շընեւի Պետական/չ ինչպէս նաեւ համալսարանի արխիւներուն մէջ. փաստօրէն վկայութիւններ, որոնք ուղղակի կը վերաբերին Հնչակեան Կուսակցութեան Շընեւի մէջ կազմաւորումին եւ անոր հիմնադիրներէն յատկապէս Աւետիս Նազարբէկեանին, Մարօ Վարդանեան Նազարբէկեանին, Գարրիէլ Կաֆեանցին եւ Ռուբէն Խան Ազատին:



Արխիւային վերոյիշեալ միւթերը հիմնականօրէն կը ներկայացնեն Զուիցերիոյ մէջ կեցութեան իրաւունք ստանալու վերաբերեալ տոմարային գրանցումներ, ոստիկանական տեղեկագրութիւններ, գաղտնի մամակներ, ամբաստանութիւններ, Հնչակեան Կուսակցութեան հիմնադիր անդամներու կողմէ պետութեան ուղղուած դիմումագրեր, համալսարանի ուսանողական արձանագրութիւններ, Շընեւի իշխանութիւններուն, ապա գուիցերիական կառավարութեան կողմէ քրեական ծանրակշիռ նկատուող մեղադրանքներու առթիւ տրուած վճիռներ, ժամանակի տեղական մամուլին մէջ լոյս տեսած յօդուածներ եւ տեղեկագրութիւններ, որոնք կու գան որոշակի լոյս սփռելու այդ

ժամանա-կաշրջանի, ինչպէս նաեւ Հնչակեան Կուսակցութեան հիմնադիր անդամներու անձին եւ գործին վրայ:

Այս առթիւ նախապէս պիտի ուզեմ ընդգծել, որ մեր այն ելոյթը չի հետապնդեր ընթացիկ բաղաբական նպատակ, այլ ունի սոսկ գիտա-հետազոտական կամ գիտա-ճանաչողական բնոյթ, առիթ տալով առաւել եւս ծանօթանալու մեր ազգի նուիրելիներուն, ազգային գոյապարարի համար իրենց կեանքը գոհաբերած երայտաւորներուն հետ:

Յեղափոխական Կազմակերպութեան 6 Հիմնադիրները

Յայտնի է բոլորին, որ Հնչակեան Կուսակցութիւնը հիմնուած է 1887 թուականի Օգոստոսին Շընեւի մէջի հոյլ մը կովկասահայ ուսանողներու կողմէ: Անոնց փառապանծ անունները պատմութիւնը մեզի կ'աւանդէ հետեւեալ հերթականութեամբ. Աւետիս Նազարբէկեան, Մարօ Վարդանեան-Նազարբէկեան, Ռուբէն Խան-Ազատ, Գարրիէլ Կաֆեանց, Քրիստոփոր Օհանեան եւ Գեորգ Ղարաջեան:

Այս վեց հիմնադիրներուն թու կ'աւելնայ նաեւ եօթներորդ անուն մընի Լեւոն Ստեփանեան որ, ճիշդ է, կուսակցութիւնը կազմուելու միջոցին վերոյիշեալ միւս վեցին հետ Շընեւի մէջ չէր, այլ Մոնպելիէ կը գտնուէր տեղւոյն գիւղատնտեսական դպրոցին մէջ իր աւարտական բնութիւնները յանձնելու պատճառով: Սակայն, այսուհանդերձ, Ռուբէն Խան-Ազատի հեղինակաւոր վկայութեամբ⁸, ան սկիզբէն համաձայն եղած էր յեղափոխական կազմակերպութիւն մը ստեղծելու գաղափարին հետ, ընդունած էր վերջինիս համար պատրաստուած Ծրագիրը եւ, իսկոյն, անդամակցած էր անոր:

Յեղափոխական կուսակցութեան կազմաւորման օրերուն համախոհներուն թիւը ամբողջացնելու միտումով, Գարրիէլ Կաֆեանցի նախաձեռնութեամբ⁹, 1887 թուականի ամառը, Մոնպելիէէն Շընեւ ժամանած համախոհ ուսանողներէնսի Քրիստոփոր Օհանեան եւ Գեորգ Ղարաջեան կը ստանեն հիմնադիրներու վերոյիշեալ խումբին մէջ, մինչդեռ Մատթէոս Շահագիզեան, Պողոս Աֆրիկեան եւ Շընեւի խումբէնսի Մկրտիչ Մանուշարեան, կուսակցութեան գաղափարախօսութեան շուրջ յատուցեցած տարիանաձայնութիւններու պատճառով հիմնադիրներու խումբէն կը բաժնուին¹⁰, հետեւաբար անոնց անունները դուրս կը մնան եօթ հիմնադիրներու վերոյիշեալ ցանկէն:

Նկատի ունենալով, որ Հնչակեան Կուսակցութեան պատմութեան նուիրուած եւ հիմնադիրներու անուններուն վերաբերող կարգ մը գիրքերու եւ յօդուածներու մէջ գոյութիւն ունին որոշակի անհամաձայնութիւններ, աւելորդ չենք սեպեր այստեղ անգամ մը եւս նշելու Հնչակեան եօթ հիմնադիրներուն փառապանծ անունները.

Աւետիս Նազարբէկեան, Մարօ Վարդանեան-Նազարբէկեան, Ռուբէն Խան-Ազատ, Գարրիէլ Կաֆեանց, Քրիստոփոր Օհանեան, Գեորգ Ղարաջեան եւ Լեւոն Ստեփանեան:



Հիմնադիրներուն Պատմական Խմբանկարը
Հնչակեան Կուսակցութեան հիմնադիր անդամներէն մեզի աւանդուած է

Շար-ը էջ 8

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԹԱԳԷՈՍ ԵՒ ՆՈՐԱ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ
ՇՆՈՐՀԱԴՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՄԱՍԻՍ - 2013

ԺՆՆԵՒ ԵՒ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԴՐՈՒՄԸ

Ճարտանկում էջ 7-էն

պատմական խմբակարգ մը, որ կը զարդարէ կուսակցական ակումբներու, մշակութային հաստատություններու, ինչն էլ չէ նաև շատ մը հայ օճախներու պատերը, իբրև ազգային խորհրդանշան մը փնտրելու քիչ քիչ գաղափարախօսության, հանդիսանալով միաժամանակ ոգեշնչումի աղբիւր մը փնտրելու մարտը հայրենասիրության և ազգային ծառայասիրության:

Շրջանի լուսանկարչական աշխատանքներն էլ մեկուն մէջ լուսանկարում այս խմբակարգը, մեծ համանակամտութեամբ, պատրաստում է անմահացնելու համար հայ յեղափոխական կազմակերպության ստեղծումին պատմական պահն ու աղիթը փնտրելու անդամներու լիակազմ խումբով:

Յեղափոխական կազմակերպության ստեղծումին քիչ յետոյ, Լեւոն Ստեփաննեան, որ ողջունած էր կուսակցության հիմնադրումը, 1887-ի ամառը, աւարտելով Մոնպելիէի գիւղատնտեսական դպրոցը, Շրջան կը վերադառնար միանալու հիմնադիրներու խումբին: Եւ ամենեւին անհամաձայնական չէ ըսել, որ այդ խմբակարգին մէջ կուսակցական եօթներորդ անդամը Լեւոն Ստեփաննեանն է 12:

Ընդհակառակը, Հնչակեան Կուսակցության սկզբնաւորման պատմութիւնը ներկայացնող կարգ մը գիրքերու և ուսումնասիրութիւններու 13 մէջ, նոյնիսկ ակնարկում խմբակարգին տակ, հիմնադիր անդամներու վերջը աւելցնում անուանացանկին մէջ, որպէս եօթներորդ հիմնադիր անդամ մերթ կը կարդանք Պօղոս Աֆրիկեանի և մերթ Մանուէլ Մանուէլեանի 14 անունները, որոնց ստուգության նկատմամբ պիտի ուզէինք ցոյց տալ որոշակի վերապահութիւն, մեկնելով ստորեւ ներկայացնում փաստերէն:

Արդէն վերը յիշեցինք, որ Աֆրիկեան մին էր Մոնպելիէէն եկած չորս ուսանողներէն, որոնցմէ երկուքը քիչ քիչ էր Մատթէոս Շահագիզեան, իսկ Շրջանի խումբին Մկրտիչ Մանուչարեան հայ յեղափոխական կազմակերպութիւնը ստեղծելու առաջին ժողովներու ընթացքին ստեղծուած անհամաձայնութիւններու պատճառով կը հեռանան հիմնադիրներու խումբէն:

Բաց աստի, այս շրջանի պատմության ամենավաւերական աղբիւրները կը հանդիսանան Հնչակեան Կուսակցության հիմնադիր անդամներէն Մարո Նազարբէկեանի և Ռուբէն Խան-Ազատի յուշագրութիւնները: Մարո Նազարբէկեան իր յուշերը 15 գրած է 1918 թուականին Թիֆլիսի մէջ, որոնք կը բաղկանան ուսերէն լեզուով շարադրում 17 մեքենագիր էջերէ, իսկ երկրորդը Ռուբէն Խան-Ազատի յուշագրութիւնն է, որ շատ աւելի ստուար և շահեկան տեղեկագրութիւն մըն է Հնչակեան Կուսակցության կազմաւորման պատմության մասին: Սոյնը տպագրուած է «Հայրենիք» ամսագրի էջերուն մէջ, 1927-1929 թուականներուն, և կը կրէ «Հայ Յեղափոխականի Յուշերից» խորագիրը:

Անդրադառնալով Հնչակեան Կուսակցության սկզբնական շրջանի պատմության, նշում արեւելու հեղինակաւոր աղբիւրները հիմնադիրներու խումբին հետ Մանուէլ Մանուէլեանի 16 մը կապը և ընդհանրապէս անոր գոյութիւնը բացարձակապէս չեն յիշեր: Ընդհակառակը, Ռուբէն Խան-Ազատ որոշապէս կը վկայէ, որ հիմնադիրներու խումբին եօթներորդ անդամը Լեւոն Ստեփաննեանն էր, որ «Դեռ Հնչակը լոյս չտեսած, նա աւարտեց իր ուսումը և եկաւ Շրջան մեզ հետ տեսնուելու»: Յեղափոխական կազմակերպութիւնը հիմնուեցաւ, ինչպէս նշեցինք, Օգոստոս 1887ին, իսկ «Հնչակ»-ի առաջին թիւը լոյս տեսաւ նոյն տարւոյն Նոյեմբեր ամսուան սկիզբը:

Այսպէս, ուրեմն, կը ճշդուի նաև խնդրոյ առարկայ հիմնադիրներու այդ պատմական խմբակարգի ստեղծումին մօտաւոր թուականը, որ պէտք է միանգամայն համապատասխանէ 1887-ի Օգոստոսէն Նոյեմբեր ամիսներու միջև եղած ժամանակամիջոցին:

Ի դէպ, այստեղ պէտք է անդրադառնալ, որ «Հնչակ»-ի հրատարակության նախօրեակին յանձնախումբին կողմէ նախընտրութիւնը երբ կ'երթայ Աւետիս Նազարբէկեանի գրած խմբագրականին և Գեորգ Դարաջեանի յօդուածը կը մերժուի, վերջինս խիստ կը վիրաւորուի և ընդմիջու կը հեռանայ կուսակցութենէն: Աւելի ուշ, հիմնադիրներու խումբին կը բաժնուի նաև Քրիստափոր Օհանեանը, որ մինչև 1898 թուականը, այսինքնի համալսարանէն իբրև բժիշկ վկայուիլը, ամբողջապէս կը նուիրուի իր ուսման:

Այս ընթացքին, Շրջանի Համալսարան ժամանած էին Կովկասէն նոր ուսանողներ: Անոնցմէ երկուքը քիչ քիչ Ալեքսանդր Աթաբէկեան և Մարգիս Աղամիրզեան կը ներգրաւուին՝ կուսակցության փոքրաթիւ խումբին մէջ, և այսպիսով կ'ամբողջացնեն այն պակասը, որ ստեղծուած էր Գեորգ Դարաջեանի և Քրիստափոր Օհանեանի ինքնակամ հեռացումով:

Աւետիս Նազարբէկեան և Մարո Վարդանեան Շրջանի Մէջ
Մարո Նազարբէկեան իր յուշերուն մէջ կը հարորդէ, որ ինք Պետերբուրգէն հեռանալով Փարիզ կը ժամանէ 1886 թուականին, ապա կը տեղափոխուի Շրջան:

համալսարանի մէջ ուսանելու նպատակով: Ռուբէն Խան-Ազատ այս տեղեկութիւնը իր յուշագրութեան մէջ կը հաստատէ վկայելով, որ «Յեղափոխականօրէն մտածողների համագումար հրաւիրելու գաղափարը արծարծուելու շրջանումն էր, որ Փարիզից Շրջան եկան 1886 թ. ամառը Աւետիս Նազարբէկեանն ու իր նշանածը՝ օր. Մարիամ Վարդանեանը»: Խան-Ազատ շարունակելով կը տեղեկացնէ նաև, որ «Սիրահարուած գոյգը եկել էր Շրջանի Շուէյցարիայում, ամառուան ամիսներին, մի պտոյտ կատարելու նպատակով»: Փաստօրէն, նշանուած գոյգին Շրջան գալը պարզապէս կը հետապնդէր ամառնային արձակուրդ մը անցընելու նպատակ: Սակայն Շրջանի մէջ հայ երիտասարդ ուսանողներ այնքան կ'ոգնէր որոյն Աւետիս Նազարբէկեանի և Մարո Վարդանեանի ներկայութենէն, որ կը տարիանալէն զիրենք հրաժարիլ Փարիզ վերադառնալ և, ընդհակառակը, Շրջան հաստատուիլ, քանի որ այդ տարի Շրջանի Համալսարանն ալ հասարակական գիտութիւններու նոր ամպիոն մը կը հիմնէր, գիտական նիւթ մը քիչ քիչ որով հետաքրքրուած էր խօսեցնելու գոյգը:

Շրջանի Համալսարանի արխիւներուն և տարեգիրքերուն մէջ, 1886 թուականէն սկսեալ մինչև 1891 թուականն ու հետեւեալ տարիները, պաշտօնապէս արձանագրուած ուսանողներու, ինչպէս նաև համալսարանն աւարտած վկայուողներու անուններուն մէջ, առ այժմ, անկարելի եղաւ գտնել Աւետիս Նազարբէկեանի և Մարո Վարդանեանի անունները: Սակայն, Անահիտ Տէր

Մինասեան կը վկայէ, որ Հնչակեան Կուսակցության հիմնադիր այս երկու անդամներուն անունները յիշատակում են 1888-1889 ուսումնական տարեշրջանի ազատ ունկընդիրներու ցանկին մէջ, Մարո Վարդանեանի գրականութեան, իսկ Աւետիս Նազարբէկեան՝ իրաւագիտութեան ճիւղերու հետեւողներ: Այս և այլ վկայութիւններէ մեկնելով, առ այժմ, պիտի ուզենք այսքանը եզրակացնել, որ Նազարբէկեան և Վարդանեան գոյգը, Շրջան իրենց կեցութեան ընթացքին, համալսարանի գրականութեան, իրաւագիտութեան և հասարակական գիտութիւններու ամպիոններուն մէջ եղած են ազատ ունկընդիրներ և, ի վերջոյ, յեղափոխական գործը և յատկապէս «Հնչակ»ի հրատարակության պատասխանատուութիւնը, որ ամբողջապէս ծանրացած էր իրենց ուսերուն վրայ, ընդհանրապէս ժամանակ չէր ձգած որ անոնք կարենային իբրև պաշտօնական ուսանողներ իրենց ուսման աւարտելի վկայուելով համալսարանէն:

Շրջանի պետական արխիւներուն մէջ Աւետիս Նազարբէկեանի և Մարո Վարդանեանի մասին գրաւոր ամենահին վկայութիւնը 31 Մարտ 1888 թուականէն է:

Ճար.ը էջ 9

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԳԷՈՐԳ ԵՒ ԼՈՒՍԻՆ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՄԱՍԻՍ - 2013

ԺՆՆԵՒ ԵՒ ՅՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԴՐՈՒՄԸ

Շարունակում է կ-է


Սոյնը, իբրև արտասահմանյան քաղաքացի, կնցութեան իրաւունք ստանալու առթիւ կատարուած գրանցում մըն է, որ կը գտնուի Etrangers Dj3 տոմարի, 245-րդ էջին մէջ:

Թիւ 435,
Ազգանուն՝ Նազարբէկեան,
Անուն՝ Աւետիս,
Մասնագիտութիւն՝ ուսանող,
Ծննդեան թուական՝ 24 տարեկան,
Ծագում հայ, (պարսիկ),
Ներկայացուած փաստաթուղթեր՝ անցագիր,
Կնցութեան վայր (ինսպի հասցէ)՝ Ch. des Pitons 1.

Սոյն արձանագրութեան հետևող յաջորդ տողին մէջ կը կարդանք Մարօ Վարդանեանի Ժննուի մէջ կնցութեան իրաւունք ստանալու առթիւ հետևեալ տեղեկութիւնը.

Թիւ 436,
Ազգանուն՝ Վարդանօֆֆ,
Անուն՝ Մարի,
Մասնագիտութիւն՝ ուսանողուհի,
Ծննդեան թուականի 1862,
Ծագում՝ ռուս,
Ներկայացուած փաստաթուղթեր՝ տնտրակ անցագիր,
Կնցութեան վայր (ինսպի հասցէ)՝ Ch. des Pitons 1:

Վերը արդէն յիշեցինք Ռուբէն Կաստի վկայութիւնը այն մասին, որ «Աւետիս Նազարբէկեանն ու իր նշանածը զ. Մարիան Վարդանեանը», երբ 1886-ի ամառը Փարիզէն Ժննու կը ժամանեն՝ ամուսնացած չէին, բայց հետագային անոնք ամուսնացան եւ, այս առթիւ, Մարօ Վարդանեան կ'ընդունի նաեւ Նազարբէկեան մականունը: Այս առնչութեամբ, 19 Ապրիլ 1888 թուականի Journal de Genève թերթը իր օրուան ամուսնութեան վերաբերեալ յայտարարութիւններուն մէջ, ի թիւս այլ նորաստեղծներու, կը յիշէ նաեւ Աւետիս Նազարբէկեան եւ Մարի Վարդանօֆֆ անունները, որոնց բով կ'աւելցնէ թէ անոնց ծագումը «ռուս» կամ ռուսական է: Բնական է, ծագումին մասին այս մանրամասնութիւնը կը հիմնուի միշտ իրենց ունեցած անցագրին վրայ, որ ռուսական էր: Անցեալին, ինչպէս նաեւ այսօր, կարգը նոյնն է, որ նկատի չ'առնել անձի մը ազգային ծագումը, այլ լոկ քաղաքացիութիւնը:



Journal de Genève թերթին սոյն յայտարարութիւնը բարեբաւար կ'ստանաւ մը հանդիսացաւ դիմելու համար քաղաքա-պետարանին արխիւները, ուր արդարեւ 1888 թուականի ամուսնութեան տոմարի, 175-րդ էջին մէջ գտանք հետևեալ արձանագրութիւնը.

«Չորեքշաբթի, 18 Ապրիլ 1888 թուականին, Ժննու քաղաքի շրջանի» քաղաքացիական կարգավիճակի գրասենեակի ներքոյ ստորագրեալ պաշտօնակցին առջեւ, միջնորդութեամբ Պլենայալէի քաղաքա-պետութեան պատուիրակութեան, սոյն թուականի 17-ին, ամուսնական հասնաձայն-անցիր կատարելու ներկայացան.

Առաջին՝ Աւետիս Նազարբէկեան, ուսանող, Ծագումով՝ ռուս, Բնակութեան վայր՝ Plainpalais, Chemin des Pitons թիւ 1, Ծնած է՝ Թարիզ, փակագիծերու մէջի Պարսկաստան, 3 Յունուար 1864-ին,

Որդին է որբացեալ Վարդան Նազարբէկեանի եւ Միննա Նազարբէկեանի, այրի, առանց մասնագիտութեան, բնակութեան վայր՝ Թիֆլիս, փակագիծերու մէջի Կովկաս:

Եւ Երկրորդ՝ Մարի Վարդանօֆֆ, ուսանողուհի, Ծագումով ռուս, Բնակութեան վայր՝ Plainpalais, Chemin des Pitons թիւ 1, Ծնած է՝ Թիֆլիս, փակագիծերու մէջի Կովկաս, 29 Մարտ 1862-ին, Դուստրը՝ որբացեալ Ժան Վարդանօֆֆի եւ Սալուէ: Վարդանօֆֆի, առանց մասնագիտութեան, բնակութեան վայր՝ Թիֆլիս, փակագիծերու մէջ՝ Կովկաս»:

Ամուսնութեան սոյն վկայականը, բնական է, քաղաքապետութեան համա-պատասխան պաշտօնակցին քաղաքացի, ստորագրած են նորաստեղծ զոյգը ի Աւետիս

Նազարբէկեանը եւ Մարօ Նազարբէկեանը, ինչպէս նաեւ քաղաքացիական ամուսնութեան համար օրէնքով պահանջուած երկու վկաները, որոնցմէ մին Քրիստափոր Օհանեան ցն է, Հնչակեան Կուսակցութեան հիմնադիր անդամներէն, իսկ միւսը ի Էօթէն (Եւզէնի) Վազաձէն, որուն մասին պիտի անդրադառնանք աւելի ուշ:

Այսպէս, սոյն տեղեկութիւնները կու գան ամբողջացնելու Աւետիս եւ Մարօ Նազարբէկեաններու կենսագրական ցարդ մեզի ծանօթ տուեալները, որոնց ամփոփոյթն աւելորդ չ'ենք սեպեր ներկայացնել ստորեւ.

Աւետիս Նազարբէկեան ծնած է Թարիզ, 3 Յունուար 1864 թուականին: Ան որդին էր որբացեալ Վարդան եւ Միննա Նազարբէկեաններու: Նորը մահուանէ ետք, որ հաւանաբար պատահած է Աւետիս Նազարբէկեանի վաղ պատանեկութեան շրջանին, մայրը իր գաւակին հետ տեղափոխուած է Թիֆլիս, բանի սօրերը Մելիքազարեանէ, ըլլալով Թիֆլիսի հարուստ գործարարներէն մին, ստանձնած էր իր բրոջ եւ գաւակին խնամքը: Այս ընտիր անձնատրուիւնն էր, որ ընդունած էր միաժամանակ հոգալու Աւետիս Նազարբէկեանի ուսման եւ կնցութեան ծախսերը ի Երոսպ կնցութեան ընթացքին:

Մարօ Նազարբէկեան, աղջկական մականունով Վարդանօֆֆ, ծնած է Թիֆլիս, 29 Մարտ 1862 թուականին, դուստրն էր Ժան (Յովհաննէս) եւ Սողոմ Վարդանօֆֆներու: Աւարտելով տեղւոյն իգական ստաշին գիմնազիան եւ, տարի մը Թիֆլիս ուսուցչութիւն ընելէ ետք, ան կը մեկնի Պետերբուրգ, եւ կ'ընդունի Բեստուժեան իգական բարձրագոյն դասընթացներու կենսաբանութեան բաժինը: Գրիգոր Արծրունի, իր հրատարակած «Մշակ» թերթին մէջ քաջալերական յօդուած մը կը ստորագրէ Մարօ Վարդանօֆֆի մասին, բանի որ այդ ժամանակ հասարակութեան մէջ ընդունուած բարբերէն չ'էր երիտասարդ օրիորդի մը ուսանելու նպատակով հեռանալը իր ընտանիքէն: Այնպէս կը թուի, որ Մարոյի Պետերբուրգ մեկնելու որոշումը, այդ ժամանակ, բաւական աղմուկ բարձրացուցած էր Թիֆլիսի հայահոծ միջավայրին մէջ:

Հասնելով Պետերբուրգ, երիտասարդ ուսանողուհին շուտով կը ներգրաւուի յեղափոխական շրջանակներու մէջ, գործօն մասնակցութիւն կ'ունենայ նարդոնվոյցիներու» հանդիպումներուն, որուն հետեւանքով կը հետապնդուի ցարական ոստիկանութեան կողմէ, սակայն բարեբախտաբար, լսելով Բեստուժեան դասընթացներու տնօրէնուհիին՝ Ելենա Ստասովայի խորհուրդը, Պետերբուրգէն կը հեռանայ ու կը հաստատուի Փարիզ:

Ի դէպ, անդրադառնալով Հնչակեան Կուսակցութեան այս գոյգ հիմնադիրներու իրական անուններուն, մէկդի թողնելով գրական եւ բոլոր այն կեղծ անունները որոնք զանազան յօդուածներու եւ խմբագրականներու տակ ստորագրուած են մասնատրուայէ Աւետիս Նազարբէկեանի կողմէ, փաստաթուղթերու եւ պաշտօնական գրանցումներու մէջ կը հանդիպինք Նազարբէկեան եւ Նազարբէկեան տարբերակներուն, իսկ Մարոյի մօտ՝ Վարդանօֆֆ, Վարդանեան եւ, ամուսնանալէ ետք, Նազարբէկեան կամ պարզապէս Նազարբէկ անուններու կիրարկութեան:

Նորէն, կնցութեան իրաւունք ստանալու առթիւ, Ժննուի արխիւները մեզի կը



Շար.ք էջ 10



ՄԱՍԻՍ - 2013

ԺԸՆԵՒ ԵՒ ՅՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԴՐՈՒՄԸ

Շարունակում էք 9-էն

ներկայացնեն եւս ուրիշ գրանցումներ՝ 27 Մայիս 1889-էն, ուր 553 թիւին թով կը կարդանք հետեւեալները.

Ազգանուն՝ Նազարբէկեան-Վարդանօֆֆ, Անուն՝ Աւետիս,

Մասնագիտութիւնի ուսանող,

Ծնած է՝ 3 Յունուար 1864-ին,

Ծագում՝ ռուս»,

Ներկայացուած փաստաթուղթեր՝ ամուսնութեան (վկայական),

Կնցութեան վայր՝ Chemin des Pitons թիւ 1 եւ Route de la Cluse թիւ 17:

Այստեղ, կնցութեան երկու հասցէներ գրանցուած են, որ ենթադրել կու տայ թէ Նազարբէկեան ամուսն ղեւտ եւս Chemin des Pitons թիւ 1 հասցէն կ'ապրէր, բայց կը նախապատրաստուէր շուտով տեղափոխուելու ընդամենը բանի մը թաղ ներքեւ գտնուող Route de la Cluse թիւ 17 շէնքի բնակարանը:

Նոյն տարւոյն՝ 1889 թուականի Օգոստոս 24-ին, արտասահմանեան քաղաքացիներու կնցութեան իրաւունք ստանալու D j թիւ 3 տուարին մէջ կը գտնենք գրանցում մը եւս, ուր Նազարբէկեաններու մասին կը կարդանք հետեւեալը.

Թիւ 27662,

Ազգանուն՝ Նազարբէկեան,

Անուն՝ Աւետիս,

Մասնագիտութիւն՝ ուսանող,

Ծննդեան թուական՝ 1864,

Ծագում՝ պարսիկ,

Ներկայացուած փաստաթուղթեր՝ Փարիզ 17. 8. 1889 եւ եկեղեցական ամուսնութեան վկայական, կնցութեան վայրի Rt. de la Cluse 17.

Նոյն տողին մէջ, անմիջապէս Նազարբէկեան եւ Աւետիս ամուսններուն տակ նշուած են Վարդանեան եւ Մարիան ամուսնները, որով ձեւով մը կը վկայուի անոնց ամուսիններ ըլլալու փաստը:

Ի տարբերութիւն նախորդներուն, սոյն արձանագրութեան մէջ նկատելի են Avetice եւ Marianne անուններու գրութեան ձևերուն փոփոխութիւնը, նաեւ այստեղ առաջին անգամ է որ Wartanoff-ի փոխարէն, Մարոյի ազգանունը նշուած է Vartanian տարբերակով: Գրանցումներուն մէջ եղած այս տարբերութիւնները թերեւս պէտք է վերագրել գուցէ ինքնին պաշտօնեայի անուշադրութեան կամ ամուսնե ըն ուղղակի գրանցուած են այնպէս, ինչպէս որ դիմումագրերը լրացուած են ենթակաւորներուն կողմէ:

Սակայն մեզի համար այստեղ մասնաւոր կարեւորութիւն կը ներկայացնէ լրացուցիչ ուրիշ տեղեկութիւն մը, կրօնական կամ եկեղեցական փաստաթուղթի մը յիշատակութեան պարագան, փաստօրէն՝ պատկի վկայականի մը ներկայացումը, գոր Աւետիս Նազարբէկեան բերած է Փարիզէն: Այսպէս, կը պարզուի որ Շրնեւի մէջ քաղաքացիական ամուսնութիւն կատարելէ ետք, որ տեղի ունեցած էր 18 Ապրիլ 1888-ին, երիտասարդ ամուսն Փարիզ մեկնած է, եւ 1889-ի Օգոստոսին օրհնել տուած է իր ամուսնական միութիւնը:

Ինչպէս յայտնի է, Շրնեւի մէջ այդ ժամանակ գոյութիւն չունէր կազմակերպուած հայ համայնք մը, չկար հայ հոգեւորականի որուն կարենար դիմել Նազարբէկեան ամուսն, հետեւաբար անոնք ստիպուած եղած են մեկնելու Փարիզ, Ս. Պատկի եկեղեցական արարողութիւն կատարելու համար»:

Շարունակելով մեր հետազոտութիւնները Աւետիս եւ Մարօ Նազարբէկեաններու մասին, Զուիցերիոյ վերոյիշեալ արխիւներուն մէջ պահպանուած բազմաթիւ վկայութիւններու, նամակներու, ամբաստանութիւններու եւ ոստիկանական տեղեկագրութիւններու շարքին, որոնց հասանուագը անկարելի պիտի ըլլայ այս յօդուածով ներկայացնել, կարեւոր կը սեպենք անդրադառնալ նամակի» մը, որ յղած է 20 Մայիս 1890 թուականին Շրնեւի կառավարութեան արդարադատութեան եւ ոստիկանութեան գրասենեակի տնօրէնը Դեռնի Զուիցերիոյ Համադաշնութեան ընդհանուր կառավարիչին: Սոյն նամակի բովանդակութեան կարելի է եզրակացնել, որ Պեռնի կառավարական կեդրոնէն նախապէս Շրնեւի դիմած են տեղեկութիւն ստանալու համար Աւետիս Նազարբէկեանի մասին: Այս առթիւ Շրնեւի կառավարութեանէն կը տեղեկագրեն, որ Աւետիս Նազարբէկեան հանդիպումներ կ'ունենայ ռուս փախստականներու (իմա՝ յեղափոխականներու) հետ, անգործօն (militants) անդամներէն մին է տնտրիստներու (իմա՝ յեղափոխականներու) կուսակցութեան, եւ ներկայ գտնուած է Մայիս 1-ի միջազգային հաւաքին Ֆրոյիսան արձարանին մէջ, ուր տեղ ան ձառով մը ելոյթ ունեցած է ռուս ուսանողներուն անունով: Նազարբէկեան որոշ ժամանակ իր մօտ պահած է Կաֆեանցը, որ հետագուած էր Զուիցերիոյ տարածքէն: Սոյն տեղակագրութիւնը կը հաղորդէ նաեւ այն մասին, որ Նազարբէկեան կը ստանայ ծաւալուն նամակագրութիւն

մը, եւ իր մօտ կը գումարուին ռուս ուսանողներուն ժողովները, եւ թէ այս հաւաքները միշտ երեկոյեան կը կայանան, ու կը տեսնեն սկսեալ ժամը մեկէնսի մինչեւ գիշերուան ուշ ժամերը:

4 Յուլիս 1891 թուագրութեամբ այլ նամակ» մը, որ Պեռնէն ուղղուած է Շրնեւի կառավարութեան, կը հարցնէ՞ ինչ եթէ երբեք Աւետիս Նազարբէկեանի գործունէութեան մէջ որեւէ նորութիւն դիտարկուած է: Շրնեւի կառավարութեան արդարադատութեան եւ ոստիկանութեան տնօրէնին կողմէ 6 Օգոստոս 1891-ին ստորագրուած նամակ մը կը փութայ Պեռն տեղեկագրելու, որ Աւետիս Նազարբէկեանի գործունէութեան մէջ ուշագրաւ նորութիւններ նշմարելի չեն, բայց ան դեռ կը շարունակէ իր բնակարանն ընդունիլ բազմաթիւ ռուս տնտրիստներ (իմա՝ յեղափոխականներ):

Աւետիս Նազարբէկեան կարճ շրջան մը իր ընտանիքին հետ Blvd. de la Cluse թիւ 17 բնակարանէն կը տեղափոխուի Rue de Carouge թիւ 68 շէնքի 2րդ յարկի բնակարանը, ուր կը մնայ մինչեւ 1891 թուականի վերջը:

Ինչպէս վերը նշեցինք, առկա յօդուածի սահմանափակ էջերուն մէջ բնականաբար անկարելի պիտի ըլլայ ներկայացնել Հնչակեան Կուսակցութեան եւ անոր հիմնադիր անդամներուն վերաբերող Զուիցերիոյ արխիւային նիւթերուն ամբողջութիւնը: Այս լայն անդրադարձը պիտի ներկայացուի մօտ ապագային մեր կողմէ հրատարակութեան պատրաստուող առանձին հատորով մը: Բայց որպէսզի Աւետիս Նազարբէկեանին վերաբերող վերոյիշեալ նամակին մէջ ակնարկուած Գարրիէլ Կաֆեանցի Զուիցերիոյ տարածքէն արտաքսուելու տեղեկութիւնը թանձր մշուշի մը մէջ չմնայ, պիտի ուզէինք խնդրին հասանօտակի անդրադառնալ, յայտնելով, որ Կաֆեանցի դէմ նախ Շրնեւի, ապա Զուիցերիոյ կառավարութիւնը ծանրակշիռ որոշումներ ընդունած են 21 Ապրիլ 1887-ին, զինք արտաքսելով առաջ Շրնեւ քանթօնի, ապա 7 Մայիս 1889-ին, ընդհանրապէս Զուիցերիոյ տարածքէն:

Գարրիէլ Կաֆեանց Զուիցերիոյ մէջ «Persona Non Grata?»

Գարրիէլ Կաֆեանց կը հանդիսանայ Հնչակեան Կուսակցութեան հիմնադիրներու խումբի կարկառուն ներկացացուցիչ-ներէն մին: Դժբախտաբար իր մասին մեզի աւանդուած կենսագրական տեղեկութիւնները շատ ժլատ են: Զուիցերիա գալու եւ կնցութեան իրաւունք ստանալու առթիւ հնագոյն արձանագրութիւնները 1887, 1888 եւ 1890 թուականներէն են: 1887 եւ 1890 թուականներու գրանցումները արտասահ-մանեան քաղաքացիներուն վերաբերող «J» տոմարին մէջ եղած նշումներն են, ափսո՛ս, ոչ այնքան տեղեկութիւն հաղորդող, ինչպէս որ իր կարգին ծանօթացանք Նազարբէկեաններու պարագային: 1888 թուականինը Գարրիէլ Կաֆեանցի Ցիւրիխի համալսարանի փիլիսոփայութեան ֆակուլտետի ուսանող ըլլալու պաշտօնական թիւ 8274 արձանագրութիւնն է, որմէ կը տեղեկանանք որ ան ծնած է 1864 թուականին Շուշի 33: Հայրը Շուշիի մէջ եղած է վաճառական, բայց անուան միայն սկզբնատառերը Կ. Կ. [աֆեանց] նշուած են: Համալսարանի ուսանողական այդ արձանագրութեան վերջաւորութեան միաժամանակ կը կարդանք կարեւոր յղում մը, որ Կաֆեանց ստիպուած եղած է Ցիւրիխի համալսարանի ուսումնական աստիճանին տարե-շրջանը» ընդհատելու, Զուիցերիոյ պետութեան երկրէն հեռացնելու վերաբերեալ իր դէմ առած վճիռին» հետեւանքով: Նոյն արձանագրութեան վերջաւորութեան յաւելեալ ուրիշ տեղեկութիւն մըն ալ կու գայ յայտնելու, որ ան 24 ժամուայ կալանաւորման» ենթարկուած է փ Զուիցերիոյ տարածքէն արտաքսուելու վճիռը շարժելու» եւ այս ուղղութեամբ երկրին օրէնքը խախտելու պատճառով:



Շողովրդական առաջը կ'ըսէ. «Բախտաւոր մարդիկ ճիշդ ժամանակին եւ ճիշդ տեղը»։ Ըստ երեւոյթին, գոյութիւն ունի նաեւ ուղղակի հակառակը. «Անբախտ մարդը՝ վատ ժամանակին եւ սխալ տեղը»։ Սոյնը եղած է Կաֆեանցի դառն ճակատագիրը:

Առաջինը՝ 1 Ապրիլ 1887-ին, Շրնեւի կեդրոնական պողոտաներէն մեկուն մէջ գտնուող Rue de la Corraterie թիւ 12. ակնցաւաճառի մը խանութը Կաֆեանց վիճաբանութիւն մը ունեցած է եւ, ըստ երեւոյթին, չկարողանալով իր հայկական տաքարիւնութիւնն ալ գսպել, անոր դէմ ֆիզիքական ուժ (իմա՞ փ հոնշտուք) գործադրած, եւ միաժամանակ անոր դէմ մահուան սպառնալիք ըրած է: Խանութին տէրը իր գործընկերոջ կամ իր մօտ աշխատող պաշտօնեային հետ գրաւոր բողոք ներկայացուցած է Շրնեւի առեւտուրի

Շար.ք էջ 11

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ԼՈՒՍԻՆ ՊՈՅԷՄԵԱՆ
ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՄԱՍԻՍ - 2013

ԺԸՆԵՒ ԵՒ ՅՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԴՐՈՒՄԸ

Շարունակում էք 10-էն

գրասենյակին, ուստի կանոններն են միաժամանակ խնդրելով իր անձին և գործակցին պաշտպանությունը: Դատա-քննության արդյունքը եղած է այն, որ ժընեի կառավարությունը իր տուած թիւ 3811, 21 Ապրիլ 1887 թուականի վճիռով, ժընեի բանթօնի տարածքէն արտաքսած» է Գարրիէլ Կաֆեանցը:

Չանագան փաստաթուղթեր ու նամակներ կու գան վկայելու այն մասին, որ Կաֆեանց այնքան ալ յարգած չէ տրուած որոշումը, և տարրեր տիրութեանը գտնուած է ժընե, ու ապաստանած է Նագարբէկեաններուն բնակարանը: Եղած է Մոնպելիէ նաև Յիւրիի 39, ուր արձանագրուած է իմաստասիրութեան ֆակուլտետի ուսանող: Այս մասին Յիւրիի համալսարանի արխիւներուն մէջ կրցանք հաստատել իր համալսարանի պաշտօնական արձանագրութիւնը: Յիւրիի ուսանելու միջոցին է որ Գարրիէլ Կաֆեանցին հետ կը պատահի ուրիշ դժբախտութիւն մը:

6 Մարտ 1889 թուականին, ոռու և լեռ երկու յեղափոխականների Jacques Brynstein և Alexandre Dembsky անուով, ոռու կը պատրաստեն և կը բազմեն գայն փորձարկել Յիւրիի սօտ Peterstobel կոչուած անտառին մէջ: Դժբախտաբար իրենց շինած այդ ոռուքը կը պայթի ուղղակի իրենց ձեռքերուն մէջ: մին տեղոյն վրայ կը մահանայ, իսկ միւսը ծանրօրէն վիրաւորուելով իսկոյն հիւանդանոց կը տեղափոխուի: Այս գոյժը լսելով, Գարրիէլ Կաֆեանց ոռու և լեռ ընկերներու հետ կը փութայ աղէտին վայրը: Իր հոն ներկայութիւնը Յիւրիի ուստի կանոններուն կողմէ կը գնահատուի իբրև մասնակցութիւն քրէական գործ ունեւորութեան: Պատահած այս դէպքը պատճառ կը հանդիսանայ պետութիւններու միջև բաղաբական որոշակի լարուածութիւններու: Ցարական Ռուսաստան, Կայսերական Գերմանիա և Աւստրիա, ծանրօրէն կը մեղադրեն գուիցերիական կառավարութիւնը, թէ Չուիցերիա դարձած է տարատեսակ յեղափոխականներու և սահաբնիկներու վտանգաւոր բոյն մը: Չուիցերիական կառավարութիւնը այս ուղղութեամբ ստիպուած կ'ըլլայ միջոցներ ձեռնարկելու, որուն ի հետեւանք, 7 Մայիս 1889 թուականի պաշտօնական վճիռով, Չուիցերիոյ տարածքէն կ'արտաքսէ 13 «տեղորիստներ» (իմասի յեղափոխականներ), որոնց շարքին 6-րդի Վնչակեան Կուսակցութեան հիմնադիր անդամներէն Գարրիէլ Կաֆեանցն էր:

Լոնտոն, 19 Նոյեմբեր 1892 և Աննեմասսա 40 (Annemasse), 22 Նոյեմբեր 1892 թուագրութեամբ, մեր տրամադրութեան տակ կը գտնուին երկու նամակներ, որոնց միջոցաւ Գարրիէլ Կաֆեանց կը դիմէ Չուիցերիոյ կառավարութեան, թէ ինք ստիպուած է իսկոյն հեռանալու Անգլիայէն, և կը ծրագրէ անպայման գալ և առաւելագոյնը երկու ամսուան համար ժընե մնալ, Փրօֆ. Յահո-ի կողմէ բժշկական խնամք ընդունելու նպատակով: Ան կը հաւաստիացնէ ստաչին նամակին մէջ, թէ ինք կը հրաժարի Չուիցերիոյ տարածքէն ներս գրադուելու բաղաբական գործունեւութեամբ:

Երկրորդ նամակը, որ ինչպէս նշեցինք, ընդամենը 3 օր ետք ստորագրելով Աննեմասսաէն յղած է Չուիցերիոյ կառավարութեան, կու գայ հաղորդելու, որ ինք արդէն Աննեմասսա կը գտնուի, բանի ստիպուած եղած է հասցնելու հեռանալու Անգլիայէն, ուստի փոխադրուելու ներքին պատասխան ստանալու համար տեղեկացնել իր յետադարձ հասցէն. արդ, հիմա ինք Աննեմասսա կը գտնուի, հետեւաբար Չուիցերիոյ կառավարութեան տակիք որոշումին համար կը խնդրէ նկատի ունենալ Աննեմասսի նամակատան հասցէն, ուրկէ ինք կը յուսայ ստանալ իր յղած նամակներուն պատասխանը:

Այս առնչութեամբ հետաքրքրական է տեղեկանալ, որ Huber անունով գուիցերիացի գաղտնի ուստիկան մը, 24 Նոյեմբեր 1892-ին, ժամը 10:30-ին, Աննեմասսի մէջ կը հետապնդէ Կաֆեանցը, և անոր մասին ժընե կը հաղորդէ հետեւեալ մանրամասնութիւնները.

Կաֆեանց Աննեմասսի նամակատուն կը ներկայանայ երեկոյեան ժամը 17:30ին, իր «մեթրեալին» ուղեկցութեամբ, որ կարճահասակ, կլորաուն, փոքրիկ բերանով և կոտ քիթով, մազերը ուսերուն վրայ արձակած աղջիկ մըն էր: Կաֆեանց նամակատան պաշտօնէնայէն կը ստանայ նամակ մը, որուն բովանդակութեան կը ծանօթանայ դժգոհութեամբ: Սանակատունէն դուրս գալով, անոնք Աննեմասսի մէջ տարրեր վայրեր վարձու բնակարան կը փնտռեն և, ի վերջոյ, ժամը 18:30-ին, Rue de la Gare-ի մէջ կը գտնեն նորակառոյց առանձնատուն մը, ուր կ'իջեւանին: Կաֆեանց ժամը 19:30-ին առանձին դուրս կ'ելլէ այդ առանձնատունէն և կ'երթայ խանութ մը, նամակի թուղթ և մոմ կը գնէ, ապա կը վերադառնայ իր «մեթրեալ»-ին բով:

Իր դիտարկումներու վերջադրութեան յիշեալ գաղտնի ուստիկանը կը նշէ, որ Կաֆեանց անցնելով Չորեքշաբթի ժընե մեկնած է, ու Molar՝ կոչուած հրապարակէն հանրակարք վերցնելով Աննեմասս վերադարձած է ժամը 20:00-ին:

Սանակը, որուն մասին իր տեղակազրութեան մէջ կ'ակնարկէ այդ ուստիկանը, և որուն բովանդակութեան Կաֆեանց դժգոհութեամբ ծանօթացած էր,

հաւանաբար Չուիցերիոյ կառավարութեան ժխտական պատասխանն էր, որով իրեն կրկին անգամ կը մերժուէր Չուիցերիա մուտքը և օրէնքը խախտելու պարագային կ'ի որ ուշադրութեան կը յանձնուէր ենթարկուելու ծանր պատիժի:

Այստեղ Գարրիէլ Կաֆեանցի կեանքէն ու գործունեւութենէն կարելի էր ուրիշ միջադէպ մըն ալ պիտի ուզենք ներկայացնել, բանի տոյնը վերոյիշեալ նկարագրութիւններուն հետ կը ստեղծէ որոշակի աղերս մը:

Յիւրիի համալսարանէն ակամայ հեռանալով, Կաֆեանց կը մեկնի դէպի Գերմանիա, Լայպցիկ, տեղոյն համալսարաններուն մէջ ուսումը շարունակելու նպատակով: 1888-ի Ապրիլ-Մայիս ամիսներուն ան որոշապէս հոն կը գտնուի, բանի որ ուրիշ պատահար մը կու գայ այս մասին վկայելու: Տարօրինակ թող չթուի այն փաստը, որ Երոպայի տարրեր բաղաբներուն մէջ է՝ թուրք օսաննեան և թէ ցարական գործակալներ կը հետեւէին բոլոր այն կեղծումներուն, ուր կ'ազնուած էին յեղափոխական կողմեր, մասնաւորաբար համալսարանական երիտասարդ ուսանողական շրջանակներէն ներս: Յիւրիի դէպքերէն ետք, Կաֆեանց մին էր անոնցմէ, որուն ոռու գաղտնի ուստիկանութիւնը կը հետապնդէր ամէն բայլափոխին: Ուստիկանական տեղեկագրութիւններ, ինչպէս նաև տեղոյն մամուլին մէջ հրատարակուած յայտարարութիւններ կու գան տեղեկացնելու, որ Կաֆեանց ձեռքարկուած է Լայպցիկի մէջ, Ռուսաստան հասցէագրուած կ'ապրէր նամակատուն յանձնելուն պատճառով: Այդ ծրարը Գերմանիոյ մէջ ցարական Ռուսաստանի ներկայացուցչութեան կողմէ որակուած է իբրև արգիլուած յեղափոխական գրականութիւն: Սկստի ունենալով որ Կաֆեանց եղած է Ռուսաստանի բաղաբացի, ուսական դեսպանութիւնը Գերմանիոյ կառավարութենէն պահանջած է որ զինք յանձնէն Ռուսաստանի իշխանութիւններուն: Սոյն հարցը Գերմանիոյ և Ռուսաստանի միջև դիւանագիտական գետնի վրայ կը բարձրացնէ սահազին աղմուկ: Բարեբախտաբար գերմանացի հեղինակութիւններու, մասնաւորապէս սոցիալիստական երիտասարդ նկատար Կառլ Լիբկնիցիտի. կողմէ ի նպաստ Կաֆեանցի եղած ազդու միջամտութեան, Կաֆեանց կ'ալանադրուէն ազատ կ'արձակուի: Այսուհանդերձ, փոխանակ ցարական իշխանութիւններուն յանձնուելու, կը հրահանգուի որ ան 48 ժամուան ընթացքին հեռանայ Գերմանիոյ սահմաններէն: Այս առնչութեամբ Ռուբէն Խան-Ազատ իր յուշերուն մէջ կը տեղեկացնէ, որ Կաֆեանց ստիպուած կ'ըլլայ Լայպցիկէն հեռանալով վերադառնալու ժընե: Իրողութեան մէջ, վերոյիշեալ եղելութիւնը և, մասնաւորաբար, Կաֆեանցի Գերմանիայէն Չուիցերիոյ ուղղութեամբ ճամբորդելու լուրը սահազին սահազանգ մը հնչեցուցած է Չուիցերիոյ պետական-ուստիկանական շրջանակներէն ներս: Պեմնի, վերը արդէն յիշատակուած արխիւներուն մէջ կան ծաւալուն հաղորդագրութիւններ և նամակներ, որոնք կը հաւաստիացնեն թէ Կաֆեանց ժընե եկած չէ, և ընդհանրապէս մուտք չէ գործած Չուիցերիոյ սահմաններէն ներս: Վսկայտակ այս պաշտօնական վկայութիւններուն, անուշտ երկիր մտնելու հազար ու մէկ գաղտնի ճամբաներ և ձեւեր գոյութիւն ունէին, որոնցմէ փ նախապէս, ինչպէս նաև այս առիթով Կաֆեանց կրնար օգտուիլ, որով յեղափոխական գործը և հայրութեան արեւմտեան հատուածը սուլթանական բռնատիրութենէն ազատագրելու ծրագիրը ոչ մէկ բանով կրնար կաշկանդել ազգի յառաջամարտիկ և անձնագոհ այս ուսուցիչը:

Յետագային Կաֆեանցը կը գտնենք Փարիզ, Լոնտոն, և 1890-ական թուականներէն սկսեալ Կ. Պոլիս, ուր կը մասնակցի Գոմ-Գալուի հանրաժամօթ ցոյցին, Արեւմտեան Վայսաստանի տարրեր շրջաններուն մէջ կը կազմակերպէ յեղափոխական գործունեւութիւն, ու միաժամանակ կը հիմնէ հնչակեան կեղծումներ:

«Վնչակ»ի Նրատարակութիւնը

Յեղափոխական կազմակերպութեան ստեղծումէն անմիջապէս ետք, հիմնադիր անդամներէն Աւետիս Նագարբէկեան, Մարօ Վարդանեան և Գեորգ Լարաջեան կը ստանձնեն նորաստեղծ յեղափոխական կազմակերպութեան ծրագիրը պատրաստելու պատասխանատուութիւնը: Ծրագիրը կը կազմուի նոյն 1887-ի ամառը, բայց կը տպուի միայն 1888-ին, բանի դեռ յեղափոխական կազմակերպութիւնը չուներ համա-պատասխան պաշտօնաթերթ մը:

Քաղաքական այս նոր կազմակերպութիւնը ստեղծելու նախօրեակին, ստաչին գրաւոր ելոյթը որ կ'իրականանայ փ Աւետիս Նագարբէկեանի և Մարօ Վարդանեանի խնդրագրած խմբակայ շրջաբերական կոչն էր, որ կը կրէր «Եղբայրներինու Քոյրերին» խորագիրը: Այս թուցիկը անկեղծ և ջերմ կոչ մըն էր ուղղուած հայ երիտասարդութեան, զանոնք միադրելու և պայքարելու համար ընդդէմ այն «Գազանութիւնների, որոնք այդ ժամանակ տեղի էին ունենում մեր հեռաւոր հայրենիքում և Թուրքական Վայսաստանում»: Այս կոչն, սահաւասիկ, լայն արձագանգ կը գտնէ երոպական համալսարաններու մէջ ուսանող հայ երիտասարդութեան

Շարք էք 12



ՄԱՍԻՍ - 2013

ԺԸՆԵՒ ԵՒ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԴՐՈՒՄԸ

Շարունակում էք 11-ին

շրջանակներին ներս:

Հայ լեղափոխական կազմակերպությունը ստեղծելու ճանապարհին Մկրտիչ Փորթոզյանի և ընտանիքի ղեկավարությամբ, և անոր դեր «Հայկական Բանակ» խորագրով յօդուած մըն ալ հրատարակելի է տըք, Աւետիս Նազարբէկեան ու իր համախոհները կ'որոշեն հրատարակել թերթ մը, որ յօդուածներով և արծարծած գաղափարներով իր շուրջ պիտի համախմբէր հայ լեղափոխական երիտասարդութիւնը: Իրագործելու համար այս նպատակը, անոնք ժընելի արահներէն մէկուն մէջ կը կազմակերպեն



թատերական-ընթրիք ծրագիր մընի «Soirée Caucasienne» («Կովկասեան երեկոյ») անունով, կարենալ հայթայթելու համար միջոցներ ապագայ թերթի հրատարակութեան համար: Այս միջոցառումը կ'ունենայ փայլուն յաջողութիւն և իր կարգին կը թողու գոհացուցիչ գումար մը: Իսկոյն, Աւետիս Նազարբէկեան և իր խումբը որոշում կ'ընդունին դիմելու Վիեննայի Միջազգային Միաբանութիւն, ուրկէ կը գնեն հայկական տատանակների պաշտօնաթերթ հրատարակելու նպատակով:

Վիեննայէն մինչև և հայկական տատերուն ստացումը, խորհրդակցութիւններ կը կատարուին որոշելու համար պաշտօնաթերթին անունը: Շատ մը անուններու շարքին, ինչպէս «Չանգ», «Ահագանգ» և այլն, ամենուն կողմէ կ'ընդունուի Աւետիս Նազարբէկեանի առաջարկած «Հնչակ»-ը, որ, մեծ հաւանականութեամբ, փոխառութիւն կ'ան հայերէն տարբերակն էր Ալեքսանդր Տերցյանի հրատարակած «Կոլոկոլ» թերթի անունին:

Բնականաբար թերթ հրատարակել մեծ յանձնառութիւն էր: Ժընելի մէջ կային ո՛չ հայ գրաշար և ո՛չ տպարան: Ուստի, նորաստեղծ Յեղափոխական Կազմակերպութեան հիմնադիրները իրենք պիտի տրվէին գրաշարութեան արհեստը, որպէսզի հայկական տատերուն ստացումէն անմիջապէս տնք ձեռնարկէին «Հնչակ»ի տպագրութեան: Նկատի ունենալով որ Աւետիս Նազարբէկեան և իր ընկերները ժընելի մէջ սերտ կապեր ունէին ուս լեղափոխականներու հետ և անոնք արդէն ունէին իրենց տարատեսակ հրատարակութիւններն ու տպարանները, որոնցմէ մին կը գտուէր Carouge-էն ոչ հեռուի Plainpalais-ի մէջ, ուստի ձեռք բերելու համար տպագրական արհեստը կ'որոշեն դիմել այդ տպարանին:

Բարեբախտաբար այդ օրերուն Աւետիս Նազարբէկեանի խնդրանքին ընդառայելով, Փարիզէն ժընել կը ժամանէ վարարչապատգի Տիգրան Նաւասարդեան անունով երիտասարդ մը, որ հմուտ էր տպագրական գործին: Ան, մինչև իր Կովկաս վերադարձը, շրջանի մը համար կը ստանձնէ «Հնչակ»-ը գրաշարելու գործը և, այսպէս, հրատարակութեան համար գաղտնի տպարան մը կը հիմնուի ուղղակի Նազարբէկեաններուն և բնակարանի խոհանոցին խոռոչը, որուն իրական հասցէն էրի Rue des Pitons թիւ 1:

Այստեղ փակագիծերու մէջ պէտք է նշել, որ «Հնչակ»-ի տպագրութեան առթիւ թերթի հասցէն դիտումնաւոր կերպով միշտ կ'եղծ եղած է, ոչ թէ երկրի օրէնքներէն կամ պետական համապատասխան ատենակէն գրուածնալով, այլ ուղղակի վայնալով թուրք օսմանեան և ցարական լրտեսներու գործունէութենէն, ինչպէս նաեւ անոնց կողմէ նշանակուած վարձու մարդասպաններէն, թերթի հրատարակութեան գործը իր սաղմային վիճակին մէջ չվտանգելու ստավախութեամբ: Ահաւասիկ, Մոնպելիէ, Պազէ, Ցիւրիխ և ժընել գրանցուած յետադարձ այդ անկապ հասցէներն ալ, հաւանաբար, եղած են մին այդ բանի մը գլխաւոր պատճառներէն, որ Զուիցերիոյ վերոյիշեալ արխիւներուն կամ ժընելի մէջ հրատարակուած այդ ժամանակաշրջանի թերթերու

ցանկերուն մէջ «Հնչակ»-ի մասին ոչ մէկ հետք մնզի կարելի եղաւ գտնել: Միայն Պեննի պետական արխիւն մէջ մեր հետազոտութիւններու ընթացքին, ժընել տպագրուած ուսական և լեհական հրատարակութիւններուն վերաբերող թղթածրարի մը մէջ, բոլորովին պատահմամբ, «Հնչակ»-էն միայն 2 թիւի 20 Ապրիլ 1891 և 18 Մայիս 1891 համարները յայտնուեցան, որոնք և ստոյգ սխալմամբ տեղադրուած էին այդ թղթածրարին մէջ: Ուրեմն, գուցեղիական հրատարակութիւններուն և արխիւներուն մէջ «Հնչակ»-ի մասին տեղեկութիւններու բացակայութեան հիմնական պատճառը, մեծ հաւանականութեամբ, կը հանդիսանայ Յեղափոխական Կազմակերպութեան հիմնադիրներուն երկաթեայ գաղտնապահութիւնը:

«Հնչակ»-ի առաջին թիւը լոյս կը տեսնէ Նոյնմբեր 1887-ին, և որուն շնորհիւ լեղափոխական կազմակերպութիւնը կը ստանայ նոր ինքնութիւն, կոչուելով այսուհետև Հնչակեան Կուսակցութիւն:

Նոր թերթը խմբագրելու, գայն համապատասխան յօդուածներով ապահովելու ստեղծագործական աշխատանքի ծանր բաժինը կը ստանձնէ Աւետիս Նազարբէկեանը, իսկ միւս նոյնքան կարեւոր պատասխանատուութիւնները տողաշարութիւն և սրբագրութիւն և այլ աշխատանքներ, կը լրացնեն Մարօ Նազարբէկեանն ու Տիգրան Նաւասարդեանը: Նկատի ունենալով որ վերջինս Կովկաս վերադառնալու ճանապարհին Փարիզէն կարճ ժամանակի մը համար ժընել եկած էր, և հաւանաբար «Հնչակ»-ի միայն առաջին թիւն է որ ինք շարած է, հարկ էր այս նպատակին համար ապահովել մնայուն գրաշար մը, որ կ'իրականանայ, ինչքան ալ փաստը տարօրինակ թուի, յանձնի Մոնպելիէ ուսանող վրացի երիտասարդի մը՝ Եւգենի Վազաձէ անունով: Վերջինս Ռուբէն Խան-Ազատի անձնական ծանօթութեամբ և ջանքերով ժընել կը տեղափոխուի, կ'իջեւանի Նազարբէկեաններու բնակարանը, և «Հնչակ»-ի Բ. համարէնի Յունուար 1888-էն սկսեալ ամբողջ մէկուկէս տարի, լոկ-մնջիկ, կը ստանձնէ թերթի գրաշարութեան և էջադրութեան պատասխանատու աշխատանքը: Ըստ Մարօ Նազարբէկեանի վկայութեան, «Հնչակ»-ը ամբողջութեամբ կը պատրաստուէր Նազարբէկեան գոյգի բնակարանի խոհանոցի մէկ խոռոչին մէջ, բայց տպագրութիւնը կը կատարուէր բնակարանին մօտակայքը գտնուող գուցեղիական տպարանի մը մէջ, հաւանաբար ժընելի Carouge թաղամասի կամ Plainpalais-ի շրջանը:»

Յեղափոխական գործունէութեան և Հնչակեան սոցիալ-դեմոկրատական գաղափարախօսութեան յաջողութեան ամբողջ գաղտնիքը խտացած էր թերթին միջոցով համագումարներու տարածման մէջ. թերթը հզօր գէնք մըն էր, որ համախոհներու զանգումներ պիտի համախմբէր ազգային-ազատագրական պայքարին շուրջ, սրբազան առաքելութիւն մըն ունէր ամբողջապէս կլանուած, կախարդուած էր հիմնադիրներուն խումբը: Այս առնչութեամբ ցայտուն օրինակ մը մնզի կ'աւանդէ Մարօ Նազարբէկեան իր յուշագրութեան մէջ, պատմելով թէ «Հնչակ»-ի Ե. թիւը պատրաստելու առթիւ թերթի խմբագրական և յարակից աշխատանքներով ինք այնքան լարուած էր, որ իր եօթ ամսական տղան կը յանձնէ դայեակի մը խնամքին: Ծանր և պատասխանատու աշխատանքը քանի մը օր անկարելի կը դարձնէ այցելելու փոքրիկին: Երբ ի վերջոյ, ուշ երեկոյ մը, Նազարբէկեան անոյր դայեակի մօտէն վերցնելու կ'երթայ երեխան, կը պարզուի որ ան արդէն քանի մը օր առաջ անհետացեր էր, իր հետ վերցնելով իրենց գաւակը: Անոնք տագնապածի ստիպումով կ'ըլլան դիմելու ոստիկանութեան, որու միջամտութեամբ, բարեբախտաբար, Զուիցերիոյ լեռնաբնակ գիւղերէն մէկուն մէջ կը յայտնուին դայեակն ու իր առեւանգած երեխան:

«Հնչակ»-ը լոյս կը տեսնէ ժընելի մէջ 1887-1891 թուականներուն, ապա Փարիզ՝ 1891-1892 թթ., Աթէնք՝ 1892-1894 թթ., Լոնտոն՝ 1894-1904 թթ., վերստին Փարիզ՝ 1904-1915 թթ.: «Հնչակ»-ը խմբագրուած է հիմնականօրէն Աւետիս և Մարօ Նազարբէկեաններու, Գարրիէլ Կաֆեանցի, Ռուբէն Խան-Ազատի, Միսոն Հովեանի և Ստեփան Սապահ-Գիւլեանի կողմէ:

Հուսկ Բանք

Իբրեւ հուսկ բանք, մեծխօսիկութիւն մը ըրած պիտի չըլլանք եթէ ըսենք, թէ Հայաստանի երրորդ Հանրապետութեան ստեղծումը և մօտակայ անցեալէն նուաճած մեր միասնական հայրենիքին անկախութիւնը արգասիքն է գաղափարի այն հզօր դարբիններուն, որոնք օտարին դարաւոր լուծը հայ ժողովուրդի վրայէն թօթափելու անընկճելի կամքը կոխեցին մեր ազգի ազատատենչ համագումարներու բուրային մէջ:

Այսօր, ազատագրական գոյապայքարի, ազգային անխոնջ ծառայութեան և հայրութեան անդատանին մէջ արգասաւոր նուիրումի 125 տարիներ անցած են: Իսկութեան մէջ, մեր համեստութիւնը մնզի թոյլ չի տար գնահատելու Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան գոհաբերութեան ոգին և երախտաշատ

Շարք էք 13



ԺԸՆԵՒ ԵՒ ՅՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԴՐՈՒՄԸ

Ճարտնական էջ 12-էն

գործը, բանի հայ ժողովուրդը արդէն իսկ գերազանցապէս գնահատած է զայն իր թափած արիւնով, իր ամրագրած ազատագրական պատմութեան ոսկեձոյլ էջերով, ու զարդարած է անոր սէգ ճակատը մշտադալար եւ յաղթապան զարմեայակով:

Մէկ բան եւս պիտի ուզենք ըսել, բազ գիտակցելով, որ 125 երկար տարիներու միայն անխոնջ ծառայութեան եւ ազատագրական ծանր պայքարի արիւնաներկ քիրտն է եղած սեփականութիւնը Հնչակեան Կուսակցութեան. պատիւը ան ձօնած է հայ ժողովուրդին, իսկ փառքը՝ Աստուծոյ:

Ողջո՛յն 125-ամեակին յաղթապանձ,
Ողջո՛յն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան,
Յարգա՛նք անոր անմահ հերոսներուն,
Խունկ եւ աղօթք անոնց անմոռաց յիշատակին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1 Mysyrowicz Ladislas., Université et Révolution. Les étudiants d'Europe Orientale à Genève au temps de Plékhanov et de Lénine, Tirage à part de la «Revue suisse d'histoire», tome 25, fasc. 4, Genève, 1975; Mysyrowicz L., Editions et imprimeries «révolutionnaires russes» à Genève, (1865-1917), Société d'histoire et d'archéologie de Genève, 1978. Ter Minassian A., l'Arménie et l'éveil des nationalités (1800 1914), dans: Histoire des Arméniennes, Dedeyan G., Toulouse, 1982, p. 465-467; Ter Minassian A., Elite Arméniennes en Suisse, Le rôle de Genève dans la formation des élites Arméniennes au début du XXème siècle, dans: La Question Arménienne et la Suisse (1896-1923), Zürich, 1999, p. 33; Տե՛ս, Հովհաննիսյան Ա. Գ., Հնչակյանների Կազմավորման Գաղափարական Արմատները, Պատմաբանասիրական Հանդես (ՊԲՀ), 2, 1968, էջ 19-38; Հովհաննիսյան Գ., Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան Կուսակցություն, Հայոց Պատմություն, Գ, Նոր ժամանակաշրջան, (XVII-րդ դարի երկրորդ կես-1918 թ.), Երեվան, 2010, էջ 26-27; Նոյն, Հնչակյան Կուսակցության Պատմություն (1887-1915 թթ.), Երեվան, 2012, էջ 21-21; Ներսիսյան Մ. Գ., Հայ Ազատագրական Շարժումը Եվ Հնչակյանները 1880-1890-ական թվականներին (Հնչակյան Կուսակցության Հիմնադրման 100-ամյակի Առթիվ), (ՊԲՀ) Երեվան, 1987, էջ 27: Վերոյիշեալ աղբիւրներէն բացի, բնականաբար, այս շրջանի մասին անփոխարինելի տեղեկութիւններ կը հաղորդեն այն բազմաթիւ գրաւոր վկայութիւնները, որոնք պահպանուած են ռուս յեղափոխականներուն վերաբերող թղթածրարներուն մէջ. այս մասին տե՛ս, Bundesarchiv, Bern.

* Աւետիս եւ Մարո Նազարբեկեաններու ժնեի մէջ բնակութեան առաջին հասցէն, ուր եւ, մեծ հաւանականութեամբ, հիմնուած է Յեղափոխական Կազմակերպութիւնը (իմասի Հնչակեան Կուսակցութիւնը), նաեւ պատրաստուած է «Հնչակ»-ը:

** Աւետիս եւ Մարո Նազարբեկեաններու ժնեի մէջ բնակութեան երկրորդ հասցէն: Նոյն շէնքի թիւ 15 մուտքը բնակած է Քրիստափոր Օհանեանը:

*** Աւետիս եւ Մարո Նազարբեկեաններու ժնեի մէջ բնակութեան երրորդ հասցէն: Այստեղ Նազարբեկեան ընտանիքը բնակած է կարճ ժամանակամիջոց մը:

IV Եղած է Գաբրիէլ Կաֆեանցի ժընեի մէջ բնակութեան հասցէն:

V Նոյնպէս:

VI Եղած է Ռուբէն Խան-Ազատի ժընեի մէջ բնակութեան հասցէն:

VII Գաբրիէլ Կաֆեանցի ժընե կեցութեան շրջանի պաշտօնական վերջին հասցէն:

2 Bundesarchiv, Bern.

3 National Bibliothek, Bern.

4 Archives d'Etat de Genève.

5 Archives de l'Université de Genève.

6 Հնչակեան Կուսակցութեան Հիմնադիրներուն առաջին մտայնացումը եղած է ստեղծել «յեղափոխական կազմակերպութիւն» մը: Սոյնը ստեղծ ունէին քիչ յետոյ, երբ կը հրատարակուի այս կազմակերպութեան պաշտօնաբերքը «Հնչակ» անունով, «յեղափոխական կազմակերպութեան» անդամները ինքնաբերաբար կը սկսին կոչուիլ Հնչակեաններ, իսկ Կուսակցութիւնը Հնչակեան: Աւելի ուշ շրջանին է որ «յեղափոխական կազմակերպութիւնը» կ'որդեգրէ «Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն» անուանումը: Պատմական մշուած փաստերուն արդար մօտեցում ցուցաբերելու նպատակով, այստեղ, մենք եւս «Հնչակեան Կուսակցութիւն» անուանումին տեղ կ'որդեգրենք «յեղափոխական կազմակերպութիւն» եզրը:

7 «Յանձնախմբի կազմած ծրագիրը հաստատելուց յետոյ, մեր յեղափոխական ընկերութիւնը արդէն կազմուած էր համարուած: Նրա անդամներն էին օր. Մ. Վարդանեան, Ա. Նազարբեկեան, Գ. Ղարաջեան, Գ. Կաֆեանց, Ք. Օհանեան եւ տողերի գրողը [Ռ. Խան-Ազատ]: Սրանց վրայ պիտի աւելացնեն եւ մի եօթներորդին [...]: Դա Գանձակեցի Լեւոն Ստեփանեանն էր, Սոնպելիէյի գիւղատնտեսական դպրոցի վերջին կուրսի ուսանող, որը հէնց այդփ 1887 թ. ամառը պիտի աւարտէր: Նա Սոնպելիէյից եկած ընկերներին խօսք էր տուել, թէ անդամ պիտի դառնայ կազմուելիք յեղափոխական ընկերութեան [...]: Մենք նրա հետ նամակագրութիւն ունէինք եւ ժընեկում տեղի ունեցած բոլոր անց ու դարձերի մասին տեղեկացնում էինք նրան: Կազմուած ծրագիրն էլ ուղարկեցինք, եւ նա իր կատարեալ համաձայնութիւնը յայտնեց: [...] Դեռ «Հնչակ»ը լոյս չտեսած, նա աւարտեց իր ուսումը եւ եկաւ ժընեկ մեզ հետ տեսնուելու»: (Հմմտ. Ռուբէն Խան-Ազատ, Հայ Յեղափոխականի Յուշերից, Հայրենիք Ամսագիր, Ե. Տարի, թիւ 9, Յուլիս 1927, էջ 58-59):

8 Նոյնը:

9 Ռուբէն Խան-Ազատ իր վերոյիշեալ յուշերուն մէջ կը հաղորդէ, թէ Գաբրիէլ Կաֆեանց ժընեի մէջ ազգային յեղափոխական կազմակերպութիւն ստեղծելու մտայնացումը իրականացնելու եւ անոր շուրջ համախոհներ գտնելու միտումով Սոնպելիէ կը մեկնի, ու կը վերադառնայ շաբաթ մը ետքի յայտարարելով. «Մի վազոն տղերք եմ բերել»: Արդարեւ, Սոնպելիէյի մէջ իրեն միացած էին Գեորգ Ղարաջեան, Քրիստափոր Օհանեան, Պօղոս Աֆրիկեան եւ Մատթէոս Շահագիզեան: Այս մասին Տե՛ս, Նոյնը, էջ 70:


10 Տե՛ս, Նոյնը, էջ 70-71:

11 Լուսանկարին մէջ զարդարանքը այն տպաւորութիւնը կու տայ, թէ ան առնուած է ազարակի մը մէջ: Տարակոյս չկայ, որ լուսանկարունը եղած է ժընեի մէջ, Գարուժի շրջանը գտնուող լուսանկարչական արհեստանոցի մը մէջ, որուն մօտակայքը կ'ապրէին Հնչակեան Կուսակցութեան հիմնադիր անդամները:

12 Տե՛ս, Նոյնը, էջ 70-71: Ի դէպ, Հնչակեան Կուսակցութեան կազմաւորման եւ համառօտ պատմութեան մասին գիտական պատկառելի անդրադարձ մը կատարած է Լուիզ Նալբանդեան իր անգլերէն լեզուով հրատարակած հատորին մէջ, ուր ճշգրիտ տուեալներով մշած է Հնչակեան Կուսակցութեան հիմնադիրներուն անունները. 9The party of the Hunchaks, founded in Geneva in August, 1887 [...]. The seven official founders were Avetis Nazarbekian, Mariam Vardanian (Maro), Gevorg Gharadjian, Ruben Khan-Azad, Christopher Ohanian, Gabriel Kafian, and Levon Stepanian (Louise Nalbandian, The Armenian Revolutionary Movement, The Development of Armenian Political Parties through the Nineteenth Century, Los Angeles, 1963, p. 115)!

13 Գեղամ Յովհաննիսեանի «Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան Կուսակցություն» խորագրով իր ուսումնասիրութեան մէջ Հնչակեան Կուսակցութիւնը նախածեռնողներուն եւ զայն հիմնողներուն անունները կը մշէ հետեւեալ հերթականութեամբ. «Աւետիս Նազարբեկյան, Մարո Վարդանյան, Ռուբեն Խանազատ, Գաբրիէլ Կաֆյան»: Հեղինակը կը շարունակէ ըսելով. «Ժնեի խմբին միանում են Գեորգ Ղարաջեանը, Մաթէոս Շահագիզյանը, Քրիստափոր Օհանյանը և ուրիշ մեր» (Հմմտ. Հայոց Պատմություն, Գ, էջ 26): Նոյն հեղինակը վերջերս Երեւանի մէջ լոյս ընծայեց Հնչակեան Կուսակցութեան պատմութեան նուիրուած շահեկան հատոր մը, որուն մէջ խնդրոյ առարկայ հարցին կ'անդրադառնայ մշտելով. «Հնչակյան կուսակցության հիմնադիր ժողովին մասնակցում էին Աւետիս Նազարբեկյանը, Մարո Վարդանյանը, Գաբրիէլ Կաֆյանը, Ռուբեն Խանազատեանը, Գեորգ Ղարաջեանը, Սկրտիչ Մանուչարյանը, Հովման Դավթյանը, Սարգիս Աղամիրջյանը, Քրիստափոր Օհանյանը» (Հմմտ. Նոյնը, Հնչակյան Կուսակցության Պատմություն (1887-1915 թթ.), էջ 24): Վերը մշտեցինք, թէ ինչո՞ւ Շահագիզեան եւ Մանուչարեան չեն կրնար մաս կազմել հիմնադիրներու խումբին, իսկ Յովման Դաւթեան եւ Սարգիս Աղամիրջեան հիմնադիրներու խմբակին աւելի ուշ միացած են: Ազուլիսցի Սարգիս Աղամիրջեան Սոնպելիէյէն ժընե եկած է միայն 1888-ին, «Հնչակի» հրատարակութենէն ետք, Ռուբէն Խան-Ազատի քաջալերանքով, քանի վերջինս Յեղափոխական Կազմակերպութեան հիմնուելէն ետք, մեկնած էր Սոնպելիէ գիւղատնտեսութիւն ուսանելու: Ծանր հիւանդութեան մը

Ճար.ք էջ 14



ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԿԷՐԻ ԵՒ ՍՈՒՉԱՆՆԱ ՄԻՆԱՆԵԱՆ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՄԱՍԻՍ - 2013

ԺԸՆԵՒ ԵՒ ՅՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԴՐՈՒՄԸ

Ճարտանակում էջ 13-էն

պատճառով Ռ. Խան-Ազատ ստիպուած կ'ըլլայ վերադառնալու ժընեւ, իսկ իր վերադարձէն ետքը միայն Ս. Աղամիրզեան Մոնպելիէն ժընեւ տեղափոխուելով նոր կը միանայ հիմնադիրներու խումբին (Տե՛ս, Ռ. Խան-Ազատ, Նոյնը, էջ 62-63):

14 Արսէն Կիտուր, որ 1962 թուականին Պէյրուսի մէջ «Պատմութիւն Ս. Դ. Յնչակեան Կուսակցութեան» խորագրով երկու ստուար հատորներ հրատարակած է, Յնչակեան Կուսակցութեան ծնունդին անդրադառնալով, հիմնադիրներու ցանկին մէջ կ'աւելցնէ Մանուէլ Մանուէլեանի մը անունը: Մեզի համար ամբողջապէս անհասկնալի կը մնայ, թէ ինչպէ՞ս եւ ուրկէ՞ եղած է այս յաւելումը, երբ Ս.Դ.Յ.Կ.ի պատմութեան վերաբերող մեզի ծանօթ գիտական ոչ մէկ հրատարակութեան մէջ նշուած է այդ անունը: Յարգոյ հեղինակի արժէքաւոր հրատարակութեան մէջ Յնչակեան Կուսակցութեան հիմնադիրներու խմբակարգին տակ, Աֆրիկեանէ առաջ, նմանապէս կրկնուած է Ս. Մանուէլեանին անունը, որուն համար, արդարեւ, կը յայտնենք մեր վերապահութիւնը: (Տե՛ս, Ա. Կիտուր, Պատմութիւն Ս. Դ. Յնչակեան Կուսակցութեան 1887-1962, Ա, Պէյրուս, 1962, էջ 29-30): Դոս բացառութիւն մը եւս կը կազմէ Անահիտ Տէր Մինասեանի ընդարձակ յօդուածը, ուր Յնչակեան Կուսակցութեան հիմնադիրներու անունանացակին մէջ կը յիշուի նաեւ Ս. Մանուէլեանի անունը, որ ինչպէս վերը արծարծուեցաւ, հաւանաբար պէտք է ըլլայ արդիւնք թիրիմացութեան մը: Բոլոր պարագաներուն, առ այժմ, կարելի չէրաւ հաստատել նաեւ, արդեօ՞ք «Ս. Մանուէլեան» անունը հիմնադիր խումբի անդամներէն մէկուն կեղծանունն է թէ ոչ: Ասկէ բացի, Ա. Տէր Մինասեանի վերը ակնարկուած անունանացակին մէջ, փաստօրէն, յիշուած չեն նաեւ հիմնադիրներու խումբէն անբաժանի Քրիստափոր Օհանեանը եւ Լեւոն Ստեփանեանը (Տե՛ս, Ter Minassian A., l'Arménie et l'éveil des nationalités (1800-1914), p. 46):

- 15 Մարո Նազարբէկեան, «Յուշեր», ԶԱՄ, ֆ. 1456, ց. 2, գ. 27:
- 16 Արդեօ՞ք կեղծանուն մը, առ այժմ կարելի չէրաւ հաստատել:
- 17 Տե՛ս, Ռ. Խան-Ազատ, նոյնը, էջ 59.
- 18 Տե՛ս, անդ, էջ 60.
- 19 Նոյնը.
- 20 Տե՛ս, անդ, էջ 63.
- 21 Տե՛ս, անդ, էջ 69:
- 22 Տե՛ս, Ter Minassian A., l'Arménie et l'éveil des nationalités (1800-1914), p. 44.
- 23 Ville de Genève
- 24 Սոդոմէ
- 25 Տե՛ս, Nalbandian L., The Armenian Revolutionary Movement, p. 105!

26 Գրանտ Ամիրեան վերջերս Երեւանի մէջ հրատարակած է Մարո Վարդանեան-Նազարբէկի կեանքին եւ գործին նուիրուած շահեկան գրքոյկ մը, ուր բաւական ծաւալուն (լուսանկարներով հանդերձ) ներկայացուցած է վերջինիս կենսագրութիւնը (Տե՛ս, Ամիրյան Զ., Մարոյի Գրեղեն Գրքերով, Երևան, 2012):

27 Մարո Նազարբէկեան 1918-ին գրած իր վերոյիշեալ յուշերուն մէջ, փոքր բաժին մը կը տրամադրէ իր հետ պատահած որոշ միջադէպերուն, որոնցմէ օգտուելով կը ներկայացնենք համապատասխան տուեալները:

28 QRSTUVWRX YTUZX, բառացիօ՝ «ժողովուրդին կամքը» կամ «ազատութիւնը»: Գրականագիտական գործը քաղաքական կազմակերպութիւն մը, որուն ազդու գործունէութիւններէն մին էր Ալեքսանդր Բ. Ցարի դէմ իրագործած մահափորձը (1881 թ.):

29 Ի տարբերութիւն վերը նշուած 31 Մարտ 1888-ի արձանագրութեան, որտեղ հայ պարսիկ նշուած էր:

30 Այս առնչութեամբ աւելորդ չէ յուշել, որ քիչ մը աւելի ուշ պարագան նոյնը եղած է Գայոց Ցեղասպանութեան անմահ նահատակներէն Ռուբէն Սեւակի, որ իր քաղաքացիական ամուսնութիւնը Լօզանի մէջ վաւերացնելէ ետք, իր տիկնոջ Եաննի Արքէլի հետ մեկնած է Փարիզ, եւ հոն ամուսնութեան պսակը եկեղեցական արարողութեամբ օրհնել տուած է ձեռամբ Վառձապուի

- Վրդ. Քիպարեանի:
- 31 Նամակին լուսապատճէն օրինակը մեր տրամադրութեան ներքոյ:
- 32 Նմանապէս:
- 33 Տոմարներուն մէջ Կաֆեանցի իբրեւ ծննդավայր Schucha կամ

Schuscha արձանագրութիւններուն քով կը հանդիպինք նաեւ Schluka գրանցումին, որ զուգեղանակի պաշտօնեաներու պարզ շփոթութեան կամ անգիտութեան արդիւնքն է:

- 34 Sommersemester.
- 35 Weggang von der Universität: dch.bundesrätl.Beschluss während dem Sommer 1889 ausgewiesen.

- 36 Կալանաւորումը հաւանաբար եղած է ժընեւի մէջ:
- 37 Zusatzinformationen: vgl. Bundesblatt 1889/2 S. 925 ff. Lt. "Genevois" zu 24 Std.Haft verurteilt, weil er dem Ausweisungsbefehl nicht nachgekommen: Zch.Post 28.04.1889

38 Մեր ձեռքը գտնուող շատ մը փաստեր կու գան վկայելու, որ Գ. Կաֆեանց գրեթէ հետեւած չէ իր դէմ տրուած պաշտօնական վճիռներուն, եւ շարունակած է անպաշտօն մնալ ժընեւի եւ ընդհանրապէս Զուիցերիոյ տարածքէն ներս: 1887 թուականի Օգոստոսին, Յեղափոխական Կազմակերպութիւնը հիմնուելու օրերուն, ան ստոյգ ժընեւ կը գտնուէր, ընդհուպ մինչեւ անգամ դէպի Մոնպելիէ յետ ու դարձ ճամբորդութիւններ կը կատարէր յեղափոխական գաղափարին եւ ծրագրին շուրջ համախոհներ գտնելու համար:

39 Բնականաբար, ժընեւի կառավարութեան կողմէ արտաքսման մասին առնուած վճիռը կը վերաբերի միայն ժընեւի քանթօնի տարածքին, որով իրաւական ազդեցութիւն մը չունի Զուիցերիոյ միւս շրջաններուն մէջ գտնուելու իմաստով:

- 40 Ֆրանսայի մէջ ժընեւի հարաւային կողմը գտնուող սահմանակից քաղաք մը:
- 41 Տե՛ս, Kölner Zeitung, 2 mai 1888.
- 42 Տե՛ս, Berliner Zeitung, 2 mai 1888.
- 43 Karl Paul August Friedrich Liebknecht.


44 «Լայպցիգից [Յնչակը] ուղարկողը Կաֆեանցն էր: Սա անզուրկութեամբ երկար ընդմիջումներ չէր արել եւ միատեսակ ծրարները մեծ քանակութեամբ էր պոստարկող գցել: Այս բանը գրաւել էր ռուս լրտեսների ուշադրութիւնը, եւ նրանք, մի անգամ էլ այդ ծրարներից պոստարկող գցած միջոցին, ձերբակալել էին տուել Կաֆեանցին: Այդ ինքնաստիճանի շատ աննշան դէպքը ահագին աղմուկ բարձրացրեց համարեա թէ ամբողջ Գերմանիայում: Ռուսաց դեսպանը Բերլինից միջամտել ու պահանջել էր, որ Կաֆեանցին իրան յանձնեն. իսկ սոցիալ-դեմոկրատների ղեկավար Լիբկնեխտը, որ այդ միջոցին Լայպցիգ էր եղել, իր հերթին միջամտել, ահագին աղմուկ էր բարձրացրել եւ թոյլ չէր տուել Կաֆեանցին յանձնելու: Այնուամենայնիւ գերմանական կառավարութիւնը, վարչական կարգով, հրամայեց Կաֆեանցին 48 ժամուան ընթացքում թողնել Գերմանիայի սահմանները: Կաֆեանցը ստիպուած կրկին վերադարձաւ ժընեւ» (Ռ. Խան-Ազատ, անդ, էջ 62):

45 Գերմաներէն եւ ֆրանսերէն լեզուներով գրուած սոյն փաստաթուղթերուն լուսապատճէն օրինակները նախատեսուած են մեր յաջորդ հրատարակութեան համար:

46 Mysyrowicz Ladislas., Editions Et Emprimeries Revolutionnaires Russes A Genève (1865-1917). Երախտագիտութեամբ կ'նդրադառնանք, որ անձնական հանդիպումի մը առթիւ նշուած աշխատասիրութեան հեղինակը սիրով մեզի տրամադրեց իր սոյն ուսումնասիրութեան ձեռագիրը: Բաց աստի, Գարուծի տեղական տպարաններէն մէկուն մէջ «Յնչակ»-ի տպագրութեան մասին կը վկայեն նաեւ Մարո Նազարբէկեանի վերոյիշեալ յուշագրութիւնները:

ՏԱՐԵՄՈՒՏԻ ՕՐԸ
ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

Ոչինչ չեն ուզում այս տարեմուտից,
Ոչ գանձ, ոչ անուն, ոչ նոր բախտ ու սէր,
Դանդաղ այս տանջող խռովքն իմ սրտից
Ինձ նորից կեանքի հիացքով լցնէր,
Դանդաղ նորոգուող իմ սուրբ հաւատից
Երկու բեկոր էլ իրար կպցնէր...




ՄԱՍԻՍ - 2013

ՍԴՅԿ-Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 125 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐՈՒՆ ԴԵՐԸ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԵՋ

ԴՈԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՅԱԾԵԱՆ

Նախ կը շնորհակալուեմ ՍԴՅԿ-ը իր հիմնադրութեան 125 ամեակին առթիւ եւ երախտագիտութիւնս կը յայտնեմ Հնչակեան այն առաջին շրջանի անձնագոհ յեղափոխականներուն, որոնք իմ ծնողքիս ու մեծ հօրս ու մեծ մայրերուս ծննդավայր Չորք-Մարզպանի (Տէօրթ-Եոլ) երիտասարդութիւնը 1880-ական թուականներուն պատրաստեց զայլիք վտանգները դիմազարակել իրիմեանական ոգիով: Այս գրութիւնը համեստ տրիտուր մըն է միայն այն Հնչակեաններուն եւ անոնց չորք-մարզպանցի սաներուն, որոնցմէ մէկն էր նաեւ մեծ հօրս աւագ եղբայր Յովհաննէս (Խորով) Գարասարգիսեանը, որոնք մասնակցեցան երեք հերոսամարտերուն (1896, 1909 եւ 1919-1921) ու երբեք պարտութիւն չկրեցին: Փառք ու պատիւ մեր բոլոր անձնուրաց ազատամարտիկներուն:

Ա.- ԺԻՐԱՅԻ ՊՈՅԱՃԵԱՆ ԵՒ ՔՈՅՐԸ ՀԱՅԿԱՆՈՅՇ



Նախքան Չորք-Մարզպանի երեք հերոսամարտերու բուն նկարագրականին անցնիլը, անհրաժեշտ է ներկայացնել 1880-ականներու վերջաւորութեան եւ 1890-ականներու սկիզբները խումբ մը «դրսեցի» յեղափոխականներու եւ անոնց տեղացի հետեւորդներու գործունէութիւնը, որուն շնորհիւ Չորք-Մարզպանի եւ շրջակայից բնակչութիւնը փրկուեցաւ ֆիզիքապէս: Ինչպէս կ'երեւայ մեր բոլոր յուշագրող հայրենակիցներուն վկա-

յութիւններէն, չորք-մարզպանցիներ կը սպասէին թուրք ու քիւրտ խուժաններու յարձակումներուն, որոնց դիմազարակման համար յատկապէս, երիտասարդ չորք-մարզպանցիներ տեսած էին նուազագոյն պատրաստութիւններ: Այս նախապատրաստութեան մէջ կարեւոր դեր մը ունեցած են յայտնի յեղափոխական Հնչակեան ժիրայր Պոյաճեան, որ 1888ին իր քրոջը՝ օրիորդ Հայկանոյշի հետ եկած էր Չորք-Մարզպան, ապա անոնց յաջորդած էին Վարդան Ախիկեանն ու Միսո Շահէնը: Կ'արժէ հոս փակագիծ մը բանալ եւ անդրադառնալ ժիրայրի ու միւսներու խիստ դրական գործունէութեանց Չորք-Մարզպանի մէջ:

Հաճընցի կրքոտ եւ անձնուրաց երիտասարդ յեղափոխական ժիրայր Պոյաճեան, քաջալերութեամբ ու թելադրութեամբ Ալեքսանտրէթի Գրիգոր Փոստամը Մինասեանին (յետագային՝ Տէր Գրիգոր Մինասեան), կու գայ Չորք-Մարզպան եւ ուսուցիչ կ'ըլլայ Ս. Աստուածածին եկեղեցւոյ դպրոցին մէջ, լծուելով նոր սերունդի երկսեռ զաւակներու կրթութեան ու դաստիարակութեան գործին: Ժիրայր, քիչ ետք իր քով կը հրաւիրէ քոյրը՝ օրդ. Հայկանոյշ Պոյաճեանը (*): Անոնք միասնաբար կը լծուին իրենց ազգօգուտ գործունէութեան, որ կը յաջողի վերականգնել միասնականութիւն մը ազդեցիկ չորք-մարզպանցի ընտանիքներու մէջ: Իր նպատակին հասնելու համար ան իր սայլին կը լծէ իւրաքանչիւր ազդեցիկ անձնակերպութիւն, մանաւանդ Տէր Ստեփան ու Տէր Գէորգ Քահանայ հայրերը:

Չորք-Մարզպանի մէջ այս օրերուն անհամութիւն մը կար Կիրակոս էֆ. Պալեանի եւ հօրեղբորորդիին՝ Մանուկ էֆ. Պալեանի ընտանիքներուն միջեւ: Ժողովուրդի մեծամասնութիւնը առաջինին կողմնակից էր: Ժիրայրի սուր աչքերը կը նկատեն թէ այս անմիաբանութիւնը կրնայ յետագային ծանր հետեւանքներ ունենալ գիւղաքաղաքին ու շրջակայքի հայութեան հասարակական կեանքին վրայ: Ուստի, որպէս առաջին լուրջ քայլ, կ'որոշէ իրարու քով բերել ազգականները: Կ'արժէ նկարագրել հաշտութեան պահը, որ այդ օրերու

չորք-մարզպանցիներու կեանքին վրայ «պատմական» նշանակութիւն ունեցած է, ինչպէս կը վկայէ Մարտիրոս Տէր Ստեփանեան իր անտիպ յուշագրութեանց մէջ:

Ժիրայր, որ երկու Պալեաններէն ալ հրաւիրագիր ստացած էր պաշտօնավարելու Չորք-Մարզպանի դպրոցին մէջ, ինք իր կարգին երկու կողմերուն անձնական հրաւիրագիրներ կը դրկէ, որպէսզի հաւաքուին որոշուած վայրին մէջ: 7-800 հարիւր հօգինոց բազմութեան մը առջեւ ժիրայր Պոյաճեան կը յաջողի իր պերճախօսութեամբ տպաւորել բոլորը: Ան իր խօսքին մէջ յատկապէս կ'անդրադառնայ Չորք-Մարզպանի անցեալին ու կ'ընդծէ համերաշխութեան անհրաժեշտութիւնը: Տպաւորիչ ելույթէն ետք Մանուկ էֆ. Պալեան կը մօտենայ հօրեղբոր եւ անոր ձեռքերը կը համբուրէ, իսկ Կիրակոս էֆ. Պալեան գրկելով Մանուկ էֆէնտին, «զաւակ» կ'անուանէ ու կը համբուրէ զինք: Ներկաները ասիկա տեսնելով իրենք ալ կ'ողջագուրին: Ժիրայր Պոյաճեան «սիրով ու միաբանութեամբ աշխատանք կատարելու» յանձնառութիւնը առնելով բոլոր կողմերէն, քրոջը հետ կը սկսին իրենց ուսուցչական առաքելութիւնը:

Գոյացած համերաշխութիւնը կու տայ իր պտուղները: Կը կազմուի Ազգային Խորհուրդ մը:

Առաջին իսկ ժողով-հաւաքոյթին կը հանգանակուի 600 օսմանեան ոսկի: Ազգային Խորհուրդը կը լծուի Չորք-Մարզպանի ու շրջակայի տնտեսական բարելաւման ու արդիականացման: Ժիրայր այնուհետեւ կը նուիրուի երիտասարդութեան հայեցի ու գիտական դաստիարակութեան գործին:

Այս շրջանի ժիրայրի աշակերտներէն ինչքան Գարաեղուպեան, հակառակ իր յառաջացեալ տարիքի, իր յուշագրութեան մէջ, պատանիի մը խանդավառութեամբ ու կարօտով կը նկարագրէ այդ օրերը: «Իր աշխատանքին հիմքը վերի երկու դասարաններու աշակերտութիւնն էր. Հինգերորդի ու վեցերորդի աշակերտները անխառն սիրով կ'ապուեցան իրեն: «Սիրահարի մը նման սկսանք պաշտել զինք» կը գրէ ան: Ժիրայր մեծ կրթութիւն մը չունէր, սակայն

ձեռներէց էր եւ իւրապատուկ ձիրք մը ունէր ոչ միայն աշակերտութիւնը, այլեւ գիւղաքաղաքին երեւելիները գրաւելու եւ գործի լծելու:

Քոյր-եղբայր Պոյաճեաններու շնորհիւ մեծ թափ կ'առնէ լուսաւորական աշխատանքը: Այս անխոնջ երիտասարդը կը յաջողի պարտադրել հայախօսութիւնն ու հայ ազգային երգերը: Ան դասարաններու աշակերտները կը շարէր գինուորական շարքով, եւ իւրաքանչիւր զոյգէն կը պահանջէր երգել իրենց նախասիրած երգը: Գոյգերէն մէկը կ'երգէր «Իմ հայրենիք գիս կը կանչէ» եւ «Հեռու եմ Հայաստանէն», ուրիշ զոյգ մը կ'երգէր «Դու Հայաստան, մայր սիրեկան», իսկ ինք քիչ մը անդին կեցած... կ'արտասուէր:

Չորք-Մարզպանի մեր երիտասարդները ժիրայրի օգնութեամբ կը վարժուին նաեւ գէնք գործածել, դիրք բռնել, նշան առնել, թուրքերէն ոչխար գողնալ եւ այլ «պարտիզանական» յանձնարարութիւններ կատարել:

Գարաեղուպեանի յիմնուելով յուշագրողի վկայութիւններուն վրայ, առաւելապէս աչքի կ'իջնան հետեւեալ երիտասարդները, որոնց անունները արժէ տալ, որովհետեւ անոնք էին, որ առաջին հերթին գործօն կերպով մասնակցեցան Առաջին Հերոսամարտին:

Այսպէս, Վահան Պալեան, որ յաճախ առաջնութիւնը կը շահի վարժութիւններու մէջ, Քերովբէ եւ Երեմիա Տէր Ստեփանեաններ, Պողոս Թրղըլեան, Աւետիս («Վահարամ») Քեչիշեան, Միսաք, Գէորգ եւ Գառնիկ Էօջօղլեաններ, Ռուբէն, Տիգրան, Վահան եւ Բիւզանդ Պալեաններ, Մկրտիչ («Մերութան») Քեհէնեան, Յովհաննէս («Խորով») Գարասարգիսեան, Յովսէփ Քիւչիւք Սարգիսեան, Մկրտիչ Շաքլեան, Գագիկ Պալեան, Խաչեր Գարավարդանեան, Յովհաննէս Տէր Գէորգեան (յետագային՝ Տէր Սահակ Քահանայ), Բարնէս Տէր Գէորգեան, Յակոբ («Պարեա») ու Խաչեր Վասիլեաններ, Համբարձոմ Ռուբէնեան, Իսկենտէր Պալեան, Մանուկ Թենքերեան, Մկրտիչ («Պեպէք») Մաճառեան, Նազարէթ

Շարք էջ 16

«ՔԱՉ ՆԱԶԱՐ» ԵՐԳԻԾԱԹԵՐԹԻ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱԼԱՅԵԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐՈՒՆ ԴԵՐԸ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԵՋ

Շարունակում էք էջ 15-ին

Փելթեքեան, Երուանդ Տէր Ստեփանեան, Սարգիս Պալեան եւ ուրիշներ:

Ինչպէս նկատեցիք վերը, կարգ մը անուններու քով տրուած են նաեւ չակերտեան անուններ: Այս ալ իր բացատրութիւնը ունի: Ժիրարար սովորութիւն ունէր իր աշակերտները տանիլ մօտակա բարձունքները, խրախուսել, հայրենասիրական գաղափարներով դաստիարակել էտք, անոնց ճկուն մատի արիւնը իրարու խառնել ու դարձնել արիւնակիր եղբայրներ, ապա անոնց կու տար նոր հաջկական անուններ:

Բ. ՎԱՐԴԱՆ ԱՍԻԿԵԱՆ ՈՒ ՄԽՅ ՇԱՀԷՆ



Չորք-Մարգարանի հերոսական դիմագիծի կերտումին մէջ կարեւոր դեր ունեցած են նաեւ Վարդան Ախիկեանն ու Մխո Շահէնը: Անոնք իրենց բանախօսութիւններով, մանաւանդ երիտասարդներու մէջ ազգային գիտակցութեան եւ արժանապատուութեան գզացումը կոփելու ուղղութեամբ տարած իրենց աշխատանքով, մէջտեղ բերած են մարտական ոգիով լեցուած չորք-մարգարանցիներ:

Հայ եւ թուրք բնակիչներու միջեւ հակակրանքն ու ատելութիւնը կը սաստկանան 1890-ական թուականներուն: Համիտեան յետադիմական ու խաւարամիտ վարչակարգը ամէն կողմ կը տարածէր ահ ու սարսափի մթնոլորտ, կը զրգռէր տեղի թուրք ու մահմետա-

կան ցեղերն ու բնակիչները հայերու դէմ: Ա՛լ աւելի ճնշելու, ստրկացնելու եւ իր մականին տակ պահելու նպատակով՝ մեքենայութիւններով, դաւերով ու լրտեսութիւններով կը ձեռնարկէր հայ երեւելիներն ու մտաւորականութիւնը հալածելու բացորոշ քաղաքականութեան մը:

Թուրքերը չեն գոհանար իրենց սեղմումներով ու կը շարունակեն ձերբակալութիւններ կատարել աստ ու անդ: Այսպէս, փախուստի մէջ գտնուող Ժիրարարի աշակերտներէն Պօղոս Թըղլըեան, Յովհաննէս Գարասարգիսեան ու Տէր Սահակ Տէր Գէորգեան կը ձերբակալուին ու կ'աքսորուին Էտրինք:

Չորք-մարգարանցիներ կը զգան թէ ահաւոր փոթորիկներու նախօրեակին կը գտնուին աշխարհի այս անկիւնը:

Ըստ զարգացող դէպքերու ականատեսներու միահամուռ վկայութեանց, 1892էն սկսեալ Հնչակեան կուսակցութիւնը գործի կը լծուի զինեալ ապստամբութեան մղել ամբողջ շրջանի հայութիւնը՝ Սուեթիայէն մինչեւ Զէյթուն ու Հաճըն: Այս նպատակով Կիլիկիոյ գանազան գիւղերն ու շրջանները կ'առաքուին բազմաթիւ գործիչներ, որոնցմէ խարբերողի Վարդան Խանիկեանն ու մշեցի Մխո Շահէն կու գան Չորք-Մարգարան: Այս նուիրեալները, կատարելապէս ծպտուած, գիւղաքաղաքին մէջ կը գտնեն տասնեակ մը հետեւորդներ Ժիրարարի աշակերտներէն կամ հետեւորդներէն: Վերջիններս ալ իրենց կարգին երկու յեղափոխականները կը տանին ու գաղտնօրէն կը տեղաւորեն Թորոս Օղլու Պօղոսին տունը՝ Չորք-Մարգարանի արեւելեան կողմը:

Արեւմտահայութեան գլխուն գալիք աղէտը աւելի լաւ գիտակցող այս հայրնասէրները, աշխատանք կը տանին համոզել երիտասարդները թէ հեռու չեն ջարդի ու կոտորածի օրերը, ուստի պէտք է աշխատին ձեռնարկել ինքնապաշտպանութեան անհրաժեշտ նուազագոյն միջոցներու: Տղաքը կը սկսին տենդագին ու կարելի գաղտնապահութեամբ աշխատանքի լծուիլ գանազան միջոցներով, կաշառքով եւ այլ կողմնակի ձեւերով ձեռք բերել վառօդ, գէնք ու զինամթերք: Այս գործունէութեան մէջ աչքի կը զարնէ Պետոյեան Պետիկ անունով արիասիրտ երիտասարդ մը, որ կը յաջողի էպպէզի կողմերէն Չորք-

Մարգարան հասցնել 30 օքքա թանկագին վառօդը (շուրջ 45 քկ): Իրօք որ առասպելական քաջութիւն, կազմակերպութեան մանաւանդ նուիրուածութիւն կը պահանջէր նման վտանգալից ձեռնարկ մը յաջողցնելը այնպիսի օրերուն, երբ չորս դին լրտեսներ կը վիստային:

Չորք-Մարգարանի երեւելիներէն կամ աղաներէն ոմանք տեղեակ կ'ըլլան յեղափոխականներու եւ տեղացի երիտասարդներու գաղտնի ձեռնարկներէն, երիտասարդներ, որոնք իրենց զաւակներն էին: Զգուշաւոր էին տարէջ երեւելիները, չէին ուզեր յաւելեալ առիթ տալ կատղեցնելու համար դաժան սուլթանի ճիւղ գործակալները:

Դարերու փորձառութիւնն ու Օսմանեան բռնատիրութեան տակ երկրորդ դասակարգի տեղ դրուած մեր տարէցները կ'որոշեն «խելքի հրաւիրել» գիղաքաղաքին «տաքարիւն երիտասարդները»...: Այս աղաներէն կազմուած պատուիրակութիւնը նախ խոհեմութիւն կը քարոզէ, բայց երբ կը տեսնէ որ չի յաջողիր համոզել անդամներուն զաւակները, Վարդանէն ու Մխո Շահէնէն կը պահանջէ ետանալ Չորք-Մարգարանէն, հակառակ պարագային կը սպառնայ լուր տալ կառավարութեան:

Յեղափոխականները իրենց կարգին ջանք կը թափեն համոզել երէցները, որպէզի գոնէ ինքնապաշտպանութեան համար նուազագոյն պատրաստութիւնը տեսնեն՝ ոչխարի հօտի նման չջարդուելու համար: Աղաները անդրդուելի կը մնան: Այդ պահուն պատկառելի պատուիրակութեան առաջնորդ Յակոբ աղա Քեհէեանի որդին՝ Մերուժանը ձեռքը դաշոյնին տանելով կ'ըսէ. «Նախ հայրս, յետոյ միւսները»: Միւս երիտասարդները քաջալերուելով Մերուժանին համարձակութենէն, ատրճանակին կը հանեն եւ ուղղակի կը սպառնան ըսելով. «Հայրե՛ր, եթէ այս երկու անձերուն բան մը պատահի, առաջին գոհերը դո՛ւք կ'ըլլաք»: Ծերունիները սարսափած տեղի կու տան ու զլուխնին օրօրելով կը վերադառնան իրենց տունները:

Չորք էին մեր աղաներուն չափազանցուած մտավախութիւնները, որովհետեւ Ապտիւլ Համիտի արիւնուռչտ քաղաքականութիւնը կը միտէր արեւմտահայութեան «լաւ դաս մը տալ», որպէսզի անգամ մըն

ալ առիթ չտար Եւրոպային խառնուելու կայսրութեան «ներքին գործերուն», ու միաժամանակ զգետնող հարուած մը իջեցնել հայ յեղափոխական շարժումներուն ու հայոց ազգային զարթօնքին:

Ճիշտ էին չորք-մարգարանցի տղաքը, որովհետեւ յառաջիկայ ամիսներուն թուրքեր չափազանց զգալի սկսան դարձնել իրենց ատելալաւ գզացումները: Յայտնի կը դառնար շուտով թէ «գազանը որս կ'ուզէր»: Արդարեւ, 12 Նոյեմբեր 1895ին թուրք խուժանը կը սկսի համախմբուել թրքական գիւղերու մէջ՝ Չորք-Մարգարանի ու շրջակայ գերագանցապէս հայաբնակ գիւղերու շուրջ, յարձակելու եւ ջարդելու նպատակով:

Կիլիկիոյ եւ Արեւմտեան Հայաստանի մէջ սկսած էին համիտեան կոտորածները, որոնք հարիւր հազարաւոր անմեղ հայերու կեանքը կը խլեն:

Վերոյիշեալ դէպքերուն մասին իր մեծերէն լսած յուշագրողը կը գրէ.

- 1895ին գետի պէս արիւն կը հոսի ներսի գաւառները ամէն տեղ: Զէյթունը բռնկած է, Չորք-Մարգարանը եւս ջարդելու հրահանգ տրուած է: Շրջակայ գիւղերու եւ ազարակներու հայ բնակչութիւնը սարսափի մէջ է...

12 Նոյեմբերին Չորք-Մարգարանի գիւղերէն Օճագլի եւ Էօգերլիի հայութիւնը առաւօտեան կը սկսի փախչիլ եւ ապաստանիլ Չորք-Մարգարան, խուսափելու համար մահաբեր պաշարումէն: Քիչ ետք սուրհանդակ մը լուր կը բերէ թէ Օէգերլիցի Լեփեճեան եւ Փեթեքեան ընտանիքները չէին կրցած հեռանալ վտանգաւոր գօտիէն: Մխո Շահէնին հրամանով եւ առաջնորդութեամբ կարգ մը արծուասիրտ տղաք կը մեկնին մարտական անդրանիկ առաջադրանքը կատարելու եւ ստանալու իրենց կեանքի առաջին մարտական մկրտութիւնը...:

Երիտասարդներէն խումբ մը գինուած, ուրիշ խումբ մըն ալ գրաստներու գլուխը անցած կը մօտենան գիւղերուն: Զինեալները անմիջապէս կը դիրքաւորուին չորս կողմը, եւ իրենց հսկողութեան տակ կը սկսի բեռցնելու գործողութիւնը: «Երկու ժամուան ընթացքին բաւական ապրանք փոխադրեցինք», կը գրէ այս արշաւին մաս-

Շարք էջ 17

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԳԱՔՐԻԷԼ ԵՒ ՄԱՐԻԱ ՄՈՒՈՅԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐՈՒՆ ԴԵՐԸ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԵՋ

Շաբաթ 16-էն

նակցած Ս. Գարաբեղուպեան, «Բայց հազիւ գիւղին ծայրերը հասեր էինք, գիւղին միւս ծայրամասերէն թուրքերն ու քիւրտերը սկսան մտնել կարգ մը թաղեր ու կոտորատել տուններուն դռները»: Սկսած էր աւերն ու հրդեհումը: Հեռացող խումբին ետեւէ որպէս պաշտպան կը հսկէին Միսո Շահէնն ու վերի սողերու հեղինակը, երբ յանկարծ խումբ մը թուրքեր կ'ելլէին իրենց դէմ: «Անմիջապէս դիրքաւորուեցանք», կը շարունակէ պատմել մասնակից հեղինակը, «Այդ պահուն Միսո Շահէն գոռաց. «Հեռացէ՛ք, եթէ չէք ուզեր շան սատակ դառնալ»: Զինեալ թուրքերը հեռացան, առանց ետեւ նայելու: Անոնց վախը երկու հայերէն ինծի գարմանք պատճառեց», կ'ըսէ յուշագրողը:

Թուրքերը թէ՛ Էօզերլիի եւ թէ՛ Օճագլլիի հայապատկան տունները եւ ազարակները կողոպտելէ ետք կը հրկիզեն տունները, որոնց գերաններուն ճայթիւններուն ձայները կը հասնէին մինչեւ Չորք-Մարզպան:

Թուրք ու քիւրտ խուժանը բան մը չէր հասկցած անմարդաբնակ գիւղերը հրկիզելէն, հայու արիւն չէր կրցած թափել ու տիրանալ դեռատի աղջիկներուն եւ հարսերուն: Անոնց կիրքերը չէին հանգստացած, ուստի կը յարձակին Չորք-Մարզպանի վրայ: Բայց հոս ինդիրը բոլորովին այլ կերպարանք կ'առնէ: Յարձակող խուժանը կը դիմաւորուի քարէ պատնէշներու ետեւ ամրացած չորք-մարզպանցիներու դիպուկ գնդակներով, որոնք գետին կը փռեն պիղծ թշանմիին անշնչացած մարմիններն ու վիրաւորները...: Հայեր ցոյց կու տան անհաւասար դիմադրութիւն: Միսո Շահէնը անձնապէս կը մասնակցի ու կը ղեկավարէ գինեալ դիմադրութիւնը: Մինչ երիտասարդներ կը կրակեն իրենց դիրքերէն, ան իր հեռարձակ հրացանով կը ցատկէ դիրքէ դիրք ու պատնէշէ պատնէշ, ու կը կրակէ դիպուկ կերպով, այն տպաւորութիւնը տալով թէ հայերը գինուած են բազմաթիւ հեռարձակ հրացաններով:

Հայերը գարմացած կը մնան քանի մը փամփուշտներու թողած արդիւնքէն: Ոգեւորուած են հիմա չորս-մարդպանցիները, ու վերա-

կանգնուած է ինքնավստահութիւնն ու կռուելու պատրաստակամութիւնը:

Մինչեւ իրիկուն շրջակայ ազարակներէն ու գիւղերէն Չորք-Մարզպան կ'ապաստանին 10,000էն աւելի հայեր, որոնք կը տեղաւորուին գիւղաքաղաքին ընտանիքներուն տունները:

Այսպիսով, առաջին օրը թուրքերը գոհեր տալով կը քաշուին իրենց ուղիները:

Յաջորդ օրը, 13 Նոյեմբերին, թուրքերը երկրորդ փորձ մը կը կատարեն նախորդ օրուան վրէժը լուծելու նպատակով: Մինչ այդ առաւօտ կանուխ, խումբ մը գինեալ հայեր նախորդ գիւղերուան իրենց բարձրացուցած պատնէշները ստուգելու կ'ելլեն: Այդ պահուն կը նկատեն կատրած թուրքերու ամբոխ մը, որ կը յառաջանայ շուկայի ուղղութեամբ: Առջեւէն քալողները ճիհատի դացողի պէս՝ թմբուկներով, ոռնոցներով, վայրահաչուութեամբ ու հրացանաձգութեամբ կը խլացնէին շրջապատը, նպատակ ունենալով ահ ու սարսափի մատնել «կեաւուրները»: Մեր փոքրաթիւ հայ տղաքը չեն ընկրկիր: Որսի հրացաններով գինուած խումբ մը, յայտնի նշանառու վահան Չոճուքի հրամանատարութեան տակ, կը մնայ դիրքերուն վրայ, մինչ ուրիշ խումբ մը, առաջնորդութեամբ Միսո Շահէնի, կը յառաջանայ շուկայի կողմը, արեան գնով պաշտպանելու համար Չորք-Մարզպանի սիրտը նկատուող շուկան: Կը պարպուին առաջին փամփուշտները շուկայի դիրքերէն ու պատնէշներէն: Խուժանը պահ մը կը շքի ու կ'անշարժանայ: Առիթէն օգտուելով՝ Միսոն այժեամի մը պէս կը ցատկէ վարի թաղի եկեղեցու դիրքերը, եւ իր հրաշագործ հրացանով կը սկսի կրակել խուժանին վրայ, որ կը կարծէ թէ հայեր գինուած են արդիական զէնքերով:

Անհաւասար էր կռիւը: Թուրք յարձակող խուժանը թիւով կը գերազանցէր հայերը: Հետեւաբար, անոնք շուկային վրայ կը փորձեն յարձակիլ քանի մը ուղղութիւններով: Մեր սողոց համար անկարելի կ'ըլլայ պատնէշներէն դուրս գալով վրձնակներուն առջեւը կտրել, բայց կը շարունակեն մնալ իրենց դիրքերուն մէջ, ու շուրջ հինգ ժամ զբաղցնել յարձակողները: Թուրքերը կ'աղաղակէին Մուհամմէտին անունը տալով, կամաց-կամաց կը

մօտենան վարի թաղի եկեղեցիին, ծայրամասերուն մօտ գտնուող անջատ խանութներուն ու տուններուն, որոնցմէ մի քանի կը յաջողին կրակի տալ: Այդ պահուն, Միսոն անձնուրացութեամբ, կատաղած առիւծի մը նման դուրս կու գայ պատնէշներէն, ու խառնուելով խուժաններէ բաղկացած անջատ խումբի մը, կը սկսի քիւրտերէնով գոռայ ու խուժանը հրաւիրել հայկական դիրքերու ուղղութեամբ: Այստեղ, մինչեւ թշնամին հասկնար ռազմավարական խաղը, 14-15 տարեկան Յովհաննէս Շաքլեան կը զգեստնէ առաջին թուրքը: Շահէնը կը վերադառնայ իր դիրքը, եւ այնտեղէն քանի մը կրակոցներով կը յաջողի հեռացնել մնացեալները:

Ութ օր տեւած ինքնապաշտպանութեան հաշուեկշիռը սա պատկերը կը ներկայացնէ.

Վնասներ
ա. Զգալիօրէն կը վնասուին կամ կ'աւերուին Էօզերլիի եւ Օճագլլը գիւղերու հայապատկան տունները:

բ. Կը վիրաւորուին տասնեակ մը համաքաղաքացիներ, որոնցմէ երկուքը՝ Եաղըլըզճը Պետրոսն ու Ճատտար Օղլուն կը նահատակուին ու կը թաղուին եկեղեցու բակին մէջ:

գ. Անարգաբար կը սպանուին ծերունի «Վանեսճիկ» ու քանի մը անբախտ հողագործներ, որոնք ազարակները մնացեր էին:

դ. Կ'այրին վարի թաղի եկեղեցուց կից քանի մը տուններ:

Օգուտներ
ա. Կը փրկուի ամբողջ շրջանի հայութիւնը գանգուածային կոտորածէ (շուրջ 30,000):

բ. Կը փրկուի Չորք-Մարզպանի վաճառաչահ շուկան:

գ. Հայ երիտասարդներ ձեռք կը բերեն ռազմական եւ ինքնապաշտպանողական հարուստ փորձ:

դ. Կը բարձրանայ շրջանի հայութեան ինքնավստահութիւնը սեփական կարողութեանց հանդէպ:
Իսկ ի՞նչ կը պատահի Միսո Շահէնին ու վարդան Արիկեանին: Կառավարիչ փաշան իր մեկնումին պահուն շուրջ գտնուող թուրքերուն ու հայերուն կը սպառնայ բանտարկել, եթէ խլրտումներու առիթ տան (ոճրագործն ու գոհը նոյն չափանիշով դատելու թրքական սովորական մեթոտ...), ապա մասնաւորաբար հայերուն դառնա-

լով կը հրահանգէ որ իրենց մէջ գտնուող «օտարականները» հեռացնեն:

Անշուշտ «օտարականները» Միսոն ու վարդանն էին, որոնք հասկացողութիւն ցոյց կու տան ու տեղացի հայ կտրիճներու գործակցութեամբ գիշերով Ալեքսանտրէթի կողմերը կը հեռանան, անկէ ալ գաղտնօրէն Կիպրոս կը փոխադրուին:

Յանուն պատմական իրակաւութեան ու յարգելու համար Միսո Շահէնի ու վարդանի պատմական դերը, արժէ այստեղ մէջբերել Միսոյի «սաներէն» Մարտիրոս Տէր Ստեփանեանի յուշերը:


«1895ին էր: Արիւնի հոտ կու գար Թրքահայաստանի բոլոր անկիւններէն: Մահուան մղձաւանջը կը սաւառնէր նաեւ Կիլիկիոյ վերեւ: Մեր գիւղը, գուտ հայ բնակչութիւնով, կ'ապրէր լիովին այդ մղձաւանջը, երբ երկու չեղափոխական երիտասարդներ եկան գիւղ գաղտագողի:

Անոնցմէ մէկն էր Միսո Շահէն (Սեֆերեան), միւսը՝ վարդան (Յարութիւն Նանիկեան):

Առասպելական քաջութեամբ օժտուած էր Միսո Շահէն, որ մշցի էր, որ բազմաթիւ կռիւներ մղած էր թուրքերու եւ քիւրտերու դէմ, որ բազում անգամ ձեռքաւարտուած ու բանտերէն փախուստ տուած էր: Վերջին փախուստը կատարած էր Աքիայի բերդէն: Ես իր մասին լսած էի Պոտրոնի բերդին մէջ, իրեն բանտակից եղած յոյն չեղափոխականներէն: Քիւրտի տարագուհէր: Ոլորուն փաթթոց մը կը կրէր՝ թաղիքէ քիւլահին շուրջ: Թաւ յոնքերուն տակ խորը ինկած սեւ աչքերուն տակ կը մխար դեռ Սասունի ու Մշոյ դաշտի հայոց կոտորածին վիշտը: Խօսելու համար քիչ կը բանար բերանը, զոր գոցած էին իր լայնանիստ պէխերը: Զէնքի մարդ էր Միսո Շահէն, մինչ վարդան տրիբուն էր, համոզիչ լեզու ունէր ու կը քարոզէր հայրենասիրութիւն, ազգասիրութիւն, քաջութիւն, միութիւն ու համերաշխութիւն՝ վտանգին հանդէպ:

Գիւղին լեռնամերձ վայրը ընտրած էին անոնք իբրեւ գործունէութեան յարմարագոյն վայր, ճնշումի մը պարագային քաշուելու համար լեռ, որով վտանգուած չէր

Շաբ.ը էջ 46



Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ ԱՆԴՐԱՆԻԿ ԿԵՆՏԵԱՆ ՏՈՔԹ. ԵՂԻԿ ԸՆԹԵՃԵԱՆ

Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան գաղափարախօս ղեկավարներու շարքին մէջ իր վաստակաշատ տեղը ունի Անդրանիկ Կէնճեան:

Ա. Կէնճեան ծնած է 1873-ին, Ատապազար:

Կը յաճախէ ծննդավայրի Արամեան դպրոցը:

Մեծապէս հոգ կը տանի իր ինքնագրագրաման: Որպէս անյազ ընթերցող, կը խորանայ իրաւաբանական, ընկերաբանական եւ գաղափարախօսական նիւթերուն մէջ: Երիտասարդ տարիքի իր գաղափարական որոնումներուն մասին ան կը գրէ. «Անփորձ շրջանի այդ գաղափարական եռեւեփին մէջ սակայն, ստոյգն այն է, որ Ատապազարը՝ որպէս ազգային հայրենիքէն դուրս կամ օտար քաղաք, մեզ ատապազարցիներու համար, ազգերու իրաւահաւասարութեան գաղափարը ամէնէն բանաւորը կը թուէր, եւ իտէպիստ հասակի յատուկ մարդկայնական լայն շունչով կ'ուռէին մեր կուրծքերը ընդդէմ ամէն հարստահարութեան, հալածանքի կամ բռնութեան, ըլլան անոնք ներքին թէ արտաքին, քաղաքական, ազգային-ընկերական» (1):

Ա. Կէնճեան կը զբաղի առեւտուրով: Իր պարկեշտ նկարագրին եւ իրաւաբանական հարցերու շուրջ ունեցած գիտելիքներուն պատճառով կը նշանակուի Ատապազարի առեւտրական դատարանի պատուական դատաւորի պաշտօնին: Անոր հասարակական առաջին գործունէութիւնը կ'ըլլայ Ա. Հրեշտակապետ թաղի երիտասարդներով կազմութիւնը դպրոցասէր միութեան, որուն նպատակն էր Արամեան դպրոցի կարօտեալ աշակերտներու գրենական պիտոյքները հոգալ: Համիտեան իշխանութիւնները, երիտասարդներու այս խմբակը «զաղտնի եւ խռովարարական ընկերութիւն» մը նկատելով, կը ձերբակալեն զանոնք՝ շուրջ 30 հոգի: Ա. Կէնճեան եւ խումբին մեծ մասը, կարճ ժամանակ մը անց ազատ կ'արձակուին՝ մնացուն հսկողութեան տակ ըլլալու պայմանով: Սակայն խումբի անդամներէն Յարութիւն Ազատեան (Հայր Արթին) եւ Խորէն Երամեան (որոնք միեւնոյն ժամանակ մաս կը կազմէին Հնչակեան Կուսակցութեան) կը դատապարտուին համապատասխանաբար 9 ամսուան եւ 3 տարուան

բանտարկութեան՝ Իզմիրի բանտին մէջ (2):

Օսմ. Սահմանադրութենէն ետք կը սկսի Ա. Կէնճեանի ազգային-հասարակական-կուսակցական գործունէութեան բեղուն շրջանը:

1909 Մարտ 31ի յեղաշրջական շարժման ժամանակ, Ա. Կէնճեան պետական միջոցով կը գինէ 30 երիտասարդ, որոնք քաղաքացիական հազուստներով կը մասնակցին սահմանադրութեան պաշտպանութեան: «Նոյն ատեն, կառավարութիւնը քաղաքին պաշտպանութիւնն ալ յանձնած էր հայ ժողովուրդին, ինք չունենալով բաւարար ուժ: Այդ շրջանին ընկեր Պանդուխտ Ատապազար կը գտնուէր, քաղաքին պաշտպանութիւնը կատարեցինք եւ միանգամայն ուղմբ եւայլն պատրաստուած էր» (3):

Սահմանադրութեան շրջանին, Նիկողիմիոյ մէջ (Իզմիր, Օվաճըզ, Պարտիզակ, եւայլն), Ա. Կէնճեանի գործօն մասնակցութեամբ, Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը կ'ապրի կազմակերպչական վերելք եւ կը դառնայ շրջանի տիրական ուժը: Կուսակցական աշխատանքներուն կողքին Ա. Կէնճեան կ'ընտրուի ազգային մարմիններու անդամ, իսկ աւելի ուշ՝ Ազգ. Երեսփոխանական ժողովի անդամ, նոյն շրջանէն:

Եթէ մինչեւ Սահմանադրութիւնը Ա. Կէնճեան արձակ, չափածոյ եւ թարգմանական գրութիւններով կ'աշխատակցէր «Փունջ», «Ճերիտէ Շարքիէ», «Արեւելք», «Բիւզանդիոն», «Մաղիկ», «Հայրենիք», «Լոյս», «Արեւելեան Մամուլ», «Պարտիզակ» եւ «Փարոս» թերթերուն, ապա, Սահմանադրութենէն ետք ան կ'աշխատակցի Հնչակեան մամուլին՝ «Ապագայ», «Նոր Աշխարհ» եւ «Կայծ»՝ գաղափարախօսական բնոյթի յօդուածներով: 1910-11, Ասոյի (Տիգրան Օտեան) եւ Բանուորի (Երուանդ Թոփուզեան) հետ կը խմբագրէ «Երկիր» շաբաթաթերթը:

1912-ի Օսմ. երեսփոխանական ընտրութիւններուն, Ա. Կէնճեան, որ կը հաւատար, թէ հակա-իթիհատական պայքարի համար «ընտրութիւնը փրփականտայի միջոց մըն էր պարզապէս» (4), Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան կողմէ թեկնածու կ'առաջադրուի ընդդէմ իթիհատի թեկնածուին, Իզմիրի շրջանէն: Բ. կարգի ընտ-

րողներու փոքր տարբերութեամբ մը երեսփոխան կ'ընտրուի իթիհատական վահան Պարտիզականեան, որուն թիկունք կեցած էին ինչպէս իթիհատը, այնպէս ալ ՀՅԴ-ն, Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը ու պետական ամբողջ վարչամեքենան: Ընտրական այս արդիւնքը «Նոր Աշխարհ»-ը կը նկատէ «բարոյական յաղթանակ» (5):

1914 Հոկտեմբերին, հնչակեաններու ընդհանուր ձերբակալութեան, կը ձերբակալուի նաեւ Ա. Կէնճեան: Անոր տունը կը խուզարկուի եւ ձեռագիրները կը զրուռին: 12 օր կը բանտարկուի ու բանտակից կ'ըլլայ քսաններէն վանիկին, Տոքթ. Պէննէին, Ռուբէն Կարապետեանին, Սմբատ Գլըճեանին եւ Աբրահամ Մանուկեանին: Ա. Կէնճեան կ'ապացուցէ, որ Մալիս-Յունիս ամիսներուն իր բացակայութիւնը Պարտիզակէն կապուած էր իր առեւտրական գործերուն հետ եւ կուսակցական նպատակներ չէր հետապնդեր: Ազատ կ'արձակուի:

1915 Ապրիլին դարձեալ կը ձերբակալուի եւ Ատապազարի մտաւորականներու, կուսակցական գործիչներու եւ երեւելիներու առաջին կարաւանով կը բռնէ աքսորի ճամբան: Հետզհետէ խումբին կուզան աւելնալ աքսորական նորանոր խումբեր: Յուլիսի սկիզբը, մինչ աքսորականներու խումբը կը գտնուէր Սուլթանիէ քաղաքը, Ա. Կէնճեանի հետ կը պատահի նշանակալի դէպք մը, որ իր տեսակին մէջ եզակի է հայ աքսորի պատմութեան մէջ: Ան, Կ. Պոլսէն եկած հրամանագրով մը ետ կը կանչուի իր աքսորէն... որպէսզի դատուի:

Ինչո՞ւ էր այս հրամանագիրը: Հազարաւոր մտաւորականներ սպաննող, ժողովուրդ մը ամբողջ ցեղասպանութեան ենթարկող իթիհատի իշխանութիւնը, ինչո՞ւ Ա. Կէնճեանի պարագային դատական վճիռ կայացնել կ'ուզէր...:

Ա. Կէնճեան, աքսորի ճամբային կը բռնէ աքսորի յետընթաց ճամբան, խառացուած հսկողութեան տակ: Վերադարձի ճամբան կ'ըլլայ աւելի տառապալի: Ատապազարի մէջ կը բանտարկուի կալանատան վերածուած Ս. Կարապետ եկեղեցուց եւ անոր չարակից Ներսէսեան վարժարանին ներքնայարկին մէջ՝ ուր արդէն բանտարկուած էին մեծ

թիւով ատապազարցի կուսակցական եւ հասարակական գործիչներ: Տանջանքներու եւ սոսկալի բռնածեծի միջոցով կը փորձուի Ա. Կէնճեանէն խոստովանութիւններ կորզել պահուած գէնքերու մասին: Ան կը մնայ անդրդուելի: Կ. Պոլսէն յատուկ այս պարտականութեան համար Ատապազար դրկուած Իպրահիմ պէյ. «Պաղարիւն անտարբերութեանս չկրնալով հանդուրժել, կը կատողի ու կը սկսի դարձեալ գանակոծել զիս, այս անգամ այլեւս անխտիր ամէն կողմէս կ'իջնեն հարուածները, գլուխս, դէմքս, ականջիս, եւայլն: Գլուխս կը պատուրի եւ կը սկսի արիւնը հոսիլ», կը գրէ Ա. Կէնճեան ու կ'աւելցնէ. «Ճիշդ երեք շաբաթ բանտին մէջ անկողնոյ կը ծառայեմ, առանց մէկ կամ միւս կողմս կարենալ դառնալու, քանի որ ամբողջ մարմինս կաս կապոյտ փտած էր ծեծին տակ» (6): Անոր կը ստիպեն ստորագրել «Անկախ Հայաստանի մը կազմութեան համար Ս. Սապահ Գիւլեանի հետ ունեցած յարաբերութեան եւ գործունէութեան մասին Անդրանիկ Կէնճեանի կողմէ տրուած տեղեկութիւններ», վերնագիրը կրող գրութեան տակ: Ա. Կէնճեան կը մերժէ ստորագրել այդ ու ինք կը պատրաստէ չորս էջոց վկայութիւն մը, ուր ամբաստանութեան տակ կ'առնէ իթիհատական իշխանութիւնը:


Բանտարկութեան այդ ծանր օրերուն, անոր այցելութեան եւ մնաք բարեւի կուզան ընտանիքին անդամները... որովհետեւ անոնց եւս տրուած էր աքսորի հրահանգ: Ա. Կէնճեան, այդ ծանր օրերու իր զգացումները թուղթին կը յանձնէ այսպէս...-

«... Կ'երթան...
Բանտս կը քաշուիմ, այլեւս ծննդավայրիս մէջ իսկ օտար մըն եմ, ո՛չ տուն ունիմ, ո՛չ ընտանիք, ո՛չ ազգական եւ ոչ իսկ հայ, հայրենակից...»

Կը փոճկեմ բանտակից ընկերներու մօտ, կու լամ եւ կը խորհրդածեմ...» (7):

1915 Յուլիսի վերջը, Ա. Կէնճեան, Խորէն Երամեան, Գրիգոր Գայեան (դաշնակցական), Յովակիմ Գապաքեան եւ Միհրան ձիգմէճեան երկար շղթայով մը իրար շղթայուած կը տարւին Իզմիրի

Շաբ.ք էջ 19



ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԵՆՃԵԱՆ

Շարունակում է 18-էն

բանտը, ուր վահան ժամկոչեանի գլխաւորութեամբ բանտարկուած էին խումբ մը այլ հնչակեաններ: Քանի մը օր ետք, Ա. Կէնճեանի խումբը, որուն կը միանան Արթաքի Գլըճեան, ժամկոչ Կարապետ եւ Կարապետ Փաթուկեան կը տարուին Կ. Պոլսոյ պատերազմական ատենանի բանտը՝ հոն ուր բանտարկուած, դատուած եւ կախաղան հանուած էին Քսանները:

Նախնական հարցաքննութիւններէն կը պարզուի, որ ամբողջ հարցը կը կայանայ ՍԴՀԿ Կէսօտէնչէի 7-րդ համագումարին առնուած դաւադրական գործունէութեան որոշումներուն: Այս հոռուով ալ կ'ընթանայ դատավարութիւնը, որ կ'ունենայ երեք նիստ: Փաստօրէն, սա հնչակեաններու երկրորդ դատավարութիւնն էր՝ որ պատմագրութեան կողմէ արժանի ուշադրութեան արժանացած չէ:

Դատարանին առջեւ կանգնած ութ մեղադրեալները կ'ամբաստանուին «Անկախ Հայաստանի կազմութեան եւ անջատողական գաղափարներու համար, ռումբեր պատրաստող խորհիւն Երամեան, եւ այդ պատրաստութեան գիտակցութիւնն ունեցող եւ դիւրացնող Յովակիմ Գապարեան, նոյն այդ նպատակին համար գինավաճառութիւն ընող Միհրան ձիգմէճեան, իրենց մօտ ռումբ պահող Գրիգոր Գայեան եւ Կարապետ Փաթուկեան, այդ մասին անոնց գիտակցաբար դիւրութիւն տուող Արթաքի Գլըճեան, ժամկոչ Կարապետ եւ կուսակցական-քաղաքական գործիչ Անդրանիկ Կէնճեան, ամէնքն ալ միեւնոյն նպատակին ձգտող իրենց արարքներուն համար, պատժական օրէնագիրքի 51-րդ յօդուածի 2-րդ հատուածի տրամադրութիւններուն համաձայն պատիժ կը պահանջէ»: Պահանջուած պատիժը մահապատիժն էր:

Դատավճիռը կը գործադրուի խ. Երամեանի, Գ. Գայեանի եւ Կ. Փաթուկեանի հանդէպ, որոնց կողքին կուսակցական հանգանակութեան մասնակցելու ամբաստանութեամբ դատապարտուած Հրանդ Աղաճանեան կախաղան կը հանուին Սուլթան Պալատի հրապարակին վրայ, 1916 Յունուարին:

Ասոնց մէջ իւրօրինակ պարագայ էր Կարապետ Փաթուկեանի պարագան: Ան նախապէս ձերբակալուած էր Քսաններու դատավարութեան ժամանակ եւ անոր ուսե-

րուն կը ծանրանար Կէսօտէնչէի Համագումարին մասնակցելու եւ անոր որոշումներուն տակ ստորագրելու ամենաճանր ամբաստանութիւնը: Սակայն, ան կրցած էր մահապատիժէն ազատիլ իր ունեւոր ազգականներուն տրամադրած «ամենափրկիչ» կաշառքին շնորհիւ: Այս անգամ սակայն ոչ մէկ բան կը «փրկէ» անոր:

Ա. Կէնճեան վերստին կը բռնէ աքսորի ճամբան դէպի Տէր Զօր: Զմբան ցուրտին, անպատրաստ եւ կիսաքաղց, կը վարակուի թիֆոյիտով: Այդ վիճակին մէջ, Քիւրտ Պաղչէի իր կալանավայրէն կը յաջողի արկածախնդրական փախուստ մը կազմակերպել դէպի Հալէպ, ուր կը հասնի Մարտի սկիզբը ու կը թաքնուի Ազգ. Առաջնորդարանի շէնքին մէջ: Գրաւոր կապ կը պահէ Մէսքէնէ գտնուող կնոջը հետ եւ անորմէ կը տեղեկանայ, թէ գաղթի ընթացքին գոհուած են դուստրը, մեծ մայրը եւ եղբօր ընտանիքին անդամները: Ազգ. Առաջնորդարանը խուզարկութեան կ'ենթարկուի եւ ան կը ստիպուի թաքնուիլ այլ վայրեր: Կը յաջողի կինը, երկու որդիներն ու եղբօր դուստրը փախցնել աքսորավայրէն եւ բերել Հալէպ իր մօտ: Ա. Կէնճեանի թաքստոցը խուզարկման կ'ենթարկուի եւ ան վերստին կը ձերբակալուի, կը բանտարկուի ու խիստ հակողութեան տակ կ'աքսորուի Տէր Զօր: Պատճառը՝ ներքին գործոց նախարարութեան ղրկուած հեռագիրն էր, ուր կ'ըսուէր. «Անդրանիկ Կէնճեան, որ իր 4 ընկերներով դէպի Տէր Զօր սէվք եղած է շուրջ վեց ամիս առաջ, իբր անկախ Հայաստանի կազմութեան անջատողական յեղափոխական (եւ որուն միւս ընկերները ի Պոլիս կախաղան հանուեցան), ցարդ Տէր Զօր չէ հասած: Հալէպի շուրջ փախուստ տուած ըլլալ կը հաստատեն ոստիկանական սէվքաթի քննութիւնները: Պէտք է ուրեմն խստիւ հետապնդել եւ անմիջապէս ղրկել որոշեալ տեղը» (8):

Տէր Զօրի ճամբուն վրայ, Պապ գիւղին մէջ, Ա. Կէնճեան վերստին փախուստ կու տայ: Շրջան մը փախստական մնալէ ետք, Արամ Անտոնեանի եւ Ժիրայր Պասմաճեանի օգնութեամբ, կեղծ փաստաթուղթով կը տեղափոխուի Դամասկոս: Այդ դժուարին տեղափոխութեան ժամանակ կը ստիպուի իր կրտսեր որդին իր հետ չտանիլ, որ կու լայ ու կ'աղերսէ: «Այս արահաւիրքներէն անցնող եւ ապ-

րողներու համար, չխելագարուիլն ալ հրաշք մըն է» (9), կը գրէ Ա. Կէնճեան:

Շուրջ տարի մը փախստական ու անօգնական կեանքէ անցնելէ ետք, 1917 Օգոստոսին, աշխատանք կը գտնէ երկաթուղագիծի շինարարութեան մէջ, որպէս հունգարացի տնօրէն Հայտուլի քարտուղարը: Իր պաշտօնին բերումով ան տեղեակ կ'ըլլայ թրքական իշխանութիւններուն կողմէ շրջաններ յղուած հեռագիրներուն, որոնցմէ, պատերազմական նախարար Էնվեր փաշային պատկանող յոյժ կարեւոր երկու հեռագիրներ ան կը մէջբերէ «Հալածականի Յուշեր» գիրքին մէջ:

1918 Սեպտեմբերին Դամասկոս կը գրաւուի անգլիական բանակին կողմէ: Ա. Կէնճեան անմիջապէս կը լծուի ազգային-հասարակական բուռն գործունէութեան: Հոկտեմբերին, իր նախաձեռնութեամբ կը կազմուի Ազգային վարչութիւնը կը ստանձնէ ան: «Գործ՝ ո՛չ թէ խօսք» կարգախօսով գործող Ազգ. վարչութիւնը, իր աղքատախնամի, որբախնամի, այրիախնամի եւ մարդահամարի յանձնախումբերով փաստօրէն կը դառնայ հայ գաղթականութեան կարիքները հոգացող առաջին ազգային մարմինը: «Շատ ծանր էր հարկաւ ե՛ւ պատասխանատուութիւնը, ե՛ւ գործադրութիւնը այս գաղափարին: Բայց առանց ըրալ կորսնցնելու պէտք էր սկսիլ գործի: Ազգային ո՛չ մէկ կազմակերպուած մարմին կար. ամէն բան նոր ի նորոյ կազմելու, ամէն ինչի նոր ի նորոյ ձեռնարկելու էր եւ մանաւանդ բազմապահանջ պէտքերուն մէջ առանց դատաւորում դնելու՝ միաժամանակ ամէնքին ալ գոհացում տալու ընդթել պէտք է ունենար առաջին քայլերնիս» (10), կը գրէ Ա. Կէնճեան:

Այդ շրջանին Ա. Կէնճեան կը նախաձեռնէ «Հայ Կեանք» անունով թերթի մը հրատարակութեան, որ ձեւով մը գաղթական խլեակներուն միջեւ պիտի խաղար կապի դերը: Թերթը իր ընթերցարան-լսարանով, գիշերային դասընթացքով եւ տեղեկատու դիւանով պիտի ըլլար նաեւ մտաւորական դպրոց մը: Վերջին պահուն, իշխանութիւնները արհեստական պատճառներով հրատարակութեան արտօնութիւն չեն տար:

1918 Նոյեմբերին, Դամասկոս գտնուող կիլիկեցիները, ընդհա-

նուր ժողովի մը ընթացքին կ'ընտրեն մարմին մը, որուն նպատակն էր կամաւորագրութեան, քաղաքական շարաբերութեան եւ այլ միջոցներով նպաստել Կիլիկիոյ մէջ ինքնավարութեան հաստատման: Ա. Կէնճեան կ'ընտրուի այդ մարմնին ատենապետ: Իր գոյգ պաշտօններուն բերումով ան կ'ունենայ յարաբերական լայն գործունէութիւն հոգատար իշխանութեան ներկայացուցիչներուն, Սահակ կաթողիկոսին, առաջնորդ Պետրոս Սարաճեանի, Պողոս Նուպար փաշայի, Եգիպտոսի Հայ Ազգ. Միութեան հետ, եւ այլն: Կ'ունենայ նաեւ յաճախակի հրապարակային ելոյթներ: 1918 Դեկտեմբերին տեղի կ'ունենայ Գատիմ վրանաքաղաքին մէջ ծնած 43 նորածիններու հաւաքական կնուները: Այս առթիւ, Ա. Կէնճեան կը գրէ. «Հայ վերածնունդի հրաշքն էր, որ կը սկսէր մարմնաւորել արդէն իսկ, տառապած աչքերուս առջեւ: Սգաւոր կուրծքս կը սկսէր ուռիլ եւ նոր կեանք ներգգալ» (11):

Ա. Կէնճեան վերջնականապէս ապահով գաղով, կապ կը պահէ Ս. Սապահ Գիւլեանի հետ եւ կը յայտնէ մեծ արհաւիրքէն իր ազատած ըլլալուն մասին: «Երիտասարդ Հայաստան», «Թանկագին ընկերոջ ազատութեան համար աւելի քան ուրախ» լուրը կը հաղորդէ, հակիրճ տալով նաեւ Ա. Կէնճեանի կուսակցական անցեալին ու պատերազմի ընթացքին անոր կեանքին մասին տուեալներ (12):

1919 Մարտին, միակ հայը ըլլալով մաս կը կազմէ «Նպաստի եւ Ներգաղթի Տնօրէնութեան» Դամասկոսի մասնաճիւղի բազմազգեան մարմին: Իր այս պաշտօնով կ'ացցելէ Երուսաղէմ, Պէյրութ, Գահիրէ, Ատանա, Հալէպ, Մերսին, եւ այլն: Կը հաստատուի Ատանա եւ հաշուապահի պաշտօն կը վարէ Ֆրանսայի Ընդհանուր կառավարչութեան Էնթակայ միեւնոյն տնօրէնութեան մէջ:

Կը սկսի Ա. Կէնճեանի Կիլիկեան շրջանի ազգային-քաղաքական-կուսակցական բուռն գործունէութեան շրջանը:

1920-21-ին, իր իսկական անունով, անստորագիր եւ «Գրող» ծածկանունով Ա. Կէնճեան կ'աշխատակցի «Տաւրոս»ին: Կիլիկիոյ քաղաքական անցուղարձերուն նուիրուած անոր վերլուծական յօդուածները, ընթերցող հասարակութեան

Շարք էջ 20



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԹՈՎՄԱՍ ԵՒ ԱԼԻՆ ԵԹԵՐԵԱՆ
ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՄԱՍԻՍ - 2013

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԵՆՏԵԱՆ

Շարունակում է 19-էն

կողմէ կը գտնեն լայն ընդունելու-
թիւն, սակայն կը ջղագրգռեն ֆրան-
սական հոգատար իշխանութիւն-
ները: Վերջիններու գրաքննչա-
կան մեքենան յաճախ կ'արգիլէ Ա.
Կէնճեանի յօդուածներուն լոյս ըն-
ծալովը:

Ա. Կէնճեան շատ շուտ կը
տեսնէ հայութեան հանդէպ ֆրան-
սացի վարած երկդիմի՝ իսկ աւելի
ուշ ամբողջապէս դաւաճանական
քաղաքականութիւնը եւ այդ սուր
կերպով կը քննադատէ իր գրաւոր
եւ հրապարակախօսական ելոյթնե-
րուն մէջ: Ան, «Ֆրանսական Քա-
ղաքականութեան Հետեւանքներ»
յօդուածին մէջ («Տաւրոս», 1920,
Յուլիս) կը գրէ. «Մենք չենք որ
«լիստի հարուած»-ի տպաւորու-
թիւնը պիտի կրէինք կապիտալիս-
տական դիւանագիտութեան եւ քա-
ղաքականութեան անակնկալ խա-
ղերուն հանդիսատեսն ըլլալով: Կի-
լիկիոյ մէջ Համաձայնական դաշ-
նակիցները կ'երեւի հայութեան մա-
տուցանել կ'ուզեն «արջի ծառա-
յութիւն», կամ «Յուդայի համ-
բոյր»: Որն ալ ըլլայ շնորհակալ
ենք, վասնզի եթէ դեռ կային
պուրժուական աշխարհի քաղաքա-
կանութեան սնանկութեան չհաւա-
տացող հայեր՝ ահա իրենց աչքով
կը տեսնեն» (13): Այլ առիթով մը
ան կը քննադատէ Ֆրանսացի Սոց-
իալիստ Կուսակցութեան օրկան
«Լ'Իմմանիթէ»-ն («Տաւրոս», 1920
Յունիս 24), գտնելով թէ. «Այո՛,
մենք լսած էինք պետական անձնա-
ւորութիւններու բերնէն, «Հայաս-
տանը տանք, բայց որո՞ւ, հոն հայ
չկայ», մոռնալով թէ ճիշդ այդ
նպատակաւ ջարդած էին 1.5-2
միլիոն հայեր: Բայց ընկերվարա-
կան օրկանէ՞ մը լսել նման արտա-
յայտութիւն պարզապէս զգուշի է»
(14):

Թաւազլոր ընթացող դէպքե-
րուն դիմաց ինքնուրոյնութիւն եւ
նախաձեռնութեան ոգի ցոյց տալու
համար, 1920 Օգոստոս 4ին, Հայ
Ազգային Խորհուրդը կը յայտարա-
րէ Կիլիկիոյ ինքնավարութիւնը:
Միհրան Տամատեանի գլխաւորու-
թեամբ կը կազմուի կառավարու-
թիւն, որուն մէջ Ա. Կէնճեան կը
նշանակուի ելեւմտական նախա-
րար: Ֆրանսական իշխանութիւն-
ները այդ կառավարութիւնը չեն
ճանչնար ու կը լուծարեն այդ:

Յառաջ երթալով իր դաւա-
ճանական քաղաքականութեան մէջ,
ֆրանսական հոգատար իշխանու-

թիւնը, 1920 Սեպտեմբերին կը
խափանէ «Տաւրոս» օրաթերթը,
Ախարճայի մէջ կը լուծարէ Սար-
գիս Արմաղանեանի գլխաւորու-
թեամբ կազմուած Հաճընին օգնու-
թեան մեկնելու պատրաստուող
կամաւորներու խումբը, կը հե-
տապնդէ ու կը ձերբակալէ հնչակ-
եան պատասխանատուներ Սեդրակ
Շահէնը, Սարգիս Արմաղանեանը,
Ֆիրուզ Խանգատեանը, Վահան Ժամ-
կոչեանը եւ ուրիշներ: Ֆրանսական
իշխանութիւններուն նպատակն էր
հարւածել կիլիկիականութեան մար-
տական ոգին՝ Հնչակեան Կուսակ-
ցութիւնը: Սակայն ան, իր այդ
նպատակը կը ծածկէ պոլշեւիկնե-
րու դէմ պայքարի քողին տակ:
Դժբախտաբար, հայ ազգ. միւս
կուսակցութիւնները, առանց հար-
ցին խորքը թափանցելու, միջ-
կուսակցական մրցակցութենէ մեկ-
նած, իրենց ելոյթներով երբեմն կը
նպաստէին այս նենգամտութեան:

Հակահայ այս քաղաքականու-
թեան որպէս հակազդեցութիւն,
հնչակեան երիտասարդներ ձեռնա-
ռումբեր կը նետեն Ատանայի նա-
հանգապետի բնակարանին եւ Իթի-
լաֆ կուսակցութեան ակումբին
վրայ: Այս դէպքերուն որպէս հեղի-
նակ, Ա. Կէնճեան կը ձերբակալուի
եւ գինուորական ատեանին կողմէ
անմիջապէս կը դատապարտուի
կախաղանի: «Իր գրասենեակին
պետը Ժ. Կիզ, իր անձով երաշխա-
ւոր կ'ըլլայ, վստահ ըլլալով թէ
զրպարտութիւն է: Ընկերը կ'ազա-
տի» (15):

Ա. Կէնճեան կը շարունակէ իր
ազգային-կուսակցական գործունէ-
ութիւնը: Նոյնմբերին ան կը մաս-
նակցի ՄԴ-ՀԿ Կիլիկիոյ Շրջանի
Պատգամաւորական Ժողովին: Դեկ-
տեմբերին, Սահակ կաթողիկոսի
կողմէ կը նշանակուի Հայ Ազգ.
Խորհուրդի անդամ, ուր ան կ'ընտր-
ուի մարմնի ատենապետ:

1921 Փետրուարին, իր աշխա-
տանքի տնօրէնը կ'իմացնէ, թէ
պէտք է իր հաշուետուութիւնը
ներկայացնէ Պէյրութի կեդրոնա-
կան մարմնին: Ա. Կէնճեան լաւա-
պէս կ'ըմբռնէ, թէ այս իրեն ուղղ-
ուած քաղաքավար աքսոր մըն էր:
Իր պընդունմանը վրայ ֆրանսա-
կան իշխանութիւնները կ'արտօ-
նեն, որ իրեն ընկերանան ընտանի-
քին անդամները: Մինչեւ մեկնիլը,
Ատանայի հնչակեան ակումբին մէջ
հրապարակային երկու բանախօ-
սութիւններով «կը պարզէ, թէ
ֆրանսական իշխանութեան կողմէ
Կիլիկիոյ լքուած վճռուած է, ուստի

Ազգ. Իշխանութիւնը եւ մասնաւոր-
աբար Հնչակեան Կուսակցութիւնը
փոթորիկին վերահաս ըլլալը զգա-
ցող նաւապետի մը դերը ստանձնե-
լու են: Ապրիլ 26ին Կիլիկիոյ
գլխուն սպառնացող վտանգին մա-
սին մուսլ խորհրդածութեամբ,
բայց մինչեւ վերջին վայրկեանը
իրեն վիճակուած պարտականու-
թիւնը անկեղծ, խիզախ եւ անկատ-
կերպով կատարած ըլլալու գի-
տակցութեամբ կը հեռանայ ընկ. Ա.
Կէնճեան Կիլիկիայէն» (16):

Կը հաստատուի Պէյրութ եւ կը
շարունակէ իր հասարակական գոր-
ծունէութիւնը: Սահակ կաթողիկո-
սին կողմէ կը նշանակուի բանագ-
նաց Սիսի կաթողիկոսութեան եւ
Երուսաղէմի Պատրիարքութեան մի-
ջեւ՝ վերջինիս պատկանող կարգ
մը թեմերն ու եկեղեցապատկան
կայրուածները Սիսի կաթողիկոսու-
թեան փոխանցելու հարցով: Ա.
Կէնճեան կը յաջողի իր այս առա-
քելութեան մէջ: 1926-ին, անդամ
կ'ընտրուի Լիբանանի առաջին գա-
ւառական Ժողովին, Ջահլէի շրջա-
նէն (Այս ընտրութիւնները կ'անց-
նին գեղծարարութեան միջնորդի
մը մէջ եւ կը նախագծեն գաղութին
ապագայ երկպառակութիւնները)
(17):

Կարճ ժամանակ մը անց, գա-
ւաղներուն բարձրագոյն կրթու-
թիւն ապահովելու համար կը մեկ-
նի Փարիզ. կը հաստատուի հոն եւ
յաջողորոյ տարիներուն կ'ունենայ
հասարակական-գրական բեղուն
գործունէութիւն: 1929-31 Բագ-
րատ Սիւնիքի եւ Վահրիճ Կէօքճեա-
նի հետ կը խմբագրէ «Հնչակեան
Մամուլ» շաբաթաթերթը: Կ'աշ-
խատակցի «Նոր Սերունդ»,
«Հնչակ», «Սուրիական Մամուլ»,
«Երիտասարդ Հայաստան», «Գի-
տական Շարժում», «Պալքանեան
Մամուլ», «Արձագանգ Փարիզի»,
«Նոր Երկիր», «Արարատ», «Հա-
յաստանի Կոչնակ» թերթերուն եւ
հանդէսներուն, ինչպէս նաեւ «Կի-
լիկեան Տարեցոյց», «Սուրիական
Տարեցոյց», «Հնչակեան Տարե-
գիրք», «Ուսանողաց Տարեգիրք»,
«Ամէնուն Նոր Տարեցոյցը» տարե-
գիրքերուն: Կ'օգտագործէ Դրանիկ,
Ներսէս, Զգայնիկ, Ատապազարցի,
Ա. եւ այլ ծածկանուններ (18):

1931-ին կը մասնակցի ՄԴ-ՀԿ
Ֆրանսայի Շրջանի Պատգամաւոր-
ական Ժողովին:

1934-ին կը մասնակցի ՄԴ-ՀԿ
9-րդ Համագումարին, Մարտէյլ,
ուր կը ներկայացնէ Կուսակցու-
թեան յառաջիկայ քաղաքական

գործունէութեան յատակագիծը
(platform):

1935-ին Փարիզի մէջ լոյս կը
տեսնէ Ա. Կէնճեանի «Լէօ եւ Հնչակ-
եան Կուսակցութիւնը» գիրքը, որ-
պէս «Հրատարակութիւն ՄԴ-ՀԿ Լի-
բանանի Վարիչ Մարմնին»: Այս
գիրքին մէջ, Ա. Կէնճեան մարքսիս-
տական դիտանկիւնէն կը քննադա-
տէ Լէօ-ի «Թրքահայ Յեղափոխու-
թեան Գաղափարաբանութիւնը»
գիրքին մէջ տեղ գտած պատմագ-
րական հայեացքները, յատկապէս
ինչ կը վերաբերի հայ ազգային-
ազատագրական պայքարի զնա-
հատման հարցին: Ուշագրաւ պա-
րզան այն է, որ Լէօ-ի հակադի-
տական հայեացքները բացի Ա.
Կէնճեանի սոյն աշխատութենէն,
սիւրբաբան պատմագրութեան
կողմէ լուրջ հակահարուածի ար-
ժանացած չեն, երբ անդին, Լէօ-ի
հեղինակութենէն եւ անոր պատ-
մագրութեան վրայ ձգած ժխտա-
կան ազդեցութենէն շատ աւելի
պակաս հեղինակութիւններու գրա-
կան թէ պատմական աշխատու-
թիւններ արժանացած են թեր ու
դէմ շատ աւելի լայն արձագանգի:

1936-ին, դարձեալ Փարիզի
մէջ, լոյս կը տեսնէ Ա. Կէնճեանի
«Ազգային Հարց եւ Տաճկահայաս-
տան» գիրքը:

Մինչեւ ծերութիւն, Ա. Կէնճե-
ան իր մասնակցութիւնը կը բերէ
հայ ազգային-հասարակական կեան-
քին ու կը շարունակէ աշխատակ-
ցիլ հայ մամուլին:

Կը մահանայ 1957-ին, Փարիզ:
Ա. Կէնճեանի նամակագրական
եւ հրապարակագրական հարուստ
արխիւը կը գտնուի Հայաստանի
Պետական Արխիւին մէջ:

- *****
- ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ
- (1) «Արարատ», 1954 Մարտ 9,
Ա. Կէնճեան «Յուշեր եւ Նիշեր»:
- (2) Նոյնը:
- (3) Ա. Կէնճեան, «Հալապական-
նի Յուշեր 1914-1918», քերթօն
«Արարատ» թիւ 43, Պէյրութ, 1964,
էջ 39-40:
- (4) «Արարատ», 1953 Մարտ 11,
Ա. Կէնճեան «Յուշեր եւ Նիշեր»:
- (5) «Նոր Աշխարհ», 1912 Ապ-
րիլ 5/18:
- (6) «Հալապականի Յուշեր», էջ
37 եւ 41:
- (7) Նոյն, էջ 42:
- (8) Նոյն, էջ 111:
- (9) Նոյն, էջ 117:
- (10) Նոյն, էջ 149:

Շարք էջ 47

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՍԱՐԳԻՍ ԵՒ ԱՆԻ ՕՀԱՆԵԱՆ ԵՒ ՈՐԳԻՆ ԱԼԷՔ
HUSTON TEXAS
ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Top Ten Political Events in Armenia and Artsakh



1. Criminalization of denial of the Armenian Genocide in France

The French Senate recognized on Jan. 25 a bill criminalizing denial of the Armenian Genocide in France, which was perpetrated in the Ottoman Empire. The Senate's decision caused a real panic in Turkey, the latter blackmailed and pressed France. As a result, the Constitutional Court of France recognized the bill anti-constitutional.



4. Presidential elections in Artsakh

Artsakh held on July 19 presidential elections, where the incumbent President Bako Sahakian was re-elected. International observers of over 80 countries, including the United States, Russia, France, Germany and other states monitored the elections.

Party	Count	Percentage
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՆԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄՍՅՈՒՆԻՏԵՐԻ ՄԱՍԻՆ	454 684	30.20%
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ԿՈՄՍՅՈՒՆԻՏԵՐԻ ՄԱՍԻՆ	87 095	5.79%
ԶԵՆԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄՍՅՈՒՆԻՏԵՐԻ ՄԱՍԻՆ	106 910	7.10%
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ԿՈՄՍՅՈՒՆԻՏԵՐԻ ՄԱՍԻՆ	86 296	5.73%
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ԿՈՄՍՅՈՒՆԻՏԵՐԻ ՄԱՍԻՆ	5 633	0.37%
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԻՏԵՐԻ ՄԱՍԻՆ	15 933	1.06%
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՆԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄՍՅՈՒՆԻՏԵՐԻ ՄԱՍԻՆ	663 066	44.05%
ՄԱՍԻՆ	3 080	0.20%
ՄԱՍԻՆ	82 690	5.49%

2. Parliamentary elections in Armenia

Armenia's key political event was the May 6 parliamentary elections, where the ruling Republican Party of Armenia (RPA) headed by the Armenian President Serzh Sarkisian won. It was followed by Prosperous Armenia Party (PAP), opposition Armenian National Congress (ANC), Orinats Yerkir and opposition ARF Dashnaksutyun and Heritage parties, represented in the parliament.

The May parliamentary elections proceeded as usual, with abuse of administrative resources and election bribes.



5. The Azeri killer Safarov scandal

At the end of August, Armenian and international community was shocked by the extradition from Hungary and pardoning in Azerbaijan of an Azeri killer Ramil Safarov, who had axed an Armenian lieutenant Gurgen Margarian in Budapest. Armenia severed diplomatic ties with Hungary, while all the international and prestigious organizations condemned the pardoning and making hero of a killer.



3. Incident in the Harsnakar restaurant

Armenian military doctor Vahe Avetian and two of his colleagues were brutally beaten on June 17 at the Harsnakar restaurant, which belongs to the RPA MP and head of the Armenian Football Federation Ruben Hayrapetian. Avetian died on July 29, as a result Hayrapetian withdrew his MP mandate.

The incident angered the civil society sector, stirring a tide of protest demanding that those responsible for the incident, including Hayrapetian, be punished.



6. International recognition of Artsakh

An Australian New South Wales state recognized on Oct. 25 the right to self-determination of the Karabakh people. A little later Speaker of the Uruguay Parliament Jorge Orrico visited on Nov. 13 in Artsakh. Speaker of the Uruguayan Parliament visited the NKR. He did not exclude the recognition of the NKR by Uruguay.

Continued on page 28

Social Democrat Hunchakian Party Activities in Iran

By Aram Arkun

Hunchak, colloquial term referring to the members of the Social Democratic Hunchakian Party [SDHP], also called Hunchakian Revolutionary Party and Hunchakian Social Democratic Party; it was also the name of the party's first periodical. Founded in Switzerland by Russian Armenians in 1887, the party quickly established branches in Persia, the Russian empire, the Ottoman empire, Europe, America, and the Balkans. It was strongly influenced by Russian and Balkan revolutionary movements as well as by Marxism; and, with a centralized structure, it was the only early Armenian political party to call for the complete independence of Ottoman Armenia, with Russian and Persian Armenia to be liberated forthwith. The stated goal was to create a national democratic state through revolution, where a true socialist society would be established (Nalbandian, pp. 104-31; Ter Minassian, pp. 73-167).

After the destruction caused by the Ottoman persecution of Armenians, the creation of a Soviet Armenia led the SDHP to support this new state as the nucleus to which other liberated lands should be attached. The SDHP never actually took any steps aimed at detaching territory from Persia. The party became one of the three "traditional" Armenian political parties in the Armenian diaspora, and today maintains a presence in many countries of North and South America, Europe, and the Middle East, as well as the Republic of Armenia (Arkun, 1991, pp. 26-28).

The first Hunchakian Party branch of Persia was formed in Tabriz in 1890 or 1891; and, in the next twenty years, branches proliferated throughout the country, especially in various villages of Salmas, Urmia, and other districts of Azerbaijan, as well as Rasht, Anzali, Ghazvin, Khoy, Maraka, Tehran, and (New) Jolfa in Isfahan suburb (Gidur, 1962, I, pp. 200, 202; Kankruni, pp. 132-33, 138; Gelofeanc?, 22 January and 1 July 1916; Hangoyc?, February 1924, p. 144; August 1923, p. 94; R'; Sarmat; Ter Vardanian, 1930a, pp. 113-15; Arkun, 1997, p. 28; Hrahat; Mušel; Astluni, pp. 194-97; Minasian, p. 127). The central executive committee for the Persia Region of the party was based in Tabriz, though in the 1920s the Tehran branch attempted to take control over the region (Artemis; G. Elikian, January 1940, pp. 98, 110-11).

Small local armed groups were established. Party members often held jobs as school teachers or principals, which enabled them to recruit new members while working. They organized theater groups, women's associations, and literary readings, and gave lectures on social and political topics (Ter Vardanian, 1930a, pp. 113-15). Frequent quarrels took place with members of the Armenian Revolutionary Federation (see, e.g., Khanazat, pp. 99-100; Hovhannisian, pp. 105-6, 111-14; Amerian, 1950, p. 47; May 1924, pp. 138-39; June 1924, pp. 142-44).

The party and its leading activists published several Armenian-language newspapers in Persia, the most important of which were Zank (1910-22,

with interruptions), Mitk (1912-17), and Baykar (1918-19), all in Tabriz (Khosrov; Ter Khachaturian, pp. 24, 30, 34, 42; Patmagrian, p. 42).

Until the Persian Constitutional Revolution (q.v.), the Hunchak party branches in Persia were primarily concerned with the fate of Armenians in the Ottoman empire and the Caucasus, as well as the defense of local Armenian villages against plunder and tribal attacks. Arms and men were sent to the Ottoman empire, often to nearby Van. At times monasteries on the borders of Persia, and the Ottoman and Russian empires, like St. Stephanos Nakhavka in Julfa, were used as convenient bases (Gidur, 1962, I, pp. 200-213; Kankruni, pp. 137-39; Karno, p. 3; Ajem Manuel). In 1908 Hunchakian bodies in Tabriz, Tbilisi, and possibly the Ottoman empire assisted, with arms and men, Sattar Khan and the revolutionary fighters (mojaheds) in Tabriz, who were fighting the forces loyal to Muhammad-Ali Shah (A. Elikian, 1920, p. 2). The party reached an agreement in Tbilisi on 27 November 1908 with the Ejte-madiyun-e ammiyun party (q.v.) to provide them with all necessary military, financial, and physical aid. A special joint executive committee was formed with two members of the SDHP as well as an Armenian Social Democrat, while in Tabriz a secret military council included the resistant leaders, Sattar Khan and Baqer Khan, as well as representatives of three Armenian political groups, including the Hunchakian party (Gidur, 1962, I, p. 399).

The Tbilisi joint executive negotiated with the Russian Social Democrat Workers party to send to Rasht a group of twenty-three armed men of the Georgian Valiko. In Rasht and Anzali they entered into an understanding with the local armed Hunchakian group. On 26 January 1909 they joined Hosayn Khan Kasmati, the leader of Ejte-matiyun ammiyun, and Armenian Hunchakian fighters in an attack on the government's mansion in Rasht and occupying it. A group of twenty-one Hunchakian fighters, led by Bedros Melik-Andriasian of the Armenian village of Mu•umbar near Tabriz, were among the forces of Mohammad-Wali Khan Sepahsalar Tonokaboni in his expedition against the capital, participating in the fighting and decision making (Melik-Andriasian). The Hunchakians ended their armed activity after the capture of Tehran and the re-establishment of the constitutional government; Bedros Melik-Andriasian was appointed a member of the government's war commission and later assigned to head the Azerbaijan office of taxes on narcotics (Kasrawi, Arabajian, p. 356). When the local SDHP executive objected that the party could not carry out police work, Melik-Andriasian placed all his men and weapons under Yeprem Khan (q.v.) and the SDHP's rival, the Armenian Revolutionary Federation. Andriasian was hanged in January 1912 by the Russians when they occupied Tabriz (Hovhannisian, pp. 243-44; Elmar, pp. 192-93; Malekzada, p. 1546; Kasrawi, Arabajian, pp. 177, 356-60).

In July 1911 the SDHP formed a

group of one hundred armed men as part of the efforts to defend Tehran against the ex-shah Mohammad-Ali. Other Hunchakian armed groups defended Iranian Armenian villagers from the anarchic conditions of the Constitutional period ("Tono Lazarian," p. 231; Uni).

Ties with Persian Democrats continued in Tbilisi, Tabriz, and Tehran (Gidur, 1962, I, p. 404). Two Hunchakian members even agreed to assassinate Salar-al-Dawla for the Democrats against the wishes of their own party, but they were caught and hanged in Kermanshah in 1912 (Asluni, pp. 196-97). In Gilan the Hunchakian Harutyoun Galstian was elected as a member of the provincial council (Asluni, pp. 193-94).

During the turmoil of World War I and the Ottoman persecution of Armenians, the SDHP united with other Armenian political parties to form various councils or groupings for defense, especially in areas occupied by Ottoman troops in northwestern Persia (Ter-Vardanian, 1930b, pp. 73-100, 177-87; Patmagrian, pp. 69-72; Arkun, 1997, pp. 35-36). Many party members fought on Persian soil in Andranik Pasha Ozanian's volunteer forces and Russian and Soviet regiments (Gidur, 1956, p. 184; Š. T. May 1916; Panvor Hayk). In Gilan, the SDHP and the Armenian Revolutionary Federation entered into a non-aggression agreement with the Ettehad-e Eslam in the spring of 1918, while SDHP leader, Grigor Elikian, served the Jangalis as translator and advisor (Arkun, 1997, pp. 36-440; Chakeri, 1995, pp. 68-69, 188-90).

The events of the Russian Revolution raised the issue of union with the Bolshevik party. By November 1924, the SDHP decided to maintain its separate existence only outside of Soviet territory (G. Elikean, March 1940, p. 142; April 1940, p. 79; July 1940, pp. 133, 141; September 1940, pp. 155-62; Sirvard, pp. 42-44, 223-29; Gidur, 1962, I, pp. 496-99, 514-16, 521-25; Arkun, 1998, p. 170; Social Democrat Hunchakian Varchutyun, pp. 337-39). Persia's central executive and party branches shifted position on this issue several times (G. Elikean, March 1940, pp. 144-48; April 1940, pp. 92-96; Martuni, pp. 107, 117-20, 122).

After some internal struggles in the 1920s, all the branches in Persia adopted Sovietophile policies, including the party newspaper Zang (G. Elikean, December 1939, pp. 109-10, 129-30, 138-39; January 1940, pp. 98-99, 110-11, 127; August 1940, p. 136; Ter Vardanian, p. 2; Social Demokrat Hunchakian kusaktsutian Tawrizi; Hunchakian; Murc; Tehrani, p. 2). Hunchak party members and Armenian leftists were arrested in 1925 in many cities of Persia as part of a crackdown on Communist sympathizers (Anhayt; "Husher . . ."; Yerevan; Great Britain F.O.; Chaqueri, 1998,



pp. 134-35; "Hakakommunistakan"). It is possible that Hunchakists were among those Armenians arrested in a new crackdown in September-October 1938 as well (Chaqueri, 1998, p. 136). The internal divisions and state persecution had already weakened the Persian branches by the 1930s (G. Elikean, Dec. 1939, p. 130; August 1940, p. 136; Tehrani), though, according to C. C. Hart, the Isfahan branch was somewhat stronger than the others. Meanwhile, the expulsion of Elikean, the main standard-bearer of the anti-Soviet faction, during the tenth general assembly of the Hunchakian party in 1938, marked the end of this faction altogether (Gidur, 1962, I, p. 528). The party's traditional rival, the Armenian Revolutionary Federation, benefited from the situation.

During World War II, when Persia was occupied by the Allied, Soviet authorities permitted SDHP activities in Tabriz (Kennedy). This only provided a brief reprieve for the party, as state repression resumed shortly. By the 1950s, the party's activities appear to have ended in Persia (V. M., p. 3; Kankruni, p. 135). Emigration of numerous Iranian-Armenians, including SDHP partisans, to Soviet Armenia in 1946-47 was an additional factor in the weakening of the party (Gidur, 1962, I, p. 412; Chaqueri, 1998, pp. 137-43).

In addition to its activities for the Armenian cause and its vigorous involvement in the Persian Constitutional Revolution, the Hunchakian party played an important role in the introduction and spread of socialist ideology in Persia. Its Anzali branch created one of the first Persian social democratic parties in 1910 and published some Persian-language articles and brochures (see G. Elikean). After World War I, the Hunchakian branch in Rasht assisted the local branch of the Socialist Workers party (Kargaran-e socialist) by serving as an intermediary with its headquarters in Tehran (Arkun, 1998, p. 168). A number of the founders of another early socialist group, the Tabriz Social Democratic Group, some of whom went on to help establish the Democratic Party of Persia, arose from Hunchakian backgrounds, such as Arshavir Tchilinkirian, Vahram Philiosian, and Sedrak Panvorian (Gidur, 1962, I, pp. 204, 294, 396; Chaqueri, 1998, pp. 80-86, 92-101; idem, 2001, pp. 148-51, 173-82; Patmagrean, p. 18; Ares; Dem-T., Oct. 10, 31, 1910; Tchilinkirian). The prominent Iranian Communist Avedis

Social Democrat Hunchakian Party Activities in Iran

Mikaelian, also known as Sultanzada, went to a school sponsored by the party when he was young (Ter Vardanian, p. 113; Gidur, 1962, I, p. 205).

Bibliography:

- Giorgii Sergeevich Agabekov, G. P. U. (Zapiski chekista), tr. Henry W. Bunn as OGPU: The Russian Secret Terror, New York, 1931.
- Ajem Manuel (M. Mazmanian), "Hsher Salmasti 96 tvi anzkeric" (Memoirs from events in Salmas of 96), in Soc[ial] Dem[okrat] Hunchakian kusakzutian Fransayi Shrjan (French region of the Social Democratic Hunchakian party), Hushartzan nvirvaz Social Demokrat Hunchakian kusakzutian karasnameakin (Memorial dedicated to the fortieth anniversary of the Social Democratic Hunchakian party), Paris, 1930, pp. 100-102.
- A. Amirian (A. Ter Ohanian), ed., H. H. Dashnakutyun: Yeprem, barskakan sahmanadrutyun, H[ay] H[eghpokhakan] D. ketronakan arkhiv (Armenian revolutionary federation: Yeprem, [and] the Persian Constitution, Armenian Revolutionary Federation central archive), 2 vols., Tehran, 1976-79.
- Idem, H[ay] H[eghpokhakan] Dashnakutyune Barskastanum 1890-1918: Dashnakzutian 60-amyaki artiv (The Armenian revolutionary federation in Persia 1890-1918 on the sixtieth anniversary of the federation), Tehran, 1950.
- Anhayd (pseudonym) "Ruben Babakhanian," Hunchak, September 1936, p. 16.
- A-Rb. (A. Tchilinkirian), "Namak khmbagrutian" (Letter to the editor), Aravot, Tabriz, 17 October 1910, p. 4.
- Ares, "Akamay pataskhan" (Involuntary response), Aravot, 13 March, 1911, p. 2.
- Aram Arkun, "Armenians and the Jangalis," Iranian Studies 30/1-2, 1997, pp. 25-52.
- Idem, "Grigor Yaghikian: Writer and Journalist," in Cosroe Chaqueri, ed., The Armenians of Iran: The Paradoxical Role of a Minority in a Dominant Culture, Cambridge, Mass., 1998, pp. 162-89.
- Idem, "Hunchakians," Armenian International Magazine 2/3, March 1991, pp. 25-28.
- Artemis, "Tkhtakzutyunner: Barskastan: Namak Tawrizen" (Correspondence, Persia: Letter from Tabriz), Yeritasard Hayastan, New York, 8 January 1908, p. 207.
- G. Astruni (Grigor Elikian), "Inchpes kazmwez Parskastani S[ocial] D[emokrat] Kusakzutyune" (How Persia's Social democratic party was organized), in Soc[ial] Dem[okrat] Hunchakian kusakzutian Fransayi Shrjan, Hushartzan nvirvaz Social Demokrat Hunchakian kusakzutian karasnameakin, Paris, 1930, pp. 191-97.
- Panvor Hayk [pseudonym], "S[ocial] D[emokrat] Hunchakian 6rd Banaki herosner: hisnapet Zohrab Davitian" (The heroes of the Social democratic Hunchakian sixth army: Sergeant-Major Zohrab Davitian), Yeritasard Hayastan, 5 April 1916, pp. 279-80, 8 April, 1916, p. 283.
- Cosroe Chaqueri, The Soviet Socialist Republic of Iran, 1920-1921: Birth of the Trauma, Pittsburgh and London, 1995.
- Idem, ed., The Armenians of Iran: The Paradoxical Role of a Minority in a Dominant Culture: Articles and Documents, Cambridge, Mass., 1998.
- Idem, Origins of Social Democracy in Iran, Seattle, 2001.
- Arshavir Chilinkirian (Archaivir Tchilinkirian), "Namak Parskastaniz" (Letter from Persia), Yeritasard Hayastan, 25 July 1903, pp. 90-91.
- Dem-T., "Lurj usumnasirityun te koghutyun?" (A serious study or theft?) Aravot, 10 October 1910, p. 2.
- Idem, "Pagiator ashkhatum e ardaranal" (Plagiarist attempts to justify), Aravot, 31 October 1910, p. 2.
- A. Elikean, "Potorikin dimakayoghe: Enker S. Vahagn (Grigor Nalpantian), kensagrakan hamarot keer" (The resister to the storm: comrade S. Vahagn [Grigor Nalpantian], short biographical sketch), Yeritasard Hayastan, 10 January 1920, p. 2.
- Grigor Elikean, "Im hishogutyunneric" (From my memories), Hayrenik amsagir 16/6-19/1, April 1938-November 1940.
- Y. Elmar (Hovhannisian), Yeprem, Tehran, 1964.
- Yerevan editorial board, "ov e Melik-tangian: depker yev paster" (The anniversary of a hooded wretch; Who is Melik-tangian; incidents and evidence), Yeritasard Hayastan, Boston, 5 June 1925, p. 4.
- Sokrat Khan Gelofen, Kayts S[ocial] D[emokrat] Hunch[akian] kusakzutian gortuneutyuniz: togh pastere khosin (Spark from the Social democratic Hunchakian party's activity: Let the evidence speak), 2nd ed., Providence, 1915.
- Idem, "Petk e pergel heghapokhutian hmayke yev hay azgi paroyakan vicake" (The appeal of the revolution and the moral condition of the Armenian nation must be saved), Eritasard hayastan, Providence, 22 January 1916, pp. 195-96.
- Idem, "Anmegh zoh: enker Matheos S. Grigoriani hishatakin" (Innocent victim: in memory of comrade Matheos S. Grigorian), Yeritasard Hayastan, Providence, 1 July 1916, p. 377.
- Hrand Gangruni, Hanun hayreniki 1887-1987 (In the name of the fatherland, 1887-1987), Beirut, 1990.
- Great Britain, F.O. 248/1372, Gilliat-Smith to P. Loraine, Nov. 10, 1925; GTH, December 10, 1925; Gilliat-Smith to P. Loraine, Dec. 10, 1925.
- "Hakakommunistakan hala-cank Parskastani mej: Enk. Aleksan Ter-Vardanian bantarkvac, Enk. Sunik gartaksvi Parskastnen" (Anti-Communist persecution in Persia: comrade Aleksan Ter-Vardanian imprisoned, Comrade Sunik is expelled from Persia), Yeritasard Hayastan, Boston, 14 November 1925, p. 2.
- N. Hangoyz (N. Albanian), comp., "Samsoni husher" (Samson's memoirs), Hayrenik amsagir 1, August 1923, pp. 78-97; 2, February 1924, pp. 130-44; April, pp. 13-44; May, pp. 138-44; June, pp. 136-44.
- C. C. Hart, "Political Attitudes and Affiliations of Persian Armenians," 2 February 1932, United States National Archives (USNA) 860J.00/32 (reprod. in Chaqueri, 1998, p. 377).
- Hunchakian (Grigor Elikian), "Namak" Arzakang parizi (Paris), 30 March 1923, pp. 8-9.
- Hrahat (pseudonym), "Tghtakzutyunner" (Correspondence), Zang, Tabriz, 4 May 1911, p. 3.
- Karno, "Khorokhonzi Murat: Hunchakian heghapokhakan gyanki motik anzyalen" (Murat of Khorokhon: Hunchakian revolutionary life in the recent past), part II, Yeritasard Hayastan, New York, 4 November 1936, p. 3.
- E. Kennedy, "The Armenian Minority in Iran," W. D. G. S. report no. 312, June 26, 1944, USNA I. G. no. 2020 (reprod. in Chaqueri, 1998, p. 381).
- Arsen Kitur, Husher u pusher (Memoirs and thorns), Beirut, 1956.
- Idem, ed., Patmutyun S[ocial] D[emokrat] Hunchakian Kusakzutian, 1887-1962 (History of the Social democrat Hunchakian party, 1887-1962) I, Beirut, 1962.
- V. M. "Mah, enk. Arakel Patmagriani" (Death of comrade Arakel Patmagriani), Yeritasard Hayastan, New York, 23 November 1948, p. 3.
- A. Martuni (A. F. Myasnikyan), Kusakzutyunnere gaghutahayutyun mej (Political parties in Armenian [diaspora] communities), Tbilisi, 1924.
- P. Melik Andreasian, "Banasirkan: Yepremi pokrik khumb" (Philological: Yeprem's small group), Aravot, Tabriz, no. 1, 29 November 1909, p. 2; no. 2, 6 December 1909, p. 2.
- Mehdi Malekzada, Tarih-e enqelab-e mašruiyat-e Iran, 3rd ed., Tehran, 1992.
- "Mayrakaghaki norutyunner" (News of the capital), Zank, 20 July 1911, p. 1.
- L. Minasian, Nor Jughan avelikan mek yev karord darum, 1856-1996 (New Julfa for over one and one-quarter centuries, 1856-1996), Etchmiadzin, 1999.
- Murc (pseudonym), "Parskahay kiank: anmiabanutian hogin" (Persian-Armenian life: The spirit of disunity), Nor Gyank, Tehran, 2 November 1922, p. 3.
- Mushel (pseudonym), "Mets gorci vray en" (They are engaged in a big matter), Aravot, 1 May 1911, pp. 2-3.
- A. Nalbandian, The Armenian Revolutionary Movement, Berkeley, Calif, 1963.
- A. Patmagriani, Im husheriz (From my memoirs), Beirut, 1978.
- "Hunchakian gorcuneutyuwne Salmast-Urmi kavarneru mej (truzik aknark)" [Hunchakian activity in the districts of Salmas-Urmi (A quick look), Hunchak, August 1935, p. 8.
- Sarmat (pseudonym), "Harutyun Galstianc," Zang, 30 November 1919, p. 4.
- S. Sepuh, "enker Harutyun Harutyunian" (Comrade Harutyun Harutyunian), Hunchak, no. 2, February 1935, pp. 12-13.
- G. Šantian, "Tghtak-zutyunner" (Correspondence), Zang, 25 May 1911, p. 3.
- E. Sirvard (E. Grigorian), Ukhtavori me namaknere, Hulis 28-
- Hoktember 28 (Letters of a Pilgrim, July 28-October 28), n.p., 1934.
- Soc[ial] Dem[okrat] Hunchakian Kuszutian Ketronakan Varchutyun (Social Democratic Hunchakian party central executive), Hisnamiak-1887-1937-Soc[ial] Demokrat: Hunchakian kusakzutian (Fiftieth anniversary . . . of the Social Democrat Hunchakian party), Providence, 1938.
- S. T., "Hayk Bzhshkian: kensagrakan hamarot zanotutyun" (Hayk Bzhshkian: Brief biographical introduction), Yeritasard Hayastan, Providence, 6 May 1916, pp. 317-18.
- Tehranzi, "Chekayi Irtesner Parskastanum" (The Ceka's spies in Persia), Nor Yergir, Paris, 15 August 1931, pp. 2-3.
- A. Ter Khachaturian (Khachaturian), Social Demokrat Hunchakian kusakzutian mamule (1887-1992) (The press of the Social Democratic Hunchakian party), Beirut, 1992.
- A. Ter Minassian, La question arménienne, Paris, 1983.
- A. T[er] V[ardanian], "Ayz? Khorhrdayin Hayastanin: jambordakan tpavorutyunner" (Visit to Soviet Armenia: Travel impressions), Zang 3/16, October 1921, p. 2.
- Idem, "Hunchakian kusa-kzutian gorcuneutyune Parskastani mej" (The activity of the Hunchakian party in Persia), in Soc[ial] Dem[okrat] Hunchakian kusakzutian Fransayi Shrjan, Husharzan nvirvaz Social Demokrat Hunchakian kusakzutian karasnameakin, Paris, 1930, pp. 112-15.
- Idem, "Tajkakan nvajman orerum" (Days of Turkish subjugation), in Soc[ial] Dem[okrat] Hunchakian kusakzutian Fransayi Shrjan, Husharzan nvirvaz Social Demokrat Hunchakian kusakzutian karasnameakin, Paris, 1930, pp. 73-100, 177-87.
- "Tono Lazarein," in Soc[ial] Dem[okrat] Hunchakian kusak?ut?ean Ketr-[onakan] Varchutyun, Hisnamiak-1887-1937-Soc[ial] Demokrat: Hunchakian kusakzutian (Fiftieth anniversary . . . of the Social democrat Hunchakian party), Providence, 1938, p. 231.
- V. Uni (pseudonym), "Tghtakzutyunner Parskastan: namak Tavrizén" (Correspondence, Persia: A letter from Tabriz), Yeritasard Hayastan, New York, 11 March 1908, p. 252.
- R. Khan-azat (Khanazadian), "Hay heghapokhakani husheric?" (From the memoirs of an Armenian revolutionary), Hayrenik amsagir 7/2, December 1928, pp. 21-100.
- Khosrov (pseudonym), "Namak Tehraniz: sep[akan] tghtakghic" (Letter from Tehran: Special correspondent), Yeritasard Hayastan, New York, 20 March 1926, p. 11, and 27 March 1926, p. 1. Hovsep Hovhannisian, Husher (Memoirs) I, Yerevan, 1995.
- "Husher 25 amiy hobeleani ativ, 1901-1926: enker Aleksan Ter Vardanian" (Memoirs on the occasion of the twenty-fifth anniversary, 1901-1926: Comrade Aleksan Ter Vardanian), Nor Yerkir, November 28, 1926, pp. 2-3.

“I Wish I Could Feel Happy” A Christmas Appeal From SARF

It sums it all.
The collective sentiment of what we are feeling at SARF.
“I wish I could feel happy”
Despite the seemingly good news of having raised half a million dollars.
Despite the seemingly good news of having transferred \$350,000 to the Armenian communities in Syria. That’s how a tireless activist at SARF described our feelings.

“I wish I could feel happy”
We cannot.
We will not.
Until this unwarranted, unprecedented and undeserved crisis is over.
Until the black clouds are disbursed.
Until the dove of peace returns soaring to the skies of Syria.
We will not feel happy.
We will not rest.
«Արեւելքի Չուրիցերիան» յոր- ջորջուող Լիբանան, անցնող տա- րեջրջանին, ապրեցաւ համեմատա- բար խաղաղ, բայց միաժամանակ պատերազմի մը արհաւիրքն ապ- րող իրավիճակ մը: Նախագահ Միշէլ Սուլէյման մեծ ճիգեր կը թափէ պահպանելու երկրի դեմոկ- րատական դիմագիծը: Իր դէմ ցցուած մեծագոյն խոչընդոտներէն մին «Հրզպալլա» կուսակցութիւնն էր, որ իր ստացած արտաքին օժանդակութիւններուն միջոցով կարծէք ստեղծած ըլլայ «պետու- թեան մէջ պետութիւն» մը: Արդա- րեւ, այս կազմակերպութիւնը սերտ կապեր ունենալով իրանի հետ, ունի առանձին բազմազգարնոց գինեալ շոկատներ եւ գինամթերքի ու հեռարձակ հրթիռներու մեծ պաշար: Այսպիսով երկրէն ներս ստեղծուած է տեսակ մը գինուորա- կան խարխախ, ուրկէ հրթիռներ պիտի արձակուին իսրայէլի վրայ, եթէ այս վերջինս չարձակի իրանի վրայ:

Դժբախտաբար, հակառակ բազմապիսի միջամտութիւններու, լիբանանեան բանակը չի կրցաւ իր հակակշռին տակ առնել շիրթներէ բաղկացած հրզպալլայի գինեալ մարտիկները:

Գալով դրացի Սուրիոյ հողա- տարածքին վրայ տեղի ունեցող քաղաքացիական կռիւններուն՝ անոնք, իրենց ժխտական անդա- դարձն ունեցան նաեւ Լիբանանի տնտեսական եւ ընկերային կեան- քին վրայ: Վերջին երկու տարիներուն Լիբանան ապաստանած 120 հազար սուրիացի գաղթականներուն պատսպարան եւ գործ ապա- հովելու հարցը դժուարին կացու- թեան մատնած է երկրի իշխանու- թիւնները:

Իրերու ներկայ դրութեան ներ- քեւ Լիբանան կը պատրաստուի 2013 թուականի երեսփոխանական ընտրութիւններուն, որոնց իրենց մասնակցութիւնը պիտի բերեն նաեւ արտասահման բնակող լիբանան- ցիները: Այս վերջինները պարտա- ւոր էին իրենց անուններն արձա- նագրելու, իրենց բնակած երկիր- ներու ղեկավարներուն եւ հիւ- պատոսարաններուն մօտ մինչեւ Դեկտեմբեր 31, 2012: Հաւանաբար այս պայմանաժամը վերատեսու- թեան ենթարկուի:

Միւս կողմէ անցնող տարեշր-

ջանին Հռոմի Պենետիկոտո սրբա- գան քահանայապետին եւ Հայաս- տանի Հանրապետութեան նախա- գահ Սերժ Սարգսեանի Լիբանան կատարած այցելութիւնները մեծ ոգեւորութիւն ստեղծեցին երկրի իշխանութեանց եւ յատկապէս քրիստոնեայ հայ եւ մարոնիթ շրջա- նակներու մօտ:

Գալով Սուրիոյ քաղաքական ճգնաժամին կապակցութեամբ ՄԱԿ- ի եւ միջազգային այլ շրջանակնե- րու մօտ Լիբանանի որդեգրած դրական չէզոքութեան եւ վերա- պահ քաղաքականութեան՝ այս մէ- կը կը նկատուի դրական եւ իմաս- տուն քայլ մը: Սակայն, երկրի քաղաքական կարեւորագոյն կազ- մակերպութիւններու մօտ կան ու- ժեղ տարակարծութիւններ եւ հա- կադիր կեցուածքներ: Անոնցմէ ոմանք դէմ ըլլալով շիրիչ երկխօ- սութեամբ քաղաքական առկախ հարցերու լուծման, մարտահրաւէ- ըի դիմաց կը վտանգեն երկրի ապագան:

ՍՈՒՐԻՈՅ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄՆԱՅ ՄՏԱՀՈՒՅԻՉ

Երկու տարի առաջ արուես- տակեալ ձեւով Սուրիոյ մէջ յառաջ եկած քաղաքական տագնապը եր- թալով բարդացաւ եւ հասաւ այ- սօրուան առաւել կնճռոտ իրավի- ճակին: Արտասահման բնակութիւն հաստատած սուրիացի ընդդիմա- դիրները սկսան խօսիլ դեմոկրատի- յայի, ժողովրդավարութեան եւ երկրի սահմանդրութեան բարե- փոխութեան անհրաժեշտութեան մասին: Կառավարութիւնը ընդա- ռաջելով այդ բոլորին, կազմեց նոր սահմանադրութիւն մը եւ հան- րաքուէով վաւերացման ենթարկ- ուեցաւ: Այս բոլորն անբաւարար նկատելով կռիւնները շարունակ- ուեցան եւ մարդկային զոհերու թիւը հասաւ մօտ 40 հազարի: Ընդդիմադիրներուն միացան ծո- ցի երկիրները՝ ԱՄՆ ու կարգ մը եւրոպական պետութիւններ:

Իր կարգին ՄԱԿ-ի կողմէ հաշտարարի պարտականութիւն տրուեցաւ ՄԱԿ-ի նախկին նախա- գահ Քոֆիի Անանի: Այս վերջինը պարկեշտ եւ տրամաբանական առա- ջարկներ ներկայացուց, հարցի բարօք լուծման համար: Սակայն, ընդդիմադիրները անդրդուելի մնացին իրենց տեսակէտին վրայ, պահանջեով նախագահ Պաշշար Ասատի հրաժարականը:

Դժբախտաբար արտաքին վարձկան ոչժեր, Արեւմուտքէն եւ արաբական ծոցի երկիրներէն (յատ- կապէս Սէուտական Արաբիայէն) աւերներ գործեցին իրենց տրա- մադրուած գէնքերով եւ միլիոնա- ւոր տոլարներու յատկացումնե- րով: Բնական է որ այս բոլորը կը նպատակադրէին անջատել Սուր- իա-Իրան գինակցութիւնը եւ գետին պատրաստել իսրայէլի, իրանի դէմ յարձակումի մը համար: Արդարեւ, քաղաքացիական այս պատերազ- մին վերջ դնելու համար ՄԱԿ-ը հարկադրուեցաւ հրաժարուիլ Քոֆի- ի Անանի փոխարէն: Սուրիա դրկել Լախտար իսրահիմը: Այս վերջինն ալ իր առաքելութիւնը կը յուսանք յաջողութեամբ կը պսակէ:

Յարզ ընդդիմադիրները բա- ցարձակապէս կը մերժեն համախո- հական լուծումի մը համար երկխօ- սութեան նստիլ: Ուստի, Սուրիոյ այժմու կացութիւնը կը մնայ մտա- հոգիչ:

ԵԳԻՊՏՈՍԻ ԳԱՐՈՒՆԸ ՉԵԿԱԻ...

Նախկին նախագահ Հուսնի Մուպարաքի իշխանութեան տա- պալումով՝ 80 միլիոն հաշուող եգիպտացի ժողովուրդը պահ մը յուսաց վերջ գտած տեսնել բռնա- պետութիւնը եւ ժողովրդավարու- թեան եւ դեմոկրատական նոր իրա- ւակարգ մը պիտի փոխարինէր անոր: Սակայն մեծ եղաւ յուսախա- բուցիւնը, երբ իսլամ Եղբայրներ կազմակերպութիւնը նախագահա- կան ընտրութիւններուն ապահո- վեց իր թեկնածուին՝ Մուհամմատ Մորսիի յաղթանակը: Արդարեւ, ան այս ընտրութեան յաջողեցաւ շատ փոքր տոկոսային տարբերու- թեամբ մը իր հակառակորդէն՝ նախկին վարչապետ Ահմատ Շա- ֆիգէն (51,7%):

Ուստի 2012 Յունիս 24-ի ընտրութիւններուն իսլամիստներու յաղթանակն ու անոր յաջորդող հակաժողովրդական պաշտօնական յայտարարութիւնները խոր գայ- րոյթ եւ ընդվզում յառաջացուցին յառաջադիմական կազմակերպու- թիւններու եւ աշխատաւոր զանգ- ուածներու մօտ: Բողոքներն իրենց զագաթնակէտին հասան, երբ յայ- տարարուեցաւ թէ նոր սահմանադ- րութեան մը նախագիծը պատ- րաստուած է, հիմնուած իսլամա- կան «շուրայ»ի օրէնքներու տրա- մադրութեան վրայ: Այս մէկը խոր գայրոյթ յառաջացուց բովանդակ

երկրին մէջ: Ծայր տուին զագն- ուածային ցոյցեր Եգիպտոսի մե- ծագոյն քաղաքներուն մէջ: Հասա- րակութիւնը կը պահանջէր կասեց- նել տեղի ունենալիք հանրաքուէն եւ վերամշակել նոր սահմանադ- րութիւն մը:

Սակայն... ի գուր: Նախագահ Մորսիի ներկայացուցած հակադի- մադրական սահմանադրութեան հանրաքուէն տեղի ունեցաւ: 80 միլիոն ժողովուրդէն միայն 20 միլիոնը մասնակցեցաւ եւրատ պաշ- տօնական հարցրդարութեան քուէ- ներուն 64 առ հարիւրը ծրագրին ի նպաստ քուէարկած է եւ 36%-ը դէմ: Այս ծանուցումէն ետք նախա- գահ Մորսի վաւերացուց զայն եւ իսկոյն լուծարքի ենթարկեց խորհր- դարանն ու կառավարութիւնը: Ուս- տի «Շարիաթի խորհուրդը» ստանձնեց երկրի օրէնսդիր իշխա- նութիւնը: Նոր խորհրդարանի մը ընտրութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ երկու ամիսներու ըն- թացքին:


Եգիպտոսի ժողովուրդը ներ- կայիս վստահութիւնն չունի այս նոր կարգադրութիւններուն նկատ- մամբ: Միակ յոյսը յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւններն են: Իսկ դեմոկրատական արդար եւ թափանցիկ ընտրութիւններ կա- յացնելն ալ տարակուսելի է:

Գալով միջազգային հանրա- յին կարծիքին մեծ պետութիւննե- րը՝ իրենց շահերէն մեկնելով, թե- րահաւատ ըլլալով հանդերձ, վե- րապահ լաւատեսութիւն մը կը ջանան ցուցադրել Եգիպտոսի ներ- կայ վարչակարգի ապագայ ծրա- գիրներուն հանդէպ:

ՊԱՆԵՍՏԻՆ՝ ՔԱՅԼ ՄԸ ԱՌԱՋ...

Պաղեստինեան հարցի լուծ- ման աշխատանքները տակաւին դրական ելքի մը չի յանդեցան: Մեծագոյն խոչընդոտը Իսրայէլն է, որ միշտ արգելակած է ՄԱԿ-ի եւ Ապահովութեան խորհուրդի որո- շումները, մերժելով վերադարձնել բռնազրաւուած հողատարածքնե- րը: Հակառակ ԱՄՆ-ի եւ ՄԱԿ-ի ազդարարութիւններուն՝ իսրայէլ- եան իշխանութիւնները կը շարու- նակեն ժողովրդային մեծաքանակ բնակարաններու կառուցումը բռնազրաւուելու եւ վիճելի հողատա- րածքներու վրայ: Միաժամանակ խոչընդոտելով ՄԱԿ-ի կողմէ պա-

Շարք էջ 43



ՄԱՍԻՍ - 2013

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

... Հինգուկէս ամիս Հայաստանում էի: Կարելի էր աւելի երկար մնալ, սակայն այստեղ՝ Լոս Անճելէսում ինձ են սպասում իմ հարազատները, բարեկամներս ու ընկերները, որոնք գրեթէ ամէն օր ինձ հետ են: Հեռաձայնը մշտապէս գործողութեան մէջ է, զիչեր թէ ցերեկ: Ոմանք հետեւողականօրէն մոռանում են ժամերի տարբերութիւնը եւ երբ ասես, օրուայ որեւէ ժամին զանգահարում են: Բայց այդ երեւոյթը որքան էլ յոգնեցնող՝ մտքի, հոգու հանգստութիւն է բերում ջղերիդ ու գիտակցութեանդ, ամբարբերով այն համոզումը, թէ՛ «ի՞նչ կայ որ, մարդիկ կարօտում են քեզ, սպասում, եւ կարող են ցանկացած պահի հեռաձայնել»:

Թէ ինչու այդքան երկար ժամանակ մնացի Հայաստանում, դա այլ թեմա է, որի իմասին թերեւս խօսք կը լինի հետագայում: Իսկ այժմ ես ուզում եմ մանրապատումի տեսքով ընթերցող հասարակութեանը ներկայացնել դէմք մը կապուած Հայաստանի այսօրուայ իրականութեան հետ:

ՀԱՄԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑԸ

Ինչպէս նախորդ տարիներին, Երեւան հասնելուս յաջորդ օրն իսկ իմ դրան զագնը հնչեցրեց թաղապետարանի ներակայացուցիչը:

- Բարով էք եկել պարոն Անասեան, ո՞րքան էք մնալու այս տարի...

- Այս ամբամ շատ երկար, գրեթէ հինգ-վեց ամիս:

- Ինչ լա՛ւ...
- Իսկ դուք, վստահ եմ, եկել էք տան եկամտահարկը գանձելու, այդպէս չէ՞...

- Ճիշդ կուհեցիք պարոն Անասեան:

- Հը՛, մի բան աւելացե՛լ է, թէ՛ պակասել:

- Աւելացել է, աւելացել, բայց մի մեծ բան չի, մի երկու հարիւր դրամով, ի՞նչպէս կարող է պակասել, չէ՞ք տեսնում, թէ ինչպէս է ամէն ինչ թանկանում:

- Գիտե՛մ, գիտե՛մ..., եկէք բալկոնում նստենք, եղանակը հիանալի է:

- Այո՛, այո՛, բալկոնում:

Մինչ աշխատակցուհիս յարմարաւէտ տեղաւորում է բալկոնում, ես գնում եմ իմ աշխատանքակազմը եւ գրադարակից

հանելով տան հետ կապուած վճարումներն ապացուցող անդորրագրերը ու բերում նրա մօտ:

- Գիտե՞ք պարոն Անասեան, դուք մօտ հարիւր քսան հազարի պարտք ունէք նախկին տարիներից մնացած:

- Ի՛նչ պարտք քուր ջան, - առօրեայ խօսակցական ոճով հարցնում եմ ես:

- Այդ պարտքը գալիս է հնուց, երբ դուք այս բնակարանը գնել էք, բնակարանի նախկին տէրը իր պարտքերը չվճարած առուծախի պայմանագիր է կնքել ձեզ հետ:

- Ի՞նչպէս կարող է նման բան պատահել, չէ՞ որ մինչեւ նախկին տէրը պարտք-մարտք չունենայ, նոտարը չի հաստատի թղթերը եւ պետական գրասենեակն էլ չի հաստատի առուվաճառքի պայմանագիրը, եւ բնակարանը չի ձեւակերպի իմ անունով:

- Դու ճիշտ էք ընկեր Անասեան, կը ներէք պարոն Անասեան, բայց եղածը՝ եղած է, մեր կոմպիւթըրի մէջ յատկօրէն երեւում է ամէն ինչ, կարող էք գալ մեր գրասենեակ եւ համոզուել:

- Ես ոչ մի տեղ էլ չեմ գնայ եւ ոչինչ ապացուելու կարիք չունեմ: Մեղքը նոտարինն է եւ կադաստրինը: Ինչ ուզում էք արէք, եթէ պէտք է դատարան էլ կարող եմ գալ: Խնդիրը երեք հարիւր տոլարի մասին չէ, թէեւ Հայաստանի համար դա քիչ դրամ է, բայց ձեր հաստատութիւնների եւ, մանաւանդ, աշխատողների մեղքով ես այդքան դրամը չեմ կարող հենց այնպէս ջուրը նետել:

- Ի գուր էք ջղախնամ պարոն Անասեան, հիմա եղել է, ի՞նչ անենք... կարելի է ի հարկէ կոմպիւթըրից ինչ որ ձեւով հանել... ի՞նչ իմանամ...:

Ես, ի հարկէ անմիջապէս հասկացայ, թէ ինչ էր ակնարկում տիկինը, բայց ինձ չհասկացողի տեղ դրի ու ասացի.

- Չգիտեմ, ինչ ուզում էք արէք... հանում էք, չէք հանում համակարգչից՝ ձեր գործն է:

- Ի՞նչ ասեմ..., դուք գիտէք, այդ չարաբաստիկ գումարը մշտապէս որպէս պարտք կը մնայ եւ երբ, որեւէ ժամանակ, ձեր բնակարանը վաճառելու լինէք, չէք կարող ձեւակերպումներ անել մինչեւ այդ գումարը չվճարէք:

Վճարում եմ պահանջուող գումարը, մի փոքր էլ աւելի ու նրան եմ ուղղում ինձ հետաքրքրող

ԱՄԱՆՈՐԻ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Ամէն տարեվերջին՝ մաղթանքներ կ'ընենք նոր տարուան համար: Թէպէտ մաղթանք ընելը վիճակահանութեան տոմս գնելու պէս քան մըն է, սակայն եւ այնպէս, եթէ շահելու յոյսով տոմս կը գնենք, այնպէս ալ մեր փափաքները իրագործուած տեսնելու յոյսով բոլորս մաղթանքներ կ'ընենք:

Մեր մաղթանքները միշտ ըրած ենք եւ կ'ընենք լաւ բաներ պատահելու յոյսով:

Լաւ բանը կը հասկնանք որպէս առողջութիւն, յաջողութիւն եւ երջանկութիւն:

Ուրեմն մաղթենք որ մեզմէ ամէն մէկը առողջութիւն ունենայ եւ հիւանդ չըլլայ:

Մաղթենք որ հիւանդի մայրու կամ հոգալու ցաւ չնանչնանք, ու եթէ նանչնանք, մեր ցաւը թող սիրով եւ համբերութեամբ տանելի դառնայ:

Մաղթենք որ ամէն ընտանիք առողջութեան գրկին մէջ առնուի եւ մահացու կամ արկածահար ողբերգութիւններէ հեռու մնայ:

Մաղթենք որ յաջողութեամբ պսակուին մեր ամէն գործերն ու քննութիւնները:

Մաղթենք որ անգործը գործ ունենայ, գործատէրը շահով տուն դառնայ, դպրոցի աշակերտը յաջող ընթացք ունենայ, տկարը գորաւոր դառնայ, եւ մարդկային ընկերութիւնը անօրի գաւակ չունենայ:

Մաղթենք որ հայրեր ու մայրեր գաւակի ցաւով չտառապին, ընտանիքներ բաժանուի տարտով չմաշին, եւ գաւակներ՝ աննպատակ կեանքի գոհ դառնալով չյուսալուին:

Մաղթենք որ առողջութիւն, յաջողութիւն եւ երջանկութիւն երրորդութեամբ մկրտուի ամէն լաւ եւ բարի անձ, որպէսզի մարդկային նականատգիր ըսուած բախտը վարձատրել գիտնայ բոլոր լաւերը այս աշխարհի...:

Մաղթենք որ պետական պաշտօնեան ըլլայ միշտ ծառայօրէնքի եւ արդարութեան, եւ կրօնի պաշտօնեան չըլլայ միշտ պաշտօնեայ հարուստի, գորաւորի կամ ուժին պետական, այլ ըլլայ բարութեան եւ լաւութեան ծառան:

Մաղթենք որ արդարութեամբ դատուի եւ պատժուի ամէն չարագործ, եւ խաղաղ ու հանգիստ կեանքով անի ու հրճուի ամէն բարեգործ:

Մաղթենք որ բարին եւ տկարը չդառնան գոհը չարին եւ գորաւորին:

Մաղթենք որ Գարունը Արարին դժոխք չդառնայ. Սուրիոյ հայու բարեկամ ժողովուրդը անտուն ու անտէր չդառնայ. Արարիստանի մէջ կեանքը հայուն մոլեռանդ ծայրայեղականներու կողմէ հալածեալ կամ տաժանելի չըլլայ. Արցախի մէջ դարաբաղդիին կեանքը խաղաղութեամբ ընթանայ. եւ Հայաստանի մէջ, անգործութեան եւ անկարգութեան պատճառաւ արտագաղթողին հասկցող եւ օգնող պետութիւն ըլլայ: Մաղթենք որ Գանատան, Ամերիկան եւ Եւրոպան հայու դատին բարեկամ մնան: Եւ վերջապէս, մաղթենք որ մարդկութեան մեծամասնութեան տառապեալ եւ չարչարեալ անօրի ու ծարաւ մանուկները այս աշխարհի, գիրենք կերակրող եւ խնամող կազմակերպութիւններու եւ պետութիւններու հոգատարութեան տակ ըլլան:

մի հարց. աս խնդրեմ քոյրիկ ջան, այդ ինչպէ՞ս է պատահում, որ ամէն անգամ երբ ես Հայաստան եմ գալիս, դուք առաջին իսկ օրը յայտնուում էք իմ տանը, ի՞նչպէս էք իմանում, որ ես եկել եմ:

- Ինչի, դա էլ հարց է՞... մենք ամէն օր ստուգում ենք՝ ո՞վ եկաւ, ո՞վ գնաց:

- Դա, ի հարկէ հաւատելու բան չէ..., բայց մի հարց էլ, - անցեալ տարի մի օրիչ կին էր եկել, այնպէս... բաւական ճոխ արդուզարդով եւ իր տարիքին ոչ համապատասխան

«խնամուած» դէմքով:

- Հա՛, Հայկուշի մասին է ձեր խօսքը: Նա փախել է Հանրապետութիւնից: Ահագին փող է կերել ու մէջտեղ չկայ:

- Ի՞նչ էք կարծում, գուցէ նա է համակարգչի մէջ տեղադրել ինչ որ պարտք, հետագայում ինձնից փող կորզելու համար:

- Շատ հնարաւոր է, որովհետեւ նման կարգի՝ «թիւրիմացութիւններ», ուրիշ տնատէրերի հետ էլ կան: Իսկ հիմա թող տուէք գնալ պարոն Անասեան, մինչեւ յաջորդ տարի:



**ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՇՆՈՐՀԱԽՈՐԷ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ
ԵՒ ՀԱՄԱՅԻՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ
ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ**

ՈՒՐ ՍԵՐ ԿԱՅ, ԱՅՆՏԵՂ ԿԵԱՆՔԸ ԾԱՌԱԳՈՒՄ Է

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ահա առաջին անգամ մեր կեանքից մի տարի եւս անցաւ, մի տարով ծերացանք, մի տարով լիշողութիւններ եւ փորձեր կուտակեցինք, մի տարով ականատեսն եղանք իրադարձութիւնները՝ մեր սրտերը յուզող, այլեւս ուրիշ եւ երբեմն էլ գոհունակութիւն պատճառող: Ընթացիկ տարին արդէն կձկուած մեր կեանքի առօրեայից հեռանում է անցնելով պատմութեան գիրկին իր տարբեր եղելութիւններով...

Հոգեկան բարդոյթները մաքրւած, վերանորոգւած, վերաթարմացած ու գոտեպնդուած ընդառաջ գնանք 2013-ին, տարին կենտ է, ընդհանրապէս կենտ թիւը չարաբաստիկ է թախիմանական սին հաւատալիքներով, սակայն փոյթ մի՛ դարձրէք, նա մեր խոհեմ ապրելակերպով կը գուգաւորուի:

Նոր պարտաւորութիւններով եւ նուիրումներով ընդ առաջ գնանք գալիք տարուան մեր ազգ.-հասարակական կեանքում մեր մասն ու բաժին ծառայութիւնները բերելու մեր ժողովրդի նպատակների իրականացման՝ հայրենիքին եւ Արցախին ու հայապահպանման սրբազան աշխատանքներին աջակից ու գորակիւ կանգնելով:

Անցնող տարին ոչ քիչ տագնապալից եղաւ հայութեան համար: Թշնամու սահմազլխային դիպուկահարները նեղութիւնների պատճառ էին դառնում եւ գաղտագողի նշխարներ պոկում մեր սրտերից, ընտանիքներ դարձան սգաւոր եւ մայրեր՝ որդեկորոյս: Արցախին սպառնացող պատերազմի վերսկսման կոչերն ու մարդասպան ռամիլ Սաֆարովի ցմահ բանդից արտայանձնումը եւ հերոսացումը թշնամու հայատեսաց միտումներով քաղաքականութիւնը մտահոգութիւնների պատճառ դարձան, սակայն մեր իշխանաւորների հակադեցութիւնները չէզոքացրեցին նրանց նկրտումները Ալիեւին միջազգայնօրէն խայտառակելով: Միթէ ամաչել կայ մեր թշնամու համար, այդքան լիմարութիւններէ՞ր... ոչ մի ձեռով վրան չի բերում, ընդհանրապէս կաշի ունի կեղտով ծածկուած, որից օգտուում են եւրոպացի հաճկատարները:

Անցնող տարին փորձառութեան տարի եղաւ մեր հայրենիքի իշխանաւորների համար, նրանք փրոթոքոնների հարցով նկատեցին, ընկալեցին եւ թափանցեցին թուրքական կեղծ ու խաբեբայ քաղաքականութեան ծալքերի մէջ դա-

ւեր նիւթաղ հանդէպ հայութեան, Սփիւռքի բողոքներն ու ընդվզումն իր դերակատարութիւնը ունեցաւ այդ տիրահոլակ եւ խայտառակ համաձայնագրի չվաւերացման գործում, սակայն դա դեռ սպասում է մեր նախագահի կողմից ի չիք դարձնելու պայմանաւորութեան: Թշնամին պառակտման քաղաքականութիւն առաջ տարաւ Սփիւռքը տարանջատելու Հայաստանից, սակայն մերոնք աշխուրջ ի դերեւ դարձրին ամէն փորձ:

Սփիւռքը հայրենիքից անբաժան չէ, Սփիւռք եւ հայրենիք մէկ են հայ ժողովրդի նպատակների իրականացման ճամբին, հայրենիքը ակունքն է Սփիւռքի գոյութեան, հօր եւ բարգաւաճ հայրենիքը Սփիւռքի հայապահպանման կոռուանները կամրացնի յօգուտ հայրենիքին, մեր ի սրտէ աղօթքն ու փափազն է, որ այս եղբայրական ոսկէ կամուրջը երբեք ու երբեք չմէգանայ: Որեւէ մի խանգարում կը դիտուի որպէս թշնամուն ծառայող դաւաճանութիւն:

Նկատելով որ Սփիւռքը տարտղուած տարբեր գաղթօջախներից է բաղկացած՝ այլազան երկրներում, անհրաժեշտ է, որ մէկ կենտրոնական համադրող կառուցող ներկայանայ հայրենի պետութեան մօտ, այս ծրագիրը երկար տարիներով ձեռնուծ է, բայց մնում է օդից կախուած: Այս կարեւոր հարցում իմ համեստ առաջարկն է, որ իւրաքանչիւր կուսակցութիւն իր ներկայացուցչութիւնը ունենայ մարմնի մէջ, նաեւ ճանաչուած մակարդակով ազգային-հասարակական գործիչներ, հոչակ վայելող մտաւորական դէմքեր եւ քաղաքական գործիչներ, անկախ մարմին ի շահ մեր ժողովրդին եւ հայրենիքին, յուսով սպասում ենք այս ծրագրի իրականացման ազգային ռազմավարական ճիշտ գաղափարախօսութեան:

Անցնող տարուայ ընթացքում դարձեալ Արցախը թէժ քաղաքական դաշտում էր, նրա շուրջ անհիմն պնդումներով բանակցութիւնները շարունակուեցին: Ինչ նպատակ է հետապնդում «անկողմնակալ» Մինսկի խումբը, նրանք հայերի արդարութեան վերականգնման մասին չէ որ մտածում են, այլ իրենց եւ թուրքերի շահերն են հետապնդում: Արցախը մերն է, դեռ Արցախի տարածքներից մնում է թշնամու վայրագ թաթի տակ, որոնք եւս պէտք է ազատագրել:

Ռաֆֆի Յովհաննիսեանի ելոյթը թշնամու սրտի կենտրոնում իմ կողմից հայրենասիրական անվահեր ակտ էր, գնահատանքի արժանի:

Անցնող տարին նշանաւորուեց ակունքով դարձած նոյեմբեր 22-ի հեռուստամարաթոն դրամահաւաքով ի օգնութիւն Արցախին, Հայաստանին եւ աղէտեալ սիրիական հայութեան: Թեւեթոնի սկսուելու ժամից մինչեւ ավարտը ակունքներն եղաւ այն խանդավառ ոգեւորութեան, որ Սփիւռքահայութեան մասսաների կողմից ցուցաբերուեց սրտաբուխ նուէրներով օգտակար լինելու Հայաստանի Համահայկական հիմնադրամի ծրագրերին: Կարեւորն այն էր, որ ժողովուրդը մեծ ու պղտիկով կատարում էր իր ազգային պարտքը: Արցախի հանրապետութեան պաշտօնական ներկայացուցչութիւնը գլխաւորութեամբ Ազգային ժողովի՝ Աշոտ Ղուկեանի թեւեթոնի օրերին եռանդ պարգեւեց ամերիկահայութեան, նրա եւ առաջնորդ Պարգեւ սրբազանի մեկնաբանութիւնները Արցախի մասին օգնութեան թափը աշխուժացրին:

Արցախը պէտք է զարգացնել եւ հզորացնել, Հայաստանն ու Արցախը հայի երկու թեւերն են:

Կորուսեալ Ստալինի անմիջական կարգադրութեամբ թուրք ադրբեջանին նուիրուած Արցախը եօթանասուն տարիների ընթացքում ապրեց մեկուսացած անմիջապէս պայմաններում, ժողովրդին զրկել էին կենսական տարրական ապրելակերպի միջոցներից, նպատակ ունենալով Արցախը եւս հայաթափ անելով Նախիջևանի ճակատագրին ենթարկել, այսօր էլ թշնամին նոյն գաղտնի քաղաքականութիւնն է հետապնդում չհամաձայնելով Արցախի անկախութեան հետ: Թշնամին ուզի թէ չուզի Արցախը շնորհիւ իր գաւակների բազկի ուժով անկախութեան տէր է դարձել եւ որեւէ գնով չի վերադառնայ նախկին ստորացուցիչ վիճակին:

Թեւեթոնի օրը հեռուստակայանում ներկայացած մեր դպրոցական երեխաները իրենց դաստիարակների դեկավարութեամբ յոյս եւ հաւատք ներշնչեցին իրենց ջինջ ու անկեղծ հայրենասիրական խօսքերով, արտասանութիւններով եւ թոթովախօս բառերով՝

-Հայրենիքին օգնելու համար դրամ կուտամ:

-Արցախի շէնացման կ'օգնեմ:
-Հայաստանն ու Արցախը կը սիրեմ:

-Ես հայ եմ, կը սիրեմ մեր լեզուն:

-Սիրիահայ քոյր ու եղբայրներին կ'օգնեմ

-Հայութիւնը մէկ է, ուր ալ նա գտնուի:

Այս խօսքերը հենց այսպէս թուրքական մասնաւոր բառեր չէին, այլ բխում էին նրանց մտքից ու սրտից, ծնողների եւ ուսուցիչների դաստիարակութեան արդիւնք:

Մեր երեխաները տաղանդ են՝ հայկական շառաւիղ, մեր ապագայի յոյսերն են, նրանց պէտք է գուրգուրանք ու փայտաշէնք, թող որ մայրենին քաղցրաբոյր դայլայլի նրանց մանկական մատղաշ շուրթերին: Հայը իր լեզուով, կրօնով, մշակոյթով եւ սովորութիւններով է հայ:

Մեր շաբաթօրեայ եւ կիրակնօրեայ դասընթացներն առաւել պէտք է ընդարձակել, թող որ նկատի առնուի ընտանիքների նիւթական վիճակը, որոշներից գումար չգանձելով: Մեր առաջնորդարանները եւ եկեղեցիները մեծ դեր ունեն այս ուղղութեամբ տալով երեխաներին հաւաքագրեն եւ մեծ խումբերով հայերէն դասեր պարապեն, ոչ թէ մի քանի հոգիներով գոհանան: Ոչ թէ միայն ընտանիքներն են պատասխանատու երեխաների հայեցի դաստիարակութեան առումով, այլ նաեւ մեր թեմական ժողովները, միութիւնները եւ տարբեր բնոյթի կազմակերպութիւնները: Տխուր վիճակ է տիրում, հայերէնը իմանալի եւ անիմանալիօրէն նահանջում է... Հային հայ պահելն իսկ ազգային ռազմավարութիւն է, որով պէտք է շատ մտահոգուել:

Թեւեթոնը դրամահաւաքի օգնութեան ցուղադրութիւն լինելուց բացի տարբեր շահեկան կողմեր ունի, որի հետեւողական կատարումը ցանկալի է: «Հայաստանի Համահայկական Հիմնադրամը» գնահատելի ծրագրով էր կազմակերպել թեւեթոնը, նորանոր շաղկապութիւններ իրենց առաքելութեանը:

Այո՛, նոր գալիք տարին նոր յանձնառութիւնների դուռ է բացում մեր իշխանաւորների համար

Շար.ը էջ 37



ՄԱՍԻՍ - 2013

ԱՄԱՆՈՐԵԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Նոր տարուայ նախաշեմին ենք կանգնած,
 Յինը մեկնելու վրայ է՝ յուշը ետ, նա այնքան էլ չի վռագում,
 ժամկետին է սպասում,
 նա յամենում է տարին բոլորի, կծիկը աւարտին հասցնի,
 կամենում է վերջում՝ սպիտակով նախշեր կծկի,
 սակայն անօգուտ,
 քանի որ կարմրադեղին գոյնը, արդէն մատնում է նրա էութունը:
 Ինչ յոյսերով էինք օրօրում հնին կապուած...
 ցանկութիւններ պէս-պէս՝ խաղաղութիւն աշխարհին,
 բարգաւաճում երկրներին,
 ապահով կեանք մարդկութեան,
 պատերազմներից հրաժարում,
 արդարութեամբ տնօրինում,
 իրաւազրկուած ժողովուրդների պահանջներին վերահասութիւն,
 պատմական սխալների ճշտում,
 հայութեան հարցի լուծում,
 ցեղասպան թուրքիայի դատաւարութիւն,
 ինչ վսեմ սպասելիքներ,
 մեր մոլորակը գեղեցկացնող՝ բուրաստան գունակ-գունակ ծաղիկներով:
 Բայց որ մէկն է իրականացել, ամէն ցաւ անբուժ է մնացել,
 պայքարներ ամենուրեք,
 գեր մեծերն իրենց կամքն են թելադրում,
 նրանք վերից են նայում,
 տկարին են օգտագործում:
 Քանի բեւեռացումը, սպառազինումը, գոռոզութիւնը եւ ընչաքաղցութիւնը տիրակալ են՝ ոչ տեսնենք արդարութեան աղաւնու թեւածում:
 զիտուն մարդիկ են դա ասում,
 նրանք են, որ ժողովրդասիրութեամբ եւ հայրենասիրութեամբ պահում են աշխարը քարը քարի

վրայ:
 Նրանք երբեք չեն յուսահատուում,
 խոհեմաբար եւ համբերատարութեամբ են առաջ գնում,
 բարի խորհուրդներով են հրապարակ իջնում՝ հոգու եւ մտքի նորոգութեան, շրջահայեցողութեան, կարեկցութեան,
 ժողովրդասիրութեան, հանդուրժողականութեան եւ...
 մէկն զմէկու նկատմամբ սիրոյ եւ յարգանքի զգացումներով:
 Ահա Ամանորն է գալիս առաքինի,
 տեսնենք այս տարի ինչ կը կատարուի,
 Յոյս Աստուծոյ յուսախափ չենք լինի:

 Յրաժեշտ են տալիս գնացող տարուն,
 Անցնում են անտարբեր մտքով աննկատ,
 Ինչպէս անցնում են անպտուղ ծառի մօտից,
 Սպասելիքներ շատ մնացին անկատար:
 Չեղածի համար ոչ մտածում են, ոչ տրտմում,
 Թերացումը պէտք է փնտրել արարքներում,
 Անճարակութիւնը կեանքի ոլորտներում,
 Որը մեզ դէպ ձախողանք է առաջնորդում:
 Պէտք չէ ահ գգալ մտքերով մութ ու մոլոր,
 Ամէն ձախողանք նոր ճամբայ է բացում,
 Փորձ է կուտակուում նոր մտքերով լուսաւոր,
 Ապա մեզ դէպ յաջողութիւն ուղեկցում:

ԱՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՐՅ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ահա ամանորն է գալիս,
 հնի հետ հրաժեշտ տանք,
 նորի հետ նորանանք,
 ժամանակի հետ առաջ գնանք:
 Ահա ամանորն է գալիս,
 հայրենիքի հետ հայրանանք,
 ազգի հետ մէկ սիրտ դառնանք,
 պետութեան հետ հզօրանանք:
 Ահա ամանորն է գալիս,

իշխանութեան հետ ժողովրդանանք,
 Մերպատմութեան հետ սերտանանք
 Մեր շահերի հետ ամրանանք:
 Ահա ամանորն է գալիս,
 գեղեցիկի հետ գեղեցկանանք,
 Արուեստի հետ արուեստանանք,
 մեր մշակոյթի հետ հպարտանանք:

ԲԱՐԻՆ ԱՄԵՆԻՆ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ահա կաղանդ պապան է գալիս սեթեւանքով՝ լոյսերով, գարդերով ու նուէրներով,
 ոտքի ելնենք, ուրախ ընդառաջ գնանք,
 սրտագին խօսքերով բարի ողջոյն տանք:
 Թող գայ կաղանդը, բարին բերի ամենին,
 չարն ու կռիւը խափանի, սրտեր ամոքի,
 սփոփանք լինի որդեկորոյս մայրերին,
 սիրիահայ աղէտեալ ընտանիքներին:


Թող գայ կաղանդը եւ բարին բերի ամենին,
 անյոյս սրտերին լոյս ու հաւատք ճառագի,
 սէր ու գորով դաժան բախտով որբերին,
 ոյժ ու եռանդ աշխատասէր ձեռքերին,
 Թող գայ կաղանդը եւ բարին բերի ամենին,
 կարօտեալին նեցուկ, տկարին հովանի,
 ալեկոծ սրտերին անդորրութիւն,
 ողջ աշխարհին խաղաղութիւն:

ՈՒՐ ՍԵՐ ԿԱՅ, ԱՅՆՏԵՂ ԿԵԱՆՔԸ ՃԱՌԱԳՈՒՄ Է

Մարտնակուած էջ 36-էն

առաւել հոգ տանելու մեր ժողովրդի բարօք, հասարակական խարսխուած օրէնքների անկաշառ գործադրման գործում, արտագաղթը կասեցնեն եւ հայրենադարձութեան համար ծրագիրներ մշակեն, քանի որ արտերկրում սերունդների հայապահպանումը դժուարանում է տնտեսական եւ տարբեր երեւոյթների պատճառներով: Մեր իշխանաւորները մեծ պարտականութիւններ ունեն մեր երկրի եւ ժողովրդի նկատմամբ: Պէտք է անհրաժեշտօրէն ազգային քաղաքականութեամբ հզօրանալ ու հզօրանալ տարբեր բնագաւառներում եւ ասպարէզներում:
 Հայաստան-Սփիւռք էլ առաւել կապերի սերտացում է պահանջում, սփիւռքահայ ներուժից օգտուելու պետական ապարտում:
 Հայաստանի հանրապետութեան նախագահ՝ Սերժ Սարգսեանի պաշտօնական այցելութիւնները երկրներին, ուր գտնուում են հայկական գաղութներ: Համայնքի հետ հանդիպելը ինքնին հոգեկան կապը սերտացնում է հայրենիքի հետ եւ արժանապատուութեան ոգեւորութիւն եւ վստահութիւն է առաջացնում թեմական եւ պատգամաւորական անդամների մօտ:
 Նկատելով մօտակալ ամիսներին նախագահի ընտրութիւն է տեղի ունենալու, թող ամէն ինչ թափանցիկ լինի, թող մեր ժողովուրդը խուռներամ ընտրութիւններին մասնակցի եւ արդարօրէն

ու գիտակցօրէն ընտրի նրան, որ անմնացորդ կը ծառայի երկրին եւ ժողովրդին, մեր իղեայնների իրականացման ճամբին երկիրը անվեհեր կը ղեկավարի: Եթէ նախագահն սիրեց երկիրը, ազգը եւ ժողովուրդը, իմացէք որ հրաշք կը կատարուի: Հնուց ի վեր ասել են՝ սէրը հրաշք է գործում, ուր սէր կայ, այնտեղ կեանքը ճառագում է: Ճշմարտութիւն է, որ սիրոյ ճամբան տատասկոտ է, անցնում է քարքարոտ ու ժեռոտ կածաններով, ապա՝ երջանկութեամբ է պսակուում:
 Սիրոյ ճամբով անցնող կեանքը արգաւանդ հողից անցնող գետակի է նմանում, որ բերք ու բարիք է սիրում կենսատու:
 Հայրենիքի եւ ազգի սէրը մեր հայութեան գոյութիւնն է:
 Ահա այս մտածումներով ու մտորումներով դիմաւորենք 2013 թիւ տարին խոհեմութեամբ եւ լրջախոհութեամբ ու ազգային ռազմավարութեամբ ծառայող մարտահրաւէրները չէզոքացնելու համար:
 Ինչպէս նորի հետ հազուստով ենք նորանում, նաեւ նորանանք սրտով, հոգով եւ հին տարուն թողնենք ամէն տեսակ խռովք, վէճ եւ անհանգստութիւն, շփոթները, յարաբերութիւնները հարազատների, բարեկամների եւ ընկերների հետ քաղցրացնենք եւ այսպիսով ծաղկած գարնան ծառի նման թարմանալով, լիցքաւորուելով ու վառ յոյսերով հայօրէն կեանք ապրենք:
 Շնորհաւոր Ամանոր եւ Ս. Ծնունդ:



**Մ.Գ.Հ.Կ. ՓԱՐԱՄԱՋ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ
 ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ԲՈԼՈՐ ԸՆԿԵՐ-ԸՆԿԵՐՈՒՅԻՆԵՐՈՒ ԵՒ
 ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ
 ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԷ ՄԱՂԹԵԼՈՎ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ
 ՆՈՐԱՆՈՐ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ**

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 500-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ ԵՐԱՅԻՆ ԳԻՐՔԵՐ ԵՐԱՅԻՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Թէ՛ գիրք հաւաքէ՛, թէ՛ երաժշտական նուագարան, թէ՛ դրոշմաթուղթ՝ հաւաքածոյ կազմողամէն անհատ պիտի ուզէր եզակի կտորով մը պակասել զայն: Եւ անշուշտ, տան պատերէն ներս ամենայն նախանձախնդրութեամբ եւ գուրգուրանքով պահուող հագուելիք աչք առարկան, գիտակից մօտիկ բարեկամներու այցելութեան օրերուն, դուրս պիտի բերուէր իր մեկուսացումէն, պիտի ցուցադրուէր բոլորին, խօսակցութեան նոր նիւթեր պիտի բանար ու իր սեփականատիրոջ պիտի բերէր հպարտութիւն եւ պատիւ:

Երբ կը բոլորենք հայ տպագրութեան 500ամեակի առթիւ կատարուած համաշխարհային տօնակատարութիւնները, հայ գիրքի հաւաքողի մը համար չէր կրնար աւելի մեծ երջանկութիւն ըլլալ, որքան տասնեակ մը եզակի հատորներու մասին գրել. գիրքեր՝ որոնք չեն յիշուած մատենագիտական աղբիւրներու մէջ եւ անոնց գոյութիւնը մինչեւ այսօր անձանօթ մնացած է*:

Գիրքեր հաւաքելու արկածախնդրական ուղեւորութիւնը մարդս կը տանի հեռաւոր ցամաքներ ու անյիշելի ժամանակներ: Պէտք չէ զարմանալ ուրեմն, եթէ օր մը կարաւաններու կայարան Ասիական բերդաքաղաք մը ճամբորդած էք եւ ուրիշ օր մը՝ Միջերկրականեանման մը, ուր Հնդկական Ովկիանոսէն հասած առագաստանաւեր խարսխած են: Թէ՛, ինչ ուղղութեամբ պիտի նաւարկէք գիրքերու աշխարհին մէջ՝ միշտ պիտի մնայ անակնկալ մը. այդ ուղղութիւնը կախում պիտի ունենայ, թէ հնավաճառի մը մօտ-կամ ծերանոց նոր փոխադրուած հայրենակիցի մը տան մէջ-որ գիրքը պիտի ժպտայ ձեզի եւ որպէս հաւատարիմ ուղեկից՝ ձեզ մինչեւ տուն պիտի հետեւի:

Մեր ճանապարհորդութիւնը կը սկսի վենետիկէն: 1818 թուականն է. վենետիկի լակոնայի Ս. Ղազար կղզին երեք դար առաջ դադրեր է քաղաքի բորոտներու իբրեւ հիւանդանոց եւ քարտատեղի ծառայելէ: Ան հիմա ունի նոր առաքելութիւն եւ օտարագրի բնակիչներ: Անոնք Փոքր Ասիայէն ժամանած մօրուսաւոր հայ վանականներ են, որոնք իրենց արբանջօր՝

Միթար Սեբաստացիի առաջնորդութեամբ ձեռնարկած են եռուն աշխատանքի. գիրքեր կը տպեն՝ անդադար: 1818 թուականին Միաբանութիւնը նոր տօնած է իր հարիւրամեակը եւ ծաւալելու համար իր վարդապետութիւնը, ձեռնարկած է հայատառ-թրքերէն գիրքեր հրատարակելու եւ զանոնք թրքախօս հայերով բնակեցուած քաղաքներ ուղարկելու: Այդ աշխատանքներէն մէկն է «ԿՈՅՍՍԱՐԻԱՄԱՍՏՈՒԱԾԻՆԻՆԵՏԻՆՈՒՅՈՒԻՉԻՐԻՆԵՅ» աղօթագիրքը (Ս. Կոյս Մարիամ Աստուածածնին Եօթը Վէրքերուն Մասին): Խորագրին տակ, ինչպէս միշտ, կայ հետեւեալ յայտարարութիւնը. «Մեծաւոր լարըն Իգնի Իլէ Պասա Օլունմուշ Տուրե: 107 էջ է այս փոքրագիր գիրքը: Ունի բազմաթիւ աղօթքներ, ինչպէս նաեւ՝ «Կոյս Մարիամ վախտէմիգին եհտի խոցու եօրթուսունտան էվվէլ՝ սէօլէնէճէք տօգուզ կիւն տուալարը»: Առաւելաբար հետաքրքրական է, թէ վերջին հատուածը ունի «վէպա խասթէլիլինէ գարշը տուալար» (ժանտախտի դէմ աղօթքներ) գորկարտապենք. «Պու սուրբ խաչըն գուվվէթի իլէ եա ըապպի, պէնի թա՛ուն (ժանտախտ) իլլէթինտէն, վէ գաֆիլ էօլիւմտէն սէն սազա. ամին»:

1853, Կ. Պոլիս: «Նոյեան Աղանի» տպարանը կը հրատարակէ Քսավիէ Տը Մէսթր (Xavier de Maistre, 1763-1852) ,մեծանուն կոմսի «ԿՈՎԿԱՍՈՒ ԳԵՐԻՆԵՐԸ» անուն գիրքը, թարգմանութեամբ՝ Հայկ Կոստանդ Գ. Կոստանդեանի: Փոքրածաւալ է գիրքը. 8x12.5 սմ. եւ 96 էջ: Ետեւի կողքին վրայ կայ հետեւեալ յայտարարութիւնը. «Այս գրքոյը կը ծախուի Մէրճան չարշուսին գրավաճառ Պալեան Պաղտասարեանի խանութը, եւ դալաթիոյ Ս. Լուսաւորչայ եկեղեցու դուռը: Գին 5 գ Օսմանեան դեհեկան»:

Հեղինակը, «կոմս» տիտղոսի տէր Ֆրանսացի ազնուական մը, եղած է նաեւ գինուորական: Ան նոյնիսկ մաս կազմած է ռուսական բանակին հրամանատարութեան: Ներկայ եղած է Ալ. Սուվորովի կովկասեան արշաւանքին: Այս արշաւանքի տպաւորութիւններն են «Կովկասու Գերիները են (Ֆր. Les Prisonniers du Caucase, 1825, փարիզ): Այս գիրքի էջերուն մէջ կը

լսենք պատմութեան ոտնաձայները. գիրքի հայերէն թարգմանութենէն հազիւ տասնամեակ մը վերջ, նոյն ռուս բանակը, նուաճելէ ետք Կովկասի անմատչելի գագաթները, պիտի հոսէր դէպի հարաւ եւ պիտի գար սպառնալ Օսմանեան Կայսրութեան սահմանները: Ատիճանաբար սաստկացող լարուածութիւնը երկու բանակները պիտի հասցնէր ողբերգական ճակատումի, որ ծանօթ է իրբեւ «1877-1878ի Պատերազմը»: Դէպքերուն միջնարարը պիտի ըլլար? 1878 թուականի Պերլինի վեհաժողովը:

Միջազգային քաղաքական այս խառնաշփոթութեան մէջ կը տպուի Գրիգոր Նարեկացիի «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» գիրքին 1872ի հրատարակութիւնը, (451 էջ + Նշանակութիւնք Խրթին Բառից Ինչ Բանիցե) «Հրամանաւ Տեառն Մկրտչի Խրիմեան Սրբազան Արհիեպիսկոպոսի, արժանընտիր պատրիարքի Կոնստանդնուպոլսոյ»: Խրիմեան Հայրիկը իր ժողովուրդի համար պայքար կու տար երկու ճակատներու վրայ՝ միաժամանակ թէ՛ հոգեւոր եւ թէ՛ քաղաքական: Նոյնինքն «արժանընտիր պատրիարքն է, որ «Նարեկ»ի այս հրատարակութենէն վեց տարի ետք պիտի երթար Պերլին, իբրեւ հայ ժողովուրդի պատգամաւոր, ինչ «հօր տէրութեանց» պիտի ներկայացնէր հայոց դատը, լուսախափ ու ձեռնունայն պիտի վերադառնար Պոլիս ու Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու մէջ պիտի տար իր «Երկաթեայ Շերեփ» յայտնի քարոզը:

Նոյն օրերուն, երբ Հին Աշխարհը զբաղած է իր հոգեբով, Ատլանտեան Ովկիանոսի միւս կողմը, Նոր Աշխարհին մէջ բողոքական քարոզիչներ Չերմեուանդ աշխատանքի մէջ են: Անոնք սկսած են ընել այն ինչ, որ Կաթոլիկ եկեղեցին չորս հարիւր տարիէ ի վեր անդադար կ'ընէր. հայերու մէջ տարածել նոր դաւանանք: 1874 թուականն է, Նիւ Եօրք քաղաքը: Ամերիկայի «Տետրակի Ընկերութիւն»ի տպարանէն լոյս կը տեսնէ Ուիլեամ Կուտէլ քարոզիչին մէկ գիրքը «ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՐՈՉՆԵՐ»:

«Քարոզներ» գիրքը ստուար է. ունի 615 էջ: Հեղինակի պողպատափ նկարին կը հետեւի «Նա-

մակ», որ ուղղուած է «Տաճկաստանի Աւետարանական Եկեղեցուց»: «Նամակ»ը կը սկսի հետեւեալ խօսքերով. «Իմ հայրենիքս ձգելով՝ Տաճկաստան գալս քառասուն տարիէն աւելի է, եւ Կոստանդնուպոլիս ինձի բնակարան ընելս երեսուն երեք տարիէն աւելի է: Երբոր նոր եկանք ձեր մէջը՝ դուք գատ ժողովուրդ մը չէիք, եւ գատուելնիդ ալ երբեք չէիք յուսար. քանզի մեր կարգադրութիւնը Եկեղեցական գործերու բնաւ չըխառնուիլ ըլլալով՝ ձեր մէջը եղած ատեննիս կրօնական երկպառակութիւն հանելու դիտաւորութիւն չունէիք... Սակայն, ... Տէրութիւնըն ալ ձեզ ազատելու համար Լուսաւորչական Եկեղեցիէն գատելու ստիպուեցաւ: Ձեր հիմակուան վիճակը ասիկա է, եւ աս վճիպը ամենայն շնորհակալութեամբ ընդունելու էք, եւ թէ՛ ձեր՝ ու թէ՛ ձեր որդուցը օգտին համար գործածելու էք»:

Գիրքը շտապ պիտի դրուի շոգենաւերու մէջ եւ պիտի ուղարկուի ուր որ աշխոյժ են ամերիկացի աւետարանականներ, որոնք ծայր աստիճան պերճախօս են եւ փափկասիրտ: Անոնք համոզուած են, թէ միայն Գիրքը վերջ կրնայ տալ հին ժողովուրդներու տանջուածութեան:

Իսկ արեւելքի մէջկան մարդիկ, որոնք աւելի մտահոգ են մարդու մտաւոր լուսաւորութեամբ: 1881 թուականն է: Փարիզի «Morris & Son» տպարանէն լոյս կը տեսնէ լեզուաբան Գ. Ա. Նար Պէյ Լուսինեանի «ԱՌԱՋՆՈՐԳ ԱՆԳՂԻԱՐԻՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ» գրքոյի երկրորդ հրատարակութիւնը: Երկսին այս գիրքը ունի ճոխ ներածութիւն. ընթերցողին կը սորվեցնէ անգլերէն առօրեայ լեզուն՝ ամէն տեղի եւ միջավայրի համար մտածուած օրինակ նախադասութիւններով. ինչպէս՝ «IN A SHOP/ԽԱՆՈՒԹԻ Մէջ: Have you any fine cloth?/Աղէկ շուխայ ունի՞ք»:

Նոյն տարին է: Պոլսոյ Ա. Յ. Պոյաճեան տպարանը կը հրատարակէ հայատառ-թրքերէն գիրք մը: «ԻԼՄԻ ՀԻՍԱՊ. ԳՐՍՄ Ը ՐԱԳԱՄԻ»: Թուաբանութեան նուիրուած 288 էջնոց այս գիրքը ծրագր-

Ս.Գ.Հ.Կ. ԺԻՐԱՅՐ ՄՈՒՐԱՏ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ
ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ԲՈԼՈՐ ԸՆԿԵՐ -ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐՈՒ ԵՒ
ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ
ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ ՄԱՂԹԵԼՈՎ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ
ՆՈՐԱՆՈՐ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐԱԳԻՏ ԳԻՐՔԵՐ

Շարունակում էք 38-ին

ուած է բարձրագույն վարժարաններու համար: Ան կը սկսի չորս գործողութիւններով, 170րդ էջին վրայ կը հասնի տոկոսներու հաշիւներուն. «Ֆայլի պատիւ», «Ֆայլի միւլթիպլայ»: 268 էջնոց գիրքը ունի բազմաթիւ վարժութիւններ: Ան նաեւ ունի օտարազգի դրամանիշերու փոխարժէքները ցոյց տուող ցուցակներ: Նախաբանը կը խօսի նաեւ Ֆրանսական նորութեան մը մասին. «մեթը»-ի գործածութիւնը: Հեղինակը, որուն անունը չէ յիշուած գիրքին մէջ, համոզուած է, որ այդ գրութիւնը շուտով Ֆրանսայէն դուրս պիտի ելլէ ու շատ հաւանական է, որ համաշխարհային գործածութիւն ունենայ, ներառեալ Օսմանեան կայսրութեան մէջ:

Վերոյիշեալ հեղինակին գուշակութիւնը իրականացած կ'երեւի տասը տարուան մէջ: 1893ին հրատարակուած «ԴԱՍԱԳԻՐԹ ՌԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ» գործի իններորդ տպագրութեան մէջ, աշխատասիրող Տիգրան Յ. Պօզաճեան, աշակերտներուն համար պատրաստուած վարժութիւններուն մէջ գործածած է «մեթը»-ը եւ «լիթը»-ը: Գիրքը 526 էջ է: Իր երկրաչափական հատուածը ճոխ է բազմաթիւ աղիւսակներով եւ տախտակներով: Հեղինակը հպարտ կ'երեւի այդ բաժինով. ... իններորդ տպագրութիւնն... իր նախորդէն ունեցած առաւելութիւնն այն է որ կը պարունակէ երկրաչափութեան գործնական գիտելեաց նմուշ մը, եւ այս ըստ խորհրդոյ մի քանի նշանաւոր գիտնոց ըրինք, քաջայոյս լինելով որ արդէն գտած ընդունելութիւնն եւ գործոյս համակրողաց ալ համակրանքն աստիճան մը եւս պիտի առաւելուն» (ստորագրութիւն՝ Տ. Պօզաճեան, 1 Օգոստոս, 1893, Ղալաթիա): Գիրքը հրատարակուած է Պ. Պալենցի կողմէ, որուն հասցէն է եղած՝ «Կ. Պօլիս, Չազմագճըլար, Թիւ 20», իսկ փորագրութիւնները կատարած է «Փորագրիչ Սերվիլէն, Տպագրութիւն եւ Վիճագրութիւն, Կ. Պօլիս, Սուլթան-Համամ, Աղբիւրին քով»: Յիշեալ փորագրիչը յաջորդ տարի զբաղած կը տեսնենք ուրիշ մէկ աշխատանքի վրայ. «ԸՆԴԱՐՁԱԿ ԹՈՒՐԲԵՐԷՆ ՆԱՄԱԿԱՆԻ», հեղինակ՝ Միհրան Աբիկեան, «Թարգման Դրան սպարապետի եւ անդամ Ուսումնական Խորհրդոյ Ազգային Պատրիարքա-

րանի»: Գիրքին չորրորդ հրատարակութիւնն է ասիկա: Ան վաւերացուած է «Ուսումնական Խորհուրդ»է: Գիրքը ունի նաեւ հայատառ-թրքերէն խորագիր. «ԻԼԱՎԷԼԻ ԿԻԻԼՏԷՍԹԷԻ ՄՈՒՀԱՐԻՐԻՐԱԹԸ ԲԷՍՄԻՅԵՏ ԿԷ ՂԱՅՐԸ ԲԷՍՄԻՅԵՏ»: Նախաբանի տեղ դրուած «Ձեկոյց»ը կը բացայայտէ գիրքին նպատակը. «Խմբագրութիւն պաշտօնական եւ ոչ պաշտօնական այլ եւ այլ գրութեանց/Ընթերցանութիւն այլ այլ ձեռագրի, դէմ առ դէմ դնելով թրքատառ Կիւլտէսթէն/Ուղղագրութիւն.../Թարգմանութիւն...»: 206 էջ է գիրքը: 202րդ էջէն մինչեւ 206՝ բառարանն է, ուր կան կայսերական եւ կրօնական պատուանուններ եւ աստիճաններ, թէ՛ տեղեկան եւ թէ՛ օտար քաղաքագէտներու ու հոգեւորականներու համար:

1900ական թուականները ականատես կ'ըլլան գիրքերու տպագրական վայրերու ընդարձակման: Այս խումբի օրինակը կու գայ Ատաբազար քաղաքէն, որ կը գտնուի մայրաքաղաքէն 100 քմ. արեւելք: Ան հայ պատմութեան մէջ յայտնի է որպէս «Աստուածարեալ Քաղաք»: Երգիծաբան Նշան Պէշիկթաշլեանի «Հայ Աղբրտիք» կատակերգութեան մէջ տեղ տրուած է քաղաքի անուան ստուգաբանութիւնն եւս, թէ՛ ցամաք այս քաղաքը իր անունին մէջ ունի ջուրով շրջապատուած Ատա բառը՝ «կղզի», որովհետեւ անոնք կը լողան օղիի մէջ:

Գիրքը կը կոչուի. «ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆԻՆԻ ԱՌԱՒՕՏԵԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՒ ԱՌՁԵՐՆ ՇԱՐԱԿԱՆ ԿԻՒՐԱԿԷՏՅ ՄԵԾ ՊԱՀՈՑ ԵՒ ՏՕՆԱԿԱՆ ԱՌՈՒՐՅ»: Ներածութիւնը դասաւորուած է Ատաբազարի Ս. Հ. Թաղի դպրապետ Գրիգոր Յ. Մխճեանի կողմէ: Կողքին վրայ կայ նաեւ հետեւեալը՝ շուրջ. «Ի պէտս Հ[ա]յ Եկեղեցասիրացն: 136 էջնոց գիրքը լոյս ընծայուած է «Ատրուշան» տպարանին կողմէ, սեփականատէր՝ Յ. Դ. Աթանասեան: Ետեւի կողքին վրայ տպուած, մատն մը ցոյց կու տայ գիրքը՝ 100 Փր.: Գիրքին անուանաթերթը ունի նաեւ ձուածեւ մանիշակագոյն կնիք. Ա. Եագճեան, Գրավաճառ Հրատարակիչ, Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Պազըրճըլար, 11»:

Նոյն քաղաքի «Երիտասարդ Քրիստ. Ընկերակցութեան» հրա-

տարակութիւնն է 78 էջնոց «ԱՏԱԲԱԶԱՐԻ ԵՐԻՏ. ՔՐԻՍՏ. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ ԸՆԵՆ: 1913ին, Պոլսոյ Քէշիշեան տպարանին մէջ տպուած գիրքը ընկերակցութեան երեսնամեայ պատմութիւնն է (1883-1913): Անուանաթերթէն առաջ դրուած է ընկերակցութեան անդամ եւ անդամուհիներուն, ինչպէս նաեւ երեսնամեակի տօնակատարութիւններուն համար Ատաբազար ժամանած հիւրերուն խմբակարգը: Ըստ նախաբանին Ընկերակցութեան գործադիր ժողովի որոշումին, գիրքին պատրաստութիւնը յանձնուած է Ատենայեալ Պ. Յովհ. Ս. Ալիքսանեանի:

Գիրքին մէջ տեղ տրուած է 30ամեակի տօնական հանդիսութեան եւ այդ գիշեր կատարուած ուղերձներուն: Յատկանշական է քաղաքի կեդրոնական վարժարանի ներկայացուցիչ, Ֆրանսական Յեղափոխութեան հեղինակ եւ Քուր'անի թարգմանիչ Պ. Լեւոն Լարենցի համարձակ ուղերձը. «Այս քաղաքը, ուր կը գտնուիմ հագիւ 8 ամիսներէ ի վեր, հակառակ իր թափած մեծամեծ ճիգերուն եւ ստանձնած նիւթական գոհողութիւններուն, տակաւին պէտք ունի զուտ բարոյական եւ բարոյացուցիչ ազդակներու, որովհետեւ թէ՛ դպրոցներէն ներս, եւ թէ՛ մանաւանդ՝ դպրոցներէն դուրս, ամենէն զգալի պակասը բարոյական կարգի յատուկ առաքինութիւններն են»: 74-75րդ էջերը ունի Ընկերակցութեան «Կանոնագիր»ը, իսկ 76-77ն՝ 54 անդամներուն անունները:

«Հայ Գիրքը» ցանկին մէջ նշուած ըլլալով հանդերձ՝ կ'արժէ այս յօդուածին մէջ յիշել 1909ին Մարգուան քաղաքի «Ներսո եւ Արապեան» տպարանին մէջ տպուած մէկ գրքոյկ. «ԵՕԹԸ ԳՈՅՆԵՐ»: Գիրքը ձեռքին տակ ունենալը մեզի կու տայ ականատես ըլլալու այդ համեստ հրատարակութեան հագուազիւտ եւ եզակի մէկ յատկութեան. գունատիպ ըլլալուն: Հինգ գունաւոր, երկու ոսկեգօծ ու արծաթագօծ տախտակներով զեղազարդուած գիրքը շատ հաւանականորէն Օսմանեան կայսրութեան մէջ հրատարակուած առաջին հայերէն գունաւոր գիրքն է: Հեղինակը Միմ-Հաճի-Գիւղէն՝ Յովհ. Գ. Պապէսեանն է, «ուսուցիչ բնական գիտութեանց»: Գրքոյկը եօթը էջ է, ուր գիտական ընտիր լեզուով բացատրուած են գոյներու կազմութեան ամենաարդիական տեսու-

թիւնները: Բոլոր գոյները մայր, արեգակնային լուսապատկեր, ածանց, միջանկեալ- փոքր քառակուսի տուփիկներու մէջ ձեռքով ներկուած են, ներառեալ՝ արծաթն ու ոսկին: Առանձին էջի վրայ կայ «գունախօսական» բազմալեզու բառարան. հայերէն, ֆրանսերէն, լատիներէն եւ թրքերէն:

1886 թուականին Պոլսոյ Յակոբ Պօյաճեան տպարանը լոյս կ'ընծայէ Աւետարանական եկեղեցիներ յաճախող երախաներուն համար հոգեւոր դասագիրք՝ «ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՍԱՅ ԴԱՍԵՐ-1887 ՏԱՐԻՈՅ»: Գիրքը հարցում-պատասխաններու դրութեամբ կը կրթէ աշակերտները: Առաջին էջը ունի հետեւեալ խորագիրը. «Առաջին երեք ամսոց դասեր շին կտակարանէն. Առաջին Դաս, Յունուար 2»: Ամէն դասանիւթ ունի 20-26 «հարցմունք» եւ «ժանօթութիւնք», ինչպէս՝ «Ի՞նչ կը նշանակէ Բեթլէհէմ: Բեթլէհէմ կը նշանակէ տուն հացի. եւ անտարակոյս առաւ անունը շրջակայ երկիրներուն պողաբերութեանէն»: (էջ 99, 101) Գիրքը 200 էջ է առաւել՝ ութը էջ «Հրահանգ»:

Կրօնական-դասանաբանական հրատարակութիւններ յաջորդ դարուն մէջ ալ կը շարունակեն հրատարակել ողորդել: 1913 թուականն է. «Իրսայլ Շիրքէթիէն կը հրատարակէ հայատառ-թրքերէն դասագիրք. «ՎԱՀԻ ՔԻԹԱՊԸՆԸ ԻԶԱՀԷՏԷՆ ՏԵՐՍԼԷՐ» («Յայտնութիւն Յովհաննու» գիրքը մեկնաբանող դասեր): Գիրքը հարցում-պատասխաններով կը ներկայացնէ աշխարհի գալիք իրադարձութիւնները, երկրի եւ երկնքի վերափոխումը, Յիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը, ելն.: 19րդ թերթի դարձերեսի վրայ տպուած է աշխարհի վերջին օրերը նկարագրող երկու գծագրութիւն. «Լիզպոնա գէլգէլէսի» (Լոզպոն քաղաքի երկրաշարժը) եւ «Կիւնէշին գարարմասը» (Արեւուն խաւարումը): 94րդ էջը ունի թուաբանական «փաստ», թէ Պապին տրուած «Vicarius Filii Dei» պատուանունը սատանայական է: Մեկնաբանութիւնը հետեւեալ ձեւով կատարուած է. պատուանունին ամէն մէկ տառը փոխադրուած է հռովմէական համապատասխան համարի եւ անոնք գումարուած են:

Շարք էջ 47

Մ.Գ.Հ.Կ. ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՄՆԱԾԻՒՂԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԽՈՐԷ ԲՈԼՈՐ ԸՆԿԵՐ-ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ ՄԱՂԹԵԼՈՎ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՐԱՆՈՐ ՅԱՉՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ... ՊԵՊՕ ՍԻՍՈՆԵԱՍ

Սփիւռ-քահայ ենք: Տարագիրի մեր տոմարը տարի մը եւս արձանագրեց իր միապաղաղ էջերուն: Ուրախ եւ գուարթ օրերու ելեւէջներով: Ինչ ալ ըլլայ ուրախ օրերու հաշուեկշիւը, մնացինք օտար ու ցուրտ երկինքներու տակ՝ որքան ալ անոնք եղան ասպնջական, հիւրընկալ եւ ջերմ...: Օտարին հողը հայրենիք չէ եւ չի կրնար հայրենիքը փոխարինել: Հայրենի երկրի տունին կարօտը եւ երազը երգած բանաստեղծը, 1930-ական թուականներուն արդէն իր պանդխտահար սրտին կանչը արտայայտած է՝ որպէս բողոք եւ ընդվզում.

«Այ կը բաւէ՛, Տէր Աստուած, մեր տունն ու տեղ դարձուր մեզ, Թշնամիս իսկ մեզ մամն ուրիշի դուռ չձգես»:

(Մ. Իշխան)

Մեր կորսուած եւ փրկուած հայրենիքներուն հանդէպ մեր սէրը, կրակն ու կարօտը պահելով հանդերձ «ուրիշին դուռը դեռ կը մնանք» ցանուցիր:

Մինչեւ ե՞րբ: Ոչ ոք ունի անոր պատասխանը: Տեղայնացած ենք եւ տեղայնութիւնը տիրակաւորէն տեղ գրաւած է մեր հոգեբանութեան մէջ: Եթէ մեր տեղէն շարժելու որեւէ բռնութիւն, հալածանք եւ անապահովութիւն չըլլան, շարժողը չենք, բացի գաղութէ գաղութ տեղաշարժերէ:

Մեծ Եղեռնէն ետք Լիբանանն ու Սուրիան էին հայկականօրէն բարգաւաճող գաղութները, որոնք ո՛չ միայն մեր գոյապահպանումը ամրապնդող կռուաններ եղան, այլեւ՝ հայ ստեղծագործ միտքը իր ուրոյն նպաստը բերաւ ազգային ու տեղական մշակոյթներու զարգացման:

Լիբանանն ապրեցաւ իր ողբերգութիւնը: Քաղաքացիական կռիւներու երկարաձգուած տեւողութիւնը իր հիմքէն ցնցեց երկիրը: Բնականաբար նաեւ կենսախայտ հայազգաղութը, որ տուժեց որակապէս եւ քանակապէս: Լիբանանի առօրեային մեկնող եւ ապագային հանդէպ յոռետես պատկերացումներով, անտեսական եւ ապահովական արդարացումներով մեծ թիւով հայեր մեկնեցան եւ կը մեկնին տակաւին: Վիրաւոր, բաց կանգուն է հայ գաղութը: Ոչ միայն կանգուն է, այլեւ՝ կը տրոփէ հայութեամբ եւ հայ արժէքներով: Հայ ժողովուրդի, - սփիւռ-քահայ հատուածի, - հոգեւոր եւ մշակութային կեդրոն Կիլիկիոյ կաթողիկոսու-

թիւնը իր կրթական եւ մշակութային համագային նախաձեռնութիւններով կարեւոր դեր կը կատարէ ոչ միայն անտարբերները սթափեցնող, այլեւ՝ հայ միտքը աշխատանքի հրաւիրող յորդորներով: Ոչ մէկ հայու անձանօթ է, որ Արեւմտահայերէնը իր բանաւոր եւ գրաւոր գործածութեան մէջ կը տօգուանի, կ'այլափոխուի եւ իր նախկին հմայքը կը կորսնցնէ: Զեռնածալ նստիլն ու աւաղելը օգուտ մը չունէր: Անհրաժեշտ էր արթնանալ արդէն եւ գործնական կերպով նահանջին հակադրելը: Ահա-հասիկ նախաձեռնութիւնը՝ Կիլիկիոյ կաթողիկոսութեան գահակալը՝ Արամ Ա., Արեւմտահայերէնի ներկայի եւ ապագայի մտահոգութենէն եւ նախանձախնդրութենէն մեկնելով, առաջին հերթին կազմակերպեց կրթական համագումարը՝ արեւմտահայերէնը գործածող եւ ուսուցանող մտաւորականներու եւ կրթական մշակներու մասնակցութեամբ: Անոր յաջորդեց Արեւմտահայերէնի պաշտպանութեան համափրկութեան ընդգրկուն Յանձնաժողովը՝ որուն կորիզը կը կազմեն Լիբանանէն մասնակիցները: Գործնական գետնի վրայ առաջին քայլը եղաւ Արեւմտահայերէնի դասընթացքին հաստատումը: Կը մնանք հետեւող ուրիշ քայլերու սպասումով...: Այլապէս ալ Պէյրութը կը մնայ մշակութային կեդրոն՝ իր ազգային, քաղաքական, համայնքային մամուլի հրատարակութիւններով, արուեստի եւ գրականութեան նուիրուած ամսագիրներով, հայ գիրքի տպագրութեամբ եւ հայագիտական հանդէսներով: Ողջունելիօրէն հայ մամուլի ընտանիքին միացաւ «Փթիթ» մանկապատանեկան թերթը: Հակառակ այս իրողութեան ինչ կ'ըսեն սակայն, հայ գիրքի վաճառքի եւ ընթերցողներու մասին վիճակագրական տուեալները: Միթարական եւ գոհացուցիչ ըլլալէ հետեւ...: Համացանցի ուժգնօրէն թափանցումն ու տարածումը ընտանիքներէն ներս լրատուական, տեղեկատուական եւ այլ նորութիւններու արագ հաղորդումներով կը խանգարեն ընթերցանութիւնը՝ զրկելով անոր վայելքէն...:

Լիբանանահայ մշակութային միութիւնները կը գործեն հարկաւ եւ իրենց պարային եւ այլ գեղարուեստական ձեռնարկներով կը ծառայեն հայ մշակոյթին: Թատրոնը կը նպաստէ ալ խօսակցական արեւմ-

տահայերէնի ճիշդ գործածութեան: Տարբեր հարց, որ թատրոն երթալով քանի մը ժամ հոն անցնելու համբերութիւնն ու հետաքրքրութիւնը տեղի կու տան: Մաքուր արեւմտահայերէն լսելու տեսակէտով գնահատելի դեր կատարելու սահմանուած են մանկապատանեկան թատերախումբերը, եթէ լեզուն խնամուած ըլլայ...: Նաեւ մանկապատանեկան գրականութիւնը:

Ինչո՞ւ մեր մշակութային միութիւնները դադարեցուցած են իրենց գրական ձեռնարկները: Արդեօք այն մտահոգութեամբ, որ քիչ թիւով հանդիսականներ կ'ունենան: Զեռնթափ ըլլալու աստիճան այդքան յոռետես ըլլալու չէ: Հայագաղութը տակաւին գրասէրներ ունի, որոնք գրական մամուլ կը կարդան եւ գրական ձեռնարկներ կը քաջալերեն: Հետեւողական ճիշդ կանգ առնելու չէ գրասէրներու խաւը պահելու համար՝ որպէս ենթահող մշակոյթի ծաղկումին:

Աւելի մտահոգիչը Լիբանանի ապահովական կացութիւնն է, որ օրէ օր կը վատթարանայ ահաբեկչական սպանութիւններով: Լիբանանցիին հետ հայը կ'ապրի մտալիւզի հոգեկան տագնապը: Տնտեսական ճնշող առօրեային հետ անապահովութեան դողը պատած է Լիբանանցիներու սիրտը: Քաղաքացիական կռիւներ չկան եւ զանոնք հեռացելու խոհեմ կեցուածքը առայժմ կը պահուի: Լիբանանցիք եթէ չի յան համայնքային հակամարտութիւնները զրգոյց եւ լարող թակարդին մէջ: Ի գին, սակայն, իր ամէնէն ընտիր գաւակները ահաբեկչական անորակելի սպանութիւններով կորսնցնելու դժբախտութեան, մէկը միւսին ետեւէն: Ժողովրդավարական սկզբունքներով քաղաքական եւ գաղափարական պայքարը պահել քաղաքակրթական մակարդակի վրայ: Հետաքննութիւններու արդիւնքներն ալ ոչինչ կը փոխեն կացութենէն: Այնքան ատեն, որ գինեալ ուժ մը կամ համայնք մը պետութենէն աւելի հզօր կը պահէ իր գոյութիւնը: Թոյլ չի տար ան, որ պետութեան կամքը իշխէ: Պետութեան եւ ազգային բանակին զօրացումն է Լիբանանի կայունութեան, ապահովութեան եւ խաղաղութեան երաշխիքը: Լիբանանը երկու ծայրայեղ բեւեռներու միջեւ կը տապալուի: Վաղուան հանդէպ վախն ու անորոշութիւնը չեն փարատիր քանի

Լիբանանի դէմ քանդուծի դաւադրական ծրագիրները վերջ գտած չեն...: Լիբանանեան մեղսակիցներով...: Վերջին պայթումը իր պատճառած մահերով, վիրաւորներով եւ կործանարար աւերներով կրկին լիբանանցին դրաւ հարցականներու առջեւ...: Առանցքային ազդեցութիւններէ եւ քաղաքական արտաքին ոտնձգութիւններէ գերծ խաղաղ եւ գերիշխան Լիբանանն է սկսկալուածը: Վստահութիւնը խախտած իրարամերժ միջնորդութիւնները «տիպալին» ալ, որ եթէ կայանայ ուժի դիրքերէ մեկնող տրամադրութիւններով, լուծումի յանգելու յոյս չ'ընծայեր...:

Ըսուած է, հայուն յոյսը անսպառ է: Մեր յոյսերը կապուած են վաղուան խաղաղ Լիբանանին, այն Լիբանանին՝ որ Արեւելքի եւ Արեւմուտքի քաղաքակրթութիւններու միջեւ կամուրջ ըլլայ, ուր հայագաղութը գոյատեւէ ազգային ինքնութեան եւ մշակոյթին կառչած մնալու ազատութեամբ եւ պահանջատիրական պայքարը շարունակելու վճռակամութեամբ:

Հայկական Սփիւռ-քը մնայուն կերպով ենթակայ կը մնայ իր ապրած երկիրներու քաղաքական վերիվայրումներուն: Երէկ Լիբանանն էր, այսօր՝ Սուրիան, որ հայկական Սփիւռ-քի ամէնէն կենսունակ եւ բարգաւաճ հայագաղութներէն էր: Մարդկային խղճմտանքը լուծ է հոն: Երկուստեք արձանագրուած զոհերը կորուստներ ըլլալէ չեն դադարիր: Որքան ալ ճիշդ ըլլան մնայու եւ դիմադրելու յորդորները, արտագաղթը ծայր առած է, վտանգելով հայ գաղութի ապագան: Օժանդակութիւնները հայրենիքէն եւ Սփիւռ-քի այլ փեղէն կը հասնին: Սակայն, հացէն առաջ կը փնտուռի ապահովութիւնը...: Երէկ հայութեամբ շնչող սուրիական հայ գաղութները լինել չլինելու պայքարով կ'ոգորին...: Դամասկոսի եւ Հալէպի կրթական կառուցներու ցանցը, որ հայցի դաստիարակութեամբ եւ հայկական տաք հոգիով սերունդներ հասցուցած էր եւ կը շարունակէր պատրաստել, խափանուած է այսօր, վաղն ալ հարցականի տակ պահելով...: Յուսալից էր գրական կեանքի վերաթարմացումը գարթօնի մը խթանանշաններով եւ իմացական շարժումով: Երիտասարդ գրողներու սերունդ

Շարք էջ 47

Ս.Գ.Հ.Կ. ՄԱՊԱՀ ԳԻՒԼ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ
ԿԸ ՇՆՈՐՀԱԽՈՐԷ ԲՈԼՈՐ ԸՆԿԵՐ-ԸՆԿԵՐՈՒՅԻՆԵՐՈՒ ԵՒ
ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ
ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ ՄԱՂԹԵԼՈՎ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ
ՆՈՐԱՆՈՐ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՐՋԵԼՈՒ ԳԱՄԱՐ ԱՐՏԱԳԱՂԹԵԼՈՒ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ...

ՍԱՐԳԻՍ ՆԱԾԱՐԵԱՆ

- Ինչպե՞ս էք, հարցուցի թաքսիի վարորդին:

- Որտեղի՞ց էք, հարցումով հարցումիս պատասխանեց ան, ինչպե՞ս որ կը պատահի սովորաբար, ամէն անգամ որ թաքսի մը նստիմ Երեւանի մէջ:

Հպատակութիւնս գուշակելու խաղը՝ թաքսիի վարորդին հետ գրոցցիս սկզբնաւորութիւնը կ'ըլլայ միշտ:

- Սիրիայէ՞ն ես: Իրանէ՞ն: Յունաստանէ՞ն...:

Երբ ըսի որ Լիբանանէն եմ, հարցուց որ «հոն պատերազմ կա՞ջ»: «Ոչ»էս ետք չիշեց, որ իր որպիսութիւնը հարցուցած էի:

- Լաւ չենք: Ո՞նց կարելի է լաւ ըլլալ էս երկրին մէջ: Մարդիկ գնում են, հեռանում, որովհետեւ չեն դիմանում:

- Ինչո՞ւ: Չդիմանալիք ի՞նչ կայ որ...: Վերջին մօտեւ ինքնաշարժներ: Խճողուած երթեւեկութիւն: Տեսակաւոր դրամատուներ եւ ֆինանսական վարկատուներ: Հիւսիսային պողոտայ: Գեղեցիկ ցուցափեղկեր: Աշխարհահռչակ վաճառանիշերով խանութներ: Ընդարձակ սիւբերմարքէթներ: Ամէն կողմ ռեսթորաններ ու քաֆէներ: Անվերջանալի փառատօներ: Հրապարակներ լեցնող յոբելեանական տօնախմբութիւններ ու համերգներ: Գեղեցիկութեան սրահներ: Վաճելու հազուելակերպով կանայք՝ իրենց հասակները 20 սանթիմով երկարող կօշիկներով, մեծին ու պզտիկին ձեռքը բջիջային հեռախօս...:

Կարծրադէմ՝ վարորդը ընդմիջեց նկարագրութիւնս եւ հարցուց.

- Քաղաքացիութիւն ստանալու՞ եկեր ես:

- Ո՛չ, ըսի:

- Ուրեմն թուրիսթ ես: Եկել ես Արարատը տեսնելու, ուրախանալու եւ հանգստանալու, ըսաւ եւ Նալպանտեանի խաչմերուկին վրայ, կարմիր լոյսին կեցնելով ինքնաշարժը՝ դէմքիս քննական ակնարկ մը նետելէ ետք, շարունակեց.

- Ի՞նչ պիտի իմանաս, ինչո՞ւ չեն դիմանում ու գնում են: Հոս որ ապրես՝ կ'իմանաս: Գնում են, որովհետեւ դժգոհ են էստեղի կեանքից: Կեանք չի: Ո՞նց կարելի է ապրիլ երբ աշխատանք չկայ, ապահովութիւն չկայ, կաշառքի փող չկայ...: Առաջ ամէն մասնագէտ իր աշխատանքը ունէր: Հիմա իմ նման

թաքսիի վարորդ է:

- Իսկ ո՞ւր են գնում:

- Չգիտեմ: Ռուսաստան, Ամերիկա: Թող գնան: Ուր էլ որ գնան էստեղից լաւ է: Կը պրծին...:

- Ի՞նչ գիտես որ աւելի լաւ է: Ինչի՞ց կը պրծին:

- Էստեղ պիտի ապրես, որ իմանաս... մի տասը մարդու ձեռից:

- Ի՞նչ մարդիկ...:

Լուսթիւն:

- Դուն եղե՞լ ես արտասահման, հարցուցի:

- Ո՛չ: Գնալու փող չունեմ:

Դարձեալ լուսթիւն՝ մինչեւ երթալիք տեղս, որուն մօտն ենք արդէն:

2012-ի Հոկտեմբերին, ժողովուրդային համահայկական համաժողովին առիթով Երեւան կեցութեան մէկ շաբթուան ընթացքին, գրեթէ միեւնոյն գրոցն էր որ տեղի կ'ունենար թաքսիի վարորդներուն եւ ոչ միայն վարորդներուն հետ, որոնց ըսածն ու պատմածը բնակչութեան առաւելաբար համեստ եւ կերպով մը «եռլա գացող» խաւին բազկերակը շօշափելու ձեւ մըն է, թերեւս միամիտ ձեւ մը, սակայն տեսակ մը ճշմարտապատմամ է՝ արտագաղթի պատճառներու ու պատրուակի մասին:

Յամենայնդէպս, այն ինչ որ լսեցի այդ շաբթուան ընթացքին ամէն անգամ որ թաքսի նստայ, վարորդին քով, նորութիւն մը չէր ինծի համար, այլ 1969-ի Օգոստոսէն ի վեր զանազան տարբերակներով կրկնուած յանկերգի մը նորագոյն մէկ տարբերակը պարզապէս: Այդ տարուան Օգոստոսին, առաջին անգամն էր որ կ'այցելէի Հայաստան, Ալեքոֆի Պէյրութի Երեւան օդանավային գիծի բացումին առիթով հրաւիրուած լիբանանահայ լրագրողներու հնգանդամ պատուիրակութեան հետ: Այդ օրէն ի վեր, ամէն անգամ որ Երեւան գտնուեցայ (մէկ-երկու տարին անգամ մը անպայման), թաքսիի վարորդներէն, եւ ոչ միայն վարորդներէն, լսեցի արտագաղթը արդարացնելու միտող՝ պետական իշխանութիւններուն, պետական այլուրեւն եւ անոնց կողմէ կատարուած տնօրինումներուն եւ կեանքի պայմաններուն դէմ բողոքի, դժգոհութեան ու գանգատի միեւնոյն արտայայտութիւնները՝ տարբեր շեշտադրումներով ու երանգաւորումներով: Ամէն անգամին կը փոխուէին միայն հեռանալու ցանկութեան եւ երկրէն հեռանալու պատրուակները: Նման երեւոյթի երբեք չեմ հանդիպած տարբեր երկիրներու մէջ, ուր այցելած եմ: Լիբանանի մէջ, թաքսիի վարորդները, եւ ոչ միայն թաքսիի վարորդները, արժանապատիւ են անկախ կեանք մը ունենալու հնարաւորութեան չգոյութիւնը: Այս պատճառով ալ, մարդիկ կ'երագէին անցնիլ երկաթէ վարագոյրին միւս կողմը եւ երբ վարագոյրը դարձաւ թափանցիկ, կերպով մը երկրէն դուրս թափանցումն ալ հեշտացաւ ու թափ առաւ:

Ազատութեան ճամբորդները, երկրէն անկախ կեանք մը ունենալու հնարաւորութեան չգոյութիւնը: Այս պատճառով ալ, մարդիկ կ'երագէին անցնիլ երկաթէ վարագոյրին միւս կողմը եւ երբ վարագոյրը դարձաւ թափանցիկ, կերպով մը երկրէն դուրս թափանցումն ալ հեշտացաւ ու թափ առաւ:

Ազատութեան ճամբորդները, երկրէն անկախ կեանք մը ունենալու հնարաւորութեան չգոյութեան ընթացքին իրաւունքը՝ անկախութեան ընթացքին հնարաւորութիւններէն մէկը ըլլալով, նորանկախ Հայաստանին առջեւ ծառայած դժուարութիւնները՝ մէկ կողմէ արցախեան պատերազմը, միւս կողմէ երկրաշարժը, իրենց հետեւանքներով, ցուրտն ու մութը, կեանքի ու կենցաղի անտանելի պայմանները բաւարար պատճառ ու պատրուակ եղան որպէսզի մարդիկ մեկնին, մեկնին օրինաւոր եւ ապօրէն ճամբաներով, «կրին քարթ»ով կամ գաղթականի կարգավիճակով, անգիտակցաբար կամ արկածախնդրաբար, իրենց կեանքը փոխուած տեսնելու յոյսով: Ու մեկնեցան հազարներով, տասնեակ հազարներով, հարիւր հազարներով: defoulement մըն էր պարզապէս: Յորձանք մը՝ որ համբերելու, գրկանքներու տոկալու հայու կամքի ուժէն, ազգային-քաղաքացիական գիտակցութեան աւելի զօրաւոր եղաւ: Արտագաղթելու բնական թուացող պատճառներուն եւ պատրուակներուն վրայ աւելցաւ կեանքի հրապուրիչ պայմաններու մասին ամբերիկաներէն ու աւստրալիաներէն հնչած քարոզչութիւնը, հակա-

ռակ անոր որ ասիկա իրականութեան ալ չէր համապատասխաներ յաճախ: Հոն ըսուած չէր, որ օտարութեան մէջ, հայաստանցին՝ ապրուստը կարենալ ճարելու համար յաճախ ստիպուած է ընդունիլ այնպիսի ծանր եւ մինչեւ իսկ անպատուաբեր նկատուող աշխատանք, գոր երբեք պիտի չընդուներ սեփական երկրին մէջ: Հիասթափուած՝ գացողներէն շատեր վստահաբար զղջացին հայրենիքէն հեռանալուն համար:

Իսկ հիմա՞, անկախացումէն երկու տասնամեակ ետք:

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան առիթով մը հաստատած է, որ արտասահմանի մէջ յաջողութիւն փնտրողներուն թիւը մեծ է եւ պէտք է լրջօրէն մտահոգուիլ այս խնդիրով:

Արդարեւ, հակառակ անոր որ վերջին տարիներուն, երկրին եւ մասնաւորաբար մայրաքաղաք Երեւանին եւ կարգ մը գլխաւոր քաղաքներուն մէջ այցելուի աչքին առջեւ պարզուող շրջանցիկ տեսարաններն ու երեւոյթները, միջին խաւի մը առկայութիւնը զգացնող ժամանցի վայրերու խճողուածութիւնը եւ առեւտրական ետուզեռը՝ քաղաքացիներուն արտագաղթելու միտումը արդարացնող պատճառներ ցոյց չեն տար, արտահոսքը կը շարունակուի եւ կ'ըսուի, թէ կ'ընդգրկէ - ինչ որ ամէնէն մտահոգիչն է - բոլոր դասակարգերը, մտաւորականները, արուեստագէտները եւ ունեւորներն անգամ: Ինչո՞ւ: Որովհետեւ, ըստ երեւոյթին եւ ոչ միայն թաքսիի վարորդներու ճշմարտապատմութիւններուն, այլ արժանահաւատ վկայութիւններու, հրապարակի վրայ տեսնուածը երբեք միլիոն ժողովուրդի բարեկեցութեան եւ բաւարարուածութեան ցուցանիշ չէ, ոչ ալ խոստացուած բարեկարգումներու կամ ժողովրդավարական կարգ ու կանոնի արդիւնք, այլ շահագործողներու խաւի մը կողմէ յարուցուած պատրանք, որ կը քողարկէ աննախընթաց անգործութիւնը եւ չբաւարարողութիւնը, մասսան ճնշող ընկերային տագնապալի վիճակը, իշխանութեան բոլոր օղակները կրծող համատարած կաշառակութիւնը, անօրինութիւնները, ներքաղաքական իրավիճակին լար-

Շարք էջ 47



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՄԻՀՐԱՆ ԵՒ ԹԱՄԱՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՄԱՍԻՍ - 2013

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՍԵՄԻՆ

ՆԱԴԱՊԵՏ ՍԵԼՔՈՆԵԱՆ

Թէպէտ Նոր Տարուան սեմին, քրիստոնեայ աշխարհը պիտի տօնէ մեր Տիրոջ ու Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը, սակայն ինչ փոյթ եթէ խաղաղութեան ու Միջոց Իշխանի Սուրբ Երկրի ղեկավարներուն ու ժողովուրդին հոգիներուն մէջ, չորցած են հունտերը սիրոյ ու խաղաղութեան:

Խաղաղականի այս ակերտուն վրայ, որքան ալ խաղաղ երկնքի տակ պիտի դիմաւորենք Նոր Տարին եւ տօնախմբենք Սուրբ Ծնունդն ու Աստուածայայտութիւնը Տեառն Մերոյ, մեր միտքն ու հոգին հոն է... Միջին Արեւելք, որ կը շարունակէ բռնկուիլ 2011էն ի վեր: Երէկ՝ Թունիզիա, Եգիպտոս, Պահարէյն, Լիպիա, այսօր՝ Սուրիա, Յորդանան, Պաղեստին ու Իսրայէլ:

Այսպէս կոչուած՝ «արաբական գարուն» մը սթափեցուցած է աշխարհն արաբերոյ: Որքան ալ ժողովրդավարութեան դրօշի տակ կ'ազդարակէ «խելագարուած ամբօրի»ը, նոյնքան եւ աւելի արմատական մահաբերական եղբայրութեան ընդհանուր տարագ մըն է, որ ձիւնազնդակի նման գլորուելով իր վրայ կը պատէ ժողովրդավարութիւն ու արդարութիւն ազդարակող թափօրը՝ «ամբօրիներուն խելագարուած»:

Յաճախ ըսուած է, որ քաղաքականութեան մէջ չկան մշտնջենական բարեկամներ, սակայն կան լաւատեսական շահեր: Ու այդ շահերէն մեկնած Միջին Արեւելքի նոր քարտէս մը կը գծուի վարագոյրին ետին, մինչ մեր աչքերուն առջեւ այսօր արիւն կը հոսի Հալէպի եւ Կազալի փողոցներուն մէջ: Անորոշ է այսպէս:

Այս բոլորէն անդին, ունինք Մայր Հայաստանը, որ հարաւային Կովկասի մէջ կը տուայտի «Պատերազմի ու խաղաղութեան» միջեւ:

Ըսինք, հոն է մեր միտքն ու հոգին: Մեր հայրենիքը, մեր ծննդավայրերը, ըլլան անոնք Երեւան, Գահրիէ, Հալէպ, Պաղտատ, Ամման կամ Երուսաղէմ:

Նոր Տարուան սեմին, տօնական այս օրերուն հոգեկից ենք մեր հարազատներուն, որոնք քաղաքական այս ճատրակի խաղերու ուստայնին մէջ բռնուած՝ «արաբական գարուն» ձիւնազնդակին գոերը կը դառնան:

* * *

Երբ կը գրուին այս սողերը, Երուսաղէմի հայոց դարաւոր Պատրիարքութիւնը դուրս կու գայ իր

քառասնօրեայ սուգի շրջանէն, ու կը պատրաստուի ընտրելու 97րդ գահակալը Առաքելական Սուրբ Աթոռին:

Երանաշնորհ Տ. Թորգոմ Պատրիարքի վախճանումէն ետք, գինուորեալ միաբանութիւնը Երուսաղէմի, ըստ սովորութեան ամէնէն տարէց անդամը՝ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեանը ընտրեց Տեղապահ, նախապատրաստելու միաբանութիւնը ընդհանուր ժողովին, ընտրելու համար յաջորդ պատրիարքը Սրբոց Յակոբեանց Ուխտին:

Թուականը որոշուած է: Յունուար 23-25, 2013:

Կը նախատեսուի որ շուրջ երեսուն միաբաններ համախմբուին Երուսաղէմ, միասնաբար սօնելու մեր Տիրոջ Սուրբ Ծնունդն ու Աստուածայայտութեան տօնը, Յունուար 18-19 (ըստ հին տոմարի), ապա կատարեն միաբանական ընդհանուր ժողովը, ուր պիտի քննարկուի նաեւ պատրիարքութեան ներկայ կանոնադրութիւնը, պիտի կատարուին որոշ բարեփոխութիւններ, պիտի քննարկուին պատրիարքութիւնը յուզող այլ հարցեր, կալուածական, շինարարական, տնտեսական եւ այլն եւ ապա կատարուի պատրիարքական ընտրութիւն:

Ընտրութիւն մը, որուն պէտք է մօտենալ ամենայն լրջութեամբ, խոհեմութեամբ եւ ողջմտութեամբ: Վերջապէս, դարաւոր Առաքելական Սուրբ Աթոռի գահակալի մասին է խօսքը, որ հեղինակութիւն ունի Ս. Քաղաքին մէջ, իր վայելած առանձնաշնորհումներով:

Թէպէտ ամէն եպիսկոպոս կամ վարդապետ կրնայ թեկնածու ըլլալ, սակայն պատրիարքական աթոռը բոլորին համար չէ...:

Թէպէտ գրաւոր օրէնք մը կամ պայմաններ չկան, սակայն կայ անգիր օրէնք մը, վիճակացոյցը՝ թեկնածուին, որ ցոյց կու տայ անոր հաւատարմութիւնը Ս. Ուխտին, վանքէն ներս անոր ունեցած ծառայութեան վաստակը, եկեղեցագիտական, Աստուածաբանական, վարչական, տնտեսական եւ դիւանագիտական կարողութիւնները:

Թէպէտ երեսուն միաբաններէն կան երկու գլխաւոր թեկնածուներ, սակայն, պատրիարքական թափուր աթոռին տենչացող՝ կան անատակ հոգեւորականներ, որոնք գուցէ իրենց հօր ազարակը կը կարծեն դարաւոր այս հաստատութիւնը ժառանգելու:

Աւելի պարզաբանենք: Երկու գլխաւոր թեկնածուներն են, Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեանը եւ Գերշ. Տ. Խաթակ Արք. Պարսամեանը:

Առաջինը՝ որպէս Միաբանութեան Լուսարարապետ եւ Պատրիարքական Փոխանորդ, ի պաշտօնէ կը դառնայ թեկնածու:

Երկրորդը՝ որպէս Առաջնորդ ԱՄՆի Արեւելեան Թեմին, կրնայ դառնալ հաւանական թեկնածու: Ըսինք կրնայ դառնալ, որովհետեւ ցարդ Գերաշնորհ Սրբազանը յայտարարած է թէ ինք թեկնածու չի փափաքիր ըլլալ:

Այս երկու գլխաւոր թեկնածուներէն զատ, Սուրբ Աթոռին տենչացող անատակ հոգեւորականներ ալ կան: Ա՛յս ալ պարզաբանենք:

Հոգշ. Տ. Բաբգէն Ծ. Վրդ. Անուշեան:

Մեզի անձանօթ վարդապետ մը: Լսած ենք, որ փաստաբանութիւն ուսանած է եւ այժմ կը ծառայէ Նիւ Ճըրզիի մէջ:

Այս հոգեւորականը մասնակցեցաւ Հոկտեմբեր 19ին կայացած միաբանական ընդհանուր ժողովին, եւ իր թեկնածութիւնը դրաւ Տեղապահի ընտրութեան: Բարեբախտաբար ան ստացած էր մէկ ձայն միայն (ՈՎ գիտէ... գուցէ ինքնիրեն էր ընտրած):

Ըսինք բարեբախտաբար, որովհետեւ կուսակրօն քահանայ ձեռնադրուելէն ետք, ո՛չ միայն մէկ տարի ծառայած էր վանքէն ներս, այլ տասնեւչորս տարի առաջ, Երանաշնորհ Տ. Թորգոմ Պատրիարքը երբ գինք կանչած էր Երուսաղէմ, որպէս ուսեալ հոգեւորական եւ փաստաբան ծառայելու հաստատութեան կարիքներուն, Տ. Բաբգէն վարդապետ, որ Ս. Աթոռին շնորհիւ ուսում ստացած էր եւ վայելած բարիքները վանքին, նիւթական մեծ պահանջք էր դրած.. որպէսզի վանք վերադառնար ու ծառայէր Սուրբ Աթոռին: Ու այդպէս ալ... չվերադարձաւ:

Իսկ այսօր՝ կը տեղեկանանք, որ ախորժակ ունի թեկնածու դառնալու:

Երկրորդը՝ կրկին Միացեալ Նահանգներէն Ամերիկայի, Գերշ. Տ. Վիգէն Արք. Այքազեանն է, որ նոյնպէս կարճ շրջան մը միայն ծառայած է վանքէն ներս: Ներկայի կը ծառայէ Ուաշինկթընի մէջ, որպէս նուիրակ Հայց. Առաքելական Եկեղեցոյ:

Անմիջապէս ըսենք, որ Սուրբ Աթոռը «թուրիստ պատրիարք» ի կարիքը չունի: Սուրբ Աթոռը վանական կեանք է, եւ կարիքը ունի Սուրբ Ուխտին հաւատարիմ, ծառայասէր, վանքին եւ պատրիարքութեան կարիքները հոգացող հոգեւորականի մը, որ կը սիրէ վանական կեանքը:

Վերոյիշեալ երկու հոգեւորականները, որոնք վայելած են բարիքները Սուրբ Յակոբին եւ դարաւոր պատրիարքութեան, տարիներով բացակայած են վանքէն, եւ թէպէտ ծառայած են Ամերիկայի Հայց. Եկեղեցոյ Արեւելեան Թեմին, սակայն այդ տարիներու ընթացքին չեն ցուցաբերած այն գործնական օժանդակութիւնը, երբ լա՛ւ գիտէին որ Սուրբ Յակոբը իրստ կարիքը ունէր իր ուխտեալ զաւակներուն: Հեռաւոր Ամերիկայի տաքուկ անկիւններէն ո՛չ իսկ բաժնեկից եղան այն մտահոգութիւններուն, որ Երանաշնորհ Պատրիարք՝ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանը, լ՛ուռ կ'ողբար վանքին եւ պատրիարքութեան իրավիճակին ու ապագային համար: Ո՛ւր էին Սուրբ Յակոբին եւ Սուրբ Գլխադրին իրենց ծառայութեան ուխտը կատարած աթոռատենչ այս հոգեւորականները: Ինչո՞ւ պատրիարքութեան ամենածանր օրերուն չփութացին իրենց Տունը, օգտակար ըլլալու պատրիարքութեան, ինչպէս ըրին, Գերշ. Տ. Արիս եւ Տ. Նուրհան սրբազանները, Հոգշ. Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանը, եւ ուրիշներ:

Ահա թէ ինչո՞ւ, Սուրբ Աթոռը «թուրիստ պատրիարք» ի կարիքը չունի:

Ըսինք Պատրիարքական աթոռը բոլորին համար չէ, ինչ փոյթ եթէ վանքէն հեռացած ու վանական կեանք չսիրող անատակ հոգեւորականներ, որոնք ո՛չ մէկ վաստակ ունին Սուրբ Աթոռէն ներս, աթոռատենչութեան յոյսեր ալ փայփայեն:

Առ այժմ այսքան: Անցինք: Պատրիարքական հնգանուն կամ եռանուն ցանկին վրայ կրնայ նաեւ երեւնալ ներկայ Տեղապահը, Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեանը:

Սակայն, ինչպէս յիշեցինք, միաբանութեան կանոնադրութեան մէջ պիտի կատարուին լուրջ բարեփոխութիւններ, մանաւանդ նկատի պիտի առնուի պատրիարքական

Շար.ը էջ 43



ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅՈՎԻԿ ԵՒ ԱՐՄԻՆԷ ԼԱԶԻՆԵԱՆ
ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՄԱՍԻՍ - 2013

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՍԵՄԻՆ

Թեկնածուի տարիքի սահմանափակումը:

Գերաշնորհ Սրբազանը, որ 79 տարեկան է, նոյնպես արտայայտուած է որ նկատի ունենալով իր յառաջացեալ տարիքը եւ մանաւանդ առողջական վիճակը, չի փափաքիր Թեկնածու ըլլալ:

* * *

Միոնի բարձունքը՝ ուր կը գտնուի պատրիարքութիւնը հայոց, որպէս Առաքելական Սուրբ Աթոռ համաշխարհային եւ միջազգային կարեւոր իմաստ ունի, իր եզակի դիրքով եւ ունեցած Աստուածապարզել իրաւունքներով ու իրաւասութիւններով:

Սեպտեմբեր 2010ին, «Օրուան Պահանջքը» խորագրով, հայ մամուլի էջերէն ահագանգեցինք պատրիարքութեան դիմագրաւած տիրուր իրավիճակին մասին, ահագանգեցինք Աթոռակից Պատրիարքի մը ընտրութիւնը, միշտ նկատի ունենալով Պատրիարք Հօր յառաջացած տարիքը, հիւանդութիւնը, անկարողութիւնը եւ մանաւանդ Միջին Արեւելքի քաղաքական պայթեթուցիկ իրավիճակը: Միալած չէինք:

Նոր Տարուան սեմին կը գտնուինք յոյժ կարեւոր իրադարձութիւններու առջեւ:

* * *

Երուսաղէմի Սուրբ Աթոռը տարիներ շարունակ, Եղեռնէն ետք թէ «Պաղ Պատերազմ»ի տարիներուն, իր միաբանութեան անդամները առաքած է տարբեր առաքելութիւններու բոլոր Նուիրապետական Աթոռներուն... երբ անոնք իրիստ կարիքը ունէին Երուսաղէմի միաբան անդամներուն օժանդակութեան:

Այսօր, այս ծանր օրերուն, բոլորս ալ լաւ գիտենք, կը հասկնանք ու կ'ըմբռնենք, որ Երուսաղէմի ներկայ իրավիճակը խիստ կարիքը ունի նոր արիւնի եւ նոր ուժերու:

Այսօր հերթը Երուսաղէմինն է:

Չենք կրնար եւ պէտք չէ՛ ոեւէ հայրդի, հոգեւորական թէ աշխարհական անտարբեր մնայ այս դարաւոր հաստատութեան կարիքներուն առջեւ:

Ըսած ենք, որ «Աստուած ինքզինք կը յայտնէ մարդոց, քանի Ան միշտ ունեցած է իր ընտրեալները, որոնց կը խօսի»:

Այսօր այդ ընտրեալներէն մէկը կը հանդիսանայ Հայաստան-

եաց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ Գանատայի Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բագրատ Եպիսկոպոս Գալստանեանը, որ կը տեղեկանանք թէ դիմում կատարած է միանալու Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ուխտին:

Բարձրաշնորհ Սրբազանին փափաքը եւ դիմումը կը խրախուսէ մեզ, որպէս Հայաստանեաց Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ իշխանաւոր, որպէս Աստուածաշնորհ ու տաղանդաւոր հոգեւորական, ուսեալ, վարչական կարողութիւններով փորձառու եւ ամէնէն կարեւորը՝ հմուտ դաւանական, եկեղեցագիտական եւ մանաւանդ Քրիստոսաբանական հարցերու:

Այո՛... Երուսաղէմը խիստ կարիքը ունի նման երիտասարդ հոգեւորականներու, փրկելու մեր դարաւոր պատրիարքութիւնը իր ներկայ անփառունակ իրավիճակէն:

Կասկած չունինք, որ սրբազանին դիմումը եւ անոր ծառայութիւնը Սուրբ Ուխտին, նոր աւելու արիւն պիտի ներարկէ միաբանութեանն ներս:

Աւելին՝ կ'ուզենք հաւատալ, որ Բարձրաշնորհ Սրբազանին այս քայլը, օրինակ դառնալով, կը վարակէ Երուսաղէմէն դուրս ծառայող այն հոգեւորականները, որոնք իրենց ուխտը կատարած են առաջի Սուրբ Յակոբայ Տեառնեղբօր Սուրբ Սեղանին: Ինչո՞ւ չէ, նաեւ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ուղղափառ հոգեւորականները, որոնք կ'ուզեն ծառայել Քրիստոսակոխ հայոց սրբապաշտներուն մէջ, վերականգնելու հոգեւոր պարիսպը մեր դարաւոր պատրիարքութեան, հոգեւոր եւ մշակոյթի նոր գարթօնքով վերածաղկեցնելու Տունը Սրբոց Յակոբեանց, ի փառս Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի:

* * *

Նոր Տարուան սեմին մեզի կը մնայ Քրիստոսի խաղաղութիւնը մաղթել մեր զինուորեալ միաբանութեան անդամ հոգեւորականներուն, որ Քրիստոսի սէրով եւ աղօթքի զօրութեամբ, համերաշխ մթնոլորտի մէջ քննարկեն Սուրբ Աթոռը յուզող հարցերը եւ անսան իրենց խղճի ձայնին, անսան Սուրբ Գլխադրին եւ Սուրբ Յակոբայ Տեառնեղբօր Սուրբ Սեղանին առաջ իրենց կատարած ուխտին ու խոստումին եւ վերջապէս կատարեն իրենց որդիական պարտականութիւնը ընտրելով արժանաւոր դա-

հակալ մը Սուրբ Աթոռին:

Նոր Տարուան սեմին մեր այս խորհրդածութիւնները կ'եզրափակենք Եղիվարդի խօսքերով, որ 95րդ Պատրիարքը հանդիսացաւ Սուրբ Աթոռին:

«Տօները հանգրուաններ են, ամէն տարի իրարու յաջորդող, որոնք կու գան մեր կեանքին մէջ առիթ ըլլալու, որ նորոգուի եւ կենդանանայ մնալունը եւ մեռնի ու չքանայ խեղճերանքը: Մենք պարտինք ծնիլ ու կը ծնինք՝ թաղելով թաղելիները, նկատելով անկատարութիւնները, որոնք իբր մաս մեր առօրեային՝ վրիպած էին մեր նկատումէն, տեսնելով զալիքը իր բոլոր շքեղութեանը մէջ, որ հոմանիշ է ծնիլը արժեւորելու: Ի վերջոյ պէտք է ինչամտինք թէ մենք չենք եկած հոս, մեզի տրուած ժամանակին մուրհակը ստորագրելով վճարելու ու երթալու: Եկած ենք զմեզ աւելցնելու մեր մասերուն մէջ, զմեզ խորանարդելու, անգամ մը եւս ծնելու, ինչպէս կ'ըսենք սովորաբար:

Տառապեցանք, սիրեցինք, մաշեցանք, հիւսնանք, բայց Նոր Տարուայ սեմին՝ այս արարքներուն անդրադարձներն են որ պիտի շարունակեն խմորը կազմել մեր զալիքին, անշուշտ որոշ յաւելումերով,

վասնզի ամէն ապրում մեր հոգիին վրայ ճամբու մը պէս է, նման արցունքի հետքին՝ մեր այտերէն վար: Ուրիշ խօսքով, մեր վաղը՝ թաւալուն կաթիլ մըն է, մեր երէկի ճամբաներէն փշուր-փշուր գոյանալիք: Երէկը կը մեռնի վաղուան երկունքին մէջ: Նոր Տարին կամուրջն է ժամանակին, դէպքերը կը փլին կամ կը սահին իր ներքեւէն, բայց մեր ներքին ձայնը ամէն Ամանորի նորէն կը կազմէ իր ճամբան դէպի յաւիտենականը:

Երբ այս հարազատ ժամանակով խորհինք ու ապրինք, մեզի եկող օրերը պիտի չխուսափին մեզմէ, ինչպէս մեր մասերը պիտի չփոշիանան անցեալի վիհին մէջ ու պիտի ազատինք ապագայի անստուգութենէն, անձկութենէն եւ գուցէ մահուան մղձաւանջէն»:

Մեր մաղթանքն է, որ Յունուար 23-25 Միաբանութեան Ընդհանուր Ժողովին, իւրաքանչիւր միաբան լսէ՛ իր խղճի ներքին ձայնը եւ կատարէ իր ընտրութիւնը, որպէսզի պատրիարքութիւնը շարունակէ իր յաւիտենական երթը ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութեան Հայաստանեաց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, եւ ի պահապանութեանն Հայ Երուսաղէմի:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Շարունակուած էջ 34-էն


ղեստինեան պետութեան մը ճանաչման աշխատանքները:

Այսուհանդերձ երկու ամիս առաջ, ՄԱԿ-ի մէջ պաղեստինեան դատը յաջողութիւն մը արձանագրեց, երբ 138 երկիրներ թեր քուէարկեցին ՄԱԿ-էն ներս Պաղեստինեան պետութիւնն ընդունելով իրաւասու դիտող երկրի հանգամանքով: Այս որոշման դէմ քուէարկած էին 9 երկիրներ, իսկ վերապահ մնացին 41 պետութիւններ:

Լուրը մեծ ցնծութեամբ դիմաւորուեցաւ Կազաչի եւ Արեւմտեան ափի պաղեստինցիներու կողմէ, զայն քայլ մը առաջ նկատելով դէպի ամբողջական ճանաչում:

Իրերու այս կացութեան աւրընթեր Իսրայէլ որոշած է 930 յարկաբաժիններ կառուցանել արեւելյան Երուսաղէմի մէջ եւ 300 այլ բնակարաններ եւս Գէրօ արուարձանին մէջ: Բացի ԱՄՆ-էն ՄԱԿ-ի ապահովութեան Խորհուրդի բոլոր անդամներն ալ դատապարտեցին Իսրայէլի ծաւալողապաշտական այս ծրագիրը:

ԿԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՁ (200 ՇՈՂԻ ՇԱՄՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ՇԱՄՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՍԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆԵՐ՝
ՇԵՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՍԵՒԱԿ ԵՒ ՔՐԻՍՏՈՒՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՄԱՍԻՍ - 2013

**ՆՈՐ ՏԱՐԻՆ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ԵՕՂՈՒՆՕԼՈՒԳ ԳԻՒՂՈՒՄ
ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԿԿ ԼԱԳՍԵԱՆ**

է հէ՛յ, արմէննե՛ր, վե՛ր կա-
ցէ՛ք, էլէ՛ք, ում սրտի ծովակները
կարմիր են հագել մուսանների պաշ-
տամունքի լերան կարմիր գագա-
թի Միհր աստծոյ արեւալոյսով,
ու՛մ հոգիների տաճարներում վառ-
ւում են իրենց աշխարհի ոգու
Չահերը, ու՛մ սրտում կաթել է
արմենացած-հայացած լերան կուռւմ
ընկած քաջի մի կաթիլ արիւն, ու՛մ
հոգում իր սրբազան լեռնաշխարհի
սիրոյ, կարօտի աստուածն է գարթ-
նել, ու՛մ հոգում հայոց հին աստ-
ուածները շեփոր են հնչում՝ լսե-
ցէ՛ք իմ թմբուկի զարկերի հրակէ-
րը: Եկէ՛ք, լերան գագաթին պար-
զած՝ Նագովրեցի Յիսուսի արեամբ
կարմրած սպիտակ դրօշը գրկած,
Ձեւսի ինն մուսա դուստրերի պաշ-
տամունքով հեթանոսացած, ար-
մէն-հայերի պատերազմի կախարդ՝
արեւելեան կողմն աշխարհի ար-
բաների-արքայ Տիգրանի շառա-
ւիղների լերան լանջեր գնանք:
Նաւասարդ-Նոր Տարի տօնախմ-
բենք նրա լանջերին փառած Եօ-
ղունօլուգ շէնի շուկայի հրապա-
րակում, այնտեղից պայթած գե-
տակի ափին խոյացած սօսի ծառի
բացատում թմբուկ զարկենք, Նա-
ւասարդի խրախճանքով, արեւ
աստծուած Միհրի կարմիր կրակ
լոյսով արբենանք:

Եօղունօլուգի գիւղամիջեան
ճանապարհին բազմած, լուսնի անուշ
դէմքով աղբիւրից մինչեւ խոր
ձորի բարձունքը շէնի շուկան է,
նրա աջ ու ահեակ կողմերին խա-
նութներ: Լերան լանջերից իջնող
ճամբաները խաչաձեւում են նրան,
որոնց հատման տեղամասերում փոք-
րիկ հրապարակներ են: Ծէնի հա-
ւաքատեղիներն են անոնք՝ տարբեր
խաղերի, տօնախմբութիւնների,
հանգստեան օրերի, իրիկնային
հանգստի ժամադրավայրեր: Նա-
ւասարդ-Նոր Տարուայ նախատօ-
նակ, շուկայի տարբեր մասերում,
տների բակերում դաբնու երկար
ոստեր են՝ գագաթներին հոծ կա-
նաչ, տերեւների արանքներից սեւ
սաթի նման փայլատակող դաբ-
նեպտուղներ:

Խմբերով գնում էին Մուսա
Լերան թիկունքի ՝Օմարէն Գի-
տէյն՝ դաշտի լանջերին փուռած
անտառներից դաբնու երկար ոս-
տեր բերելու: Մայր բնութիւնը
կանաչ ծով էր երկնել լեռների
լանջին, հանդիպակաց հայոց ծո-
վածոցի փրփրած ջրերի բախու-
մից յառնած գեփիւռը անուշ

գգուանք էր շող տալիս նրա երե-
սին, դէմքն էր քնքշանքից ժպտում,
ալիքում: Մովակի կանաչ ալեակ-
ները հոսում էին դէպի երկնի
կապոյտը, մայր բնութեան այդքան
խայտանք ո՞վ է հոսել նրա սրտին:

Այդ դաշտի անտառից էին
դաբնու ոստեր բերում: Այդտեղ
էին, որ իրենց պապերը, հայրերը
բազմախումբ դուշմանի դէմ յաղ-
թական ճակատամարտ մղել: Կուռւմ
ընկած արեւորդիների սրտերի ծո-
վակներից պայթած արիւնն էր
հոսել դաբնիների ոստերին, այն
պիտի լցնէին խարոյկի կրակին՝
նուիրաբերելու արմէնների լոյսի-
կրակի-արեւի Արա-Միհր աստ-
ուածներին: Յաղթանակ, Արմինա-
Հայաստանի Տիգրան Արքայի դիւ-
ցագունների կուռի ոգու պոռթկու-
մի էր այն: Նրանց հազար-հազար
տարիների շառաւիղները աւան-
դաբար իրար փոխանցել էին, որ
իրենք հայրենապաշտ հայկազուն
արքայի զարմից էին, որ նրա
բանակների հետ հասել այդ լեռ-
ներ, որ իրենց եւ իրենց քաջ
նախնիների աշխարհների սահման-
ները իրենց գէնքերն էին: Ուրիշ
երկրի կուռւմ զինուորը իր իրա-
նով հրանօթ է լռեցրել, իսկ այդ
կուռւմ արծուի խոյեանքի սրտով
մի դիւցազուն Արմէն տղայ, բնու-
թեան հանդերձով ծպտեալ, տար-
բեր թաքստոցներից մօտեցել այդ
կուռի թատերաբեմ ելած դուշմա-
նի թնդանօթին, տարբեր դիրքե-
րից, որսորդական հրացանի չորս
կրակոցներով սպաննել չորս թնդա-
նօթաձիգներին, ողջ մնացած սպան
կուռից շտապ հեռացրել է թնդա-
նօթը: Ձէնք, նրա փողից ժայթքած
վառօղի բուրմունքը, իրենց լեռ-
ներում կուռի ելած ունչապարների
սրտերին հայրենի հողի ոգու ար-
բեցում էր հոսել:

Գիւղի մայր ճանապարհի շու-
կայի կեդրոնական հրապարակում
վեր է խոյացել վառելիփայտի ու
ցախի դէզը՝ խարոյկը: Նոր տար-
ուայ նախատօնակի իրիկնադէմ,
դաբնու ոստերը որպէս Չահեր վեր
պարզած, Եօղունօլուգիները գա-
լիս խմբում էին խարոյկի բոլոր-
տիքը: Չուարթ բացականչութիւն-
ների հոնդիւնի ուղեկցութեամբ,
ընդունուած կարգի համաձայն գիւ-
ղի, աւազն էր վառում խարոյկը:
Կարմիր բոցերն էին ժայթքում
դէպի վերեւ, արեւ աստուած Միհ-
րի դէմքն էր շառագունում, կար-
միր ժպտում էր: Հազար-հազար

տարիներ Արմէն-Հայ արեւորդի-
ների սրտերում չմարեց իրենց
լոյսի, արեւի, կրակի աստուած-
ներ՝ Արայի-Միհրի բնութեան խոր-
հուրդի կրակի պաշտամունքը: Խե-
լարում էր խարոյկը, պայթում էր
խարոյկը, կրակի կարմիր բոցերը
բարձրանում էին վերեւ, նրա լոյսը
տանում արեւորդիների հին աստ-
ուածների տաճարներ, աւետելու
նրանց՝ իրենց հրաշափառ գոյա-
տեւման առեղծուածը: Խարոյկի
բոցերն էին շիկնել պարմանուհի-
ների անուշ դէմքերը, պարմանե-
րի սրտերին քաջութեան սխրանք,
իրենց լեռներին պաշտամունք,
իրենց արտերին ու հանդերին սի-
րոյ հուր կաթում: Կրակի բոցերի
կարմիր խոյեանքով արբեցած,
բարձր բացականչութիւններով
դաբնու ոստերը զարկում խարոյկի
բոցերին, կանաչն էր վառում,
պայթում էին սեւ սաթէ պտուղնե-
րը, հազար-հազար կարմիր աստ-
ղիկներ դուրս թռնում խարոյկի
բոցերից, պարմանները նրանց իրենց
ափերի վրայ պահած տանում որ-
պէս սիրոյ ծաղիկ նուիրաբերելու
պարմանուհիներին: Յնծութիւն էր
հրապարակում, արեւորդիները
ցատկում էին խարոյկի վրայից,
նրա բոլորտիքը շուրջ պար բռնում,
նախնիների կրակի փառաբանումն
էր: Աշխարհի դաւադիր՝ Մեծեր՝,
մարեցին Մուսա Լերան շէնի
Նաւասարդեան խարոյկները, չէ,
նման դաբնու ոստերով, նման խա-
րոյկ ուրիշ տեղ չիք, ինչու՞ այս-
քան արհաւիրք, մարեցին իրենց
հին աստուածների լոյսը, նոր լոյսը
մթնեց հայոց սրբազան լեռնաշ-
խարհը, ափոս եղեւ:

Նոր Տարի գիշեր, բոլորը
ժամացոյց չունէին որ նրա գալստե-
ան ժամը իմանային: Յերեկներին
երկնքում արեւի, իսկ գիշերներին
աստղերի դիրքով էին որոշում
ժամանակը: Իրեն կայսր հռչակած
Հռովմի գօրավարի աստղագէտ-
ներն են սահմանել Նոր Տարուայ
առաջին օրուայ սկիզբը եւ նրա
առաջին օրը՝ իրենց աստծոյ անու-
նով Յունուար ամսուայ մէկ: Ար-
մէն-Հայ արեւորդիների համար
Նաւասարդ-Նոր Տարի առաջին օրը
իրենց Նահապետ Հայկի թշնամու
դէմ տարած յաղթանակի օրն էր՝
Նաւասարդ ամիս, Օգոստոս 11,
թուականը 2492:

Իրիկուն, Միհր աստուածը հան-
դիպակաց ծովի ջրերում խարոյկ
էր վառել: Գիւղի տների ապակե-

պատ եւ կիսագլանաձեւ քարիւղի
լապտերներն էին վառում, գիւղն
էր լուսավառ ժպտում: Ուրախ էին
մասնաւորապէս տան փոքրերը, այդ
գիշեր նուէրներ պիտի ստանային:
Տան մեծ սենեակի կեդրոնում կլոր,
ցածրիկ սեղանն էր, բոլորտիքը
նստելու բարձիկեր: Սեղանի վրայ
ցորեանի հասկերի ցողուններից
հիւսած տափակ մատուցարան էին,
նրա չորս բոլորը նման փոքրիկ
մատուցարաններ: Նոր Տարուայ
նախորդ օրերին պատրաստուած
աւանդական ուտեստներն էին
բլրացնում սեղանի մատուցարա-
նին՝ թոնիրում եփած հուրագեղ
՝Պանրի Հաց՝: Այծերի կաթով,
չիր ու չամիչով, քաղցրաւենիքով
հունձուած՝ հարսերի վարդ ալտե-
րին ծաղկած անուշ ժպիտների
հանգոյն բազմաձեւ բոկեղներ, նրանց
չորս բոլորտիքը իրենց պարտէզ-
ների թարմ, չորացրած մրգեր,
աւանդական կերակուրներ:

Տօնածառ չէին գարդարում,
անտառներում եղեւնի չէր աճում,
այն հեռու գերմանների սովորու-
թիւնն էր: Սեղանի շուրջ էին
խմբում բոլորը, աւազը Տէրունա-
կան Աղօթքով օրհնում սեղանը,
ընտանիքին մաղթում բարեկեցու-
թիւն, առողջութիւն, իրենց հան-
դերին առատ բերք, արտերում
ծլած ցորեանի հասկերին բազում
ոսկեգոյն հատիկներ: Փոքրերն էին
անհամբեր, ընդունուած սովորու-
թեան համաձայն աւազը նուէրներ
պիտի բաժանէր: Տղաներին ՝Յե-
մէնի՝ (տափակ կօշիկ), աղջիկնե-
րին ՝Կէրմէր Ֆստան՝ (կարմիր
շրջագգեստ), բոլորը միասին եր-
գում իրենց խնձոյքների ուրախ
երգը՝

Կէրմէր ֆստան հէգուծ ի,
(Կարմիր հագուստ հագել է)
Հէլէ, հէլէ նինչու ի,
Չուց էլ հղուիր վիլլուծ ի
(Իչպէս էլ լաւ վայելել է)
Բոլորը նստում սեղանի շուրջ,
նոր տարուայ բարեմաղթանքներ
փոխանցում: Թաղի տղաները կի-
սաբաց դունից չուանով կապուած
տոպրակ էին ներս նետում: Տան
տիկիներ մրգեր, խմորեղէն լցնում
նրա մէջ: Նախնիներից աւանդ-
ուած սովորութիւն էր, իրենց բա-
րիքից բաժին հանել թաղի փոքրե-
րին:

Իրենց նախնիների Միհր արեւ
աստուածն էր առիւծի բաշերով



ՄԱՍԻՍ - 2013

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ԵՕՂՈՒՆՕԼՈՒԳ ԳԻՒՂՈՒՄ

Շարունակուած էջ 44-էն

բազմում Եօղունսօլուգի բարձր բլուրի գագաթին, Նոր Տարուայ առաջին առաւօտի կարմիր ողջոյն յղում շինականներին, առաջին լոյսի շողերը փռում գիւղի երեսին: Շէնի բոլոր ճամբաներով ուսնչարները շտապում էին եկեղեցի: Մինչեւ եկեղեցի մտնելը, նրա բակում իրար հանդիպած խումբ մարդիկ գրկախառնում էին՝ հաշտում, ներում իրար, այդպէս էր աւանդուած: Սուրբ Աստուածածին եկեղեցի, գիւղը հատանող հորիզոնական ու ուղղահայեաց խաչման կէտում խոյացած: Քարաշէն եկեղեցի՝ ճակատի որմերին, Վանա ծովի Աղթամար Սուրբ Խաչ տաճարի որմերին ծաղկած քանդակների նման, հիասքանչ գարդաքանդակներ, մուտքի դռան ճակատի միաձուլ քարին նրա վալերագրութիւնը աւետող Մեսրոպի գրերով արձանագրութիւն: Նոր Տարուայ առաջին օրուայ պատարագ՝ իրենց Վարդապետի տառապանքին նուիրուած ժամերգութիւն: Ընդարձակ էր սալաչատակ սրահը, Հաւատոյ Հանգանակի երեք խորհուրդների խորանները: Սրահ էին հոսում լացող ուռնիների նման կամարներ: Իրենց խաչուած Վարդապետին ձօնուած վշտահար կամարները, կարծես հնչում էին նրա վերջին խօսքերը՝ «Տէ՛ր, տար հոգիս»: Սուրբ Աստուածածին եկեղեցին կանգուն է, նրա տանիքին մզկիթ: Ասում են, որ կառավարութիւնը այն վերանորոգելու եւ վերածելու է գործող եկեղեցի, լինելու աշխարհում միակը որպէս երկու պաշտամունքների միատեղ աղօթատեղի:

Նաւասարդ, Նոր Տարիի առաջին օրուայ ու թշնամու թագաւորի դէմ իրենց Նահապետի յաղթանակի տօնախմբութիւն էր շէնում: Շէնի շուկայի տարածքում էին գիւղի այրերը: Քարով պատած նստարաններին նստած տարեցները պատմում լեռան կռուի դրուագները, իրենց կամաւոր-լեզնահանների Արարայի գրոհի սիրանքներից: Հերկէլինց Վէնիսի խանութի առաջ աւանձին գոյգերով «Տամա» խաղի մրցումներ էին, երբ մրցակցի գինուորը տապալում էր հակառակորդի ամրոցի դռները եւ հասնում նրա թիկունքի առաջին շարքին, բարձր կանչերով «Թագաւոր» էին հռչակում յաղթական գինուորին: Վէնիսի խանութի կողքին, «Բարձիմ»-ն էր աշխատատե-

ղում «Թամպուրա» նուագում, նրա լարերի դողից հնչում էին իրենց պարեղանակները, ներսը, դուրսը ջահելները, ահելները պար էին բռնում, պայթում էին վեր պարզած ատրճանակները, նրանց կրակալոյս շանթերը բարձրանում իրենց Միհր աստծոյն՝ Մուսա Լեռան յաղթանակի ողջոյնը տանելու:

Եօղունսօլուգը հատող ձորն էր արձագանգում թմբուկի հնչիւնները, Մուսա Լեռան համանուագն էր այն: Լսե՛լ ես ձորերում հնչած համանուագները՝ բնութեան տիեզերածին խոյեանքն է այն: Նոր Տարուայ առաջին օրը, տղամարդիկ իջնում էին իրենց շէնին յարած Խրտրպէկ գիւղ, խրախճանալու նրա գետակի ափերին խոյացած հաստաբուն, հագար-հագար տարիների արեւամերձ սօսիի հովանու տակի սրճարաններ: Սօսի, նախնիների պաշտամունքային ծառ, հայոց հին աստուածների սրբավայր՝ Աշտիշատի սօսիի անտառակից էին բերել նրա տնկին: Մուսա Լեռան թմկահար Կիրակոսը գարկում էր թմբուկը, թեւանցուկ այրեր, կանայք իրենց նախնիների շուրջ պարերն էին բռնում: Ես, Եօղունսօլուգի կամաւոր Արմենակի տղէկ, դիտել եմ սօսիի ստուերում նրա մենապարը, նրա ատրճանակի պայթիւնների հետ ծափ տուել, նայել վերեւ ինչպէ՛ս էր նրա փողից ժայթքած շանթերի լոյսը կարմիր կրակով վառում սօսին: Կիրակոսը ուժգին գարկում է թմբուկը, մերկացած դաշոյնները վերեւ պահած երկու պարմաններ պարի դուրս գալիս, խելայեղ խոյանում իրար վրայ, գարկում դաշոյնները, կայծեր թռչում, աստղիկներ դարձած իջնում ներքեւ: Կիրակոսն էր ծանր նուագ գարկում, կանայք, այրեր նագանքով պար գալիս, ուժգնամում էին թմբուկի գարկերը, պարողների տփիւնից սօսին էր երերում, դողում էր Մուսա Լեռը, աւետում աշխարհին մուսանների պաշտամունքի լերան խրախճանքը:

Ձարմանալի է, Նոր Տարուայ գիշերը, Ձմեռ Պապը)Սանդա Կլաուզը(Մուսա Լեռ չէր գալիս: Մութ էին նրա լեռները, ձորերը, ճամբաները նեղլիկ, նրա կառքը ինչպէ՛ս պիտի ճամբորդէր: Իմ ապու պապ Սարգիս տղեկը, գիւղի լաճերը չէին հաւատացել շարքերին, սատանաներին, նրանց հետ մենամարտելու համար իգո՛ւր էին գիշերները ձորերում փնտուել նրանց, յուսախաբ տուն էին վերադարձել եւ ինչպէ՛ս պիտի

հաւատային ծպտեալ մէկին, որը իբր նուէրներ պիտի բերէր իրենց, չէ, այդ լինելու բան չէր: Իսկ շատ հեռու ամերիկաներում, Վիրճինիա անունով մի աղջնակ, հարիւր տարիներ առաջ իրենց քաղաքի New-York Sun լրագրին հարցում է արել Սանդա-Կլաուզի գոյութեան մասին:

«Ես ութ տարեկան եմ: Իմ փոքրիկ ընկերներից ոմանք ասում են Սանդա-Կլաուզ չկայ: Հայրիկս ասում է եթէ դու այն տեսնում ես լրագրում, ապա այն այդպէս է: Խնդրում եմ ասէ՛ք ինձ՝ կա՞յ Սանդա-Կլաուզ»: Լրագրի երկարամեայ խմբագիրը, հետեւեալ պատասխանն է հրապարակել:

«Վիրճինիա քու փոքրիկ ընկերները սխալ են: Նրանք, իրենց տարիքի թերահաւատութեամբ են տառապում, նրանք հաւատում են միայն նրան՝ ինչ որ տեսնում են: Մտածում են ոչինչ կարող է լինել, որը հասկանալի չէ իրենց փոքրիկ ուղեղներով: Վիրճինիա, բոլոր մտքերը՝ թէկուզ լինեն մարդկանց կամ երեխաների, փոքր են: Մեր այս անհուն տիեզերքում, մարդը համեմատուած անեղր աշխարհի հետ, իր ինտելեկտով պարզապէս մի միջատ, մրջիւն է, ինչպէ՛ս կարող էր իր մտածողութեամբ ըմբռնել ամբողջ ճշմարտութիւնը եւ բոլոր գիտելիքները:

«Այո Վիրճինիա, կա՛յ Սանդա-Կլաուզ»:

«Նա, անտարակոյս գոյութիւն ունի, այնպէս ինչպէս որ սէրը, ագնուութիւնը, բարեպաշտութիւնը գոյութիւն ունեն: Դու գիտե՞ս արդեօք, որ նրանք քու կեանքում կան որպէս վսեմագոյն գեղեցիկութիւն եւ հրճուանք: Աւաղ! Ինչպէ՛ս տրտում պիտի լինէր աշխարհը, եթէ չլինէր Սանդա-Կլաուզը: Աշխարհը նաեւ, նոյնքան տխուր պիտի լինէր, եթէ չլինէին Վիրճինիաներ: Այն ատեն պիտի չլինէին ոչ մանկական հաւատք, ոչ բանաստեղծութիւն, ոչ սիրերգ, եւ ինչպէ՛ս հանդուրժելի պիտի լինէր այս կեանքը: Իմացականութիւնից ու տեսանելիութիւնից բացի, մենք ուրիշ վայելք պիտի

չունենայինք:

«Չհաւատալ Սանտա-Կլաուզին!! Դու նոյնպէս կարող էիր չհաւատալ պարիկներին: Դու կարող էիր նոյնպէս խնդրել քու հայրիկին, որ Մուսանդի Նախորեակին մարդիկ վարձէր, որպէսի հակէին բոլոր ծինելոյցները՝ հանդիպելու համար Սանտա-Կլաուզին: Սակայն եթէ դու նոյնիսկ չէիր տեսնի Սանտա-Կլաուզին վայր իջնելիս, ի՞նչ պիտի ապացուցէր այն: Ոչ ոք չի տեսնում Սանտա-Կլաուզին, բայց այն իրականութիւն չէ որ չկայ Սանտա-Կլաուզը: Աշխարհում ամենաշատ իրական բաները այն են, որ ոչ երեխաները եւ ոչ էլ մարդիկ կարող են տեսնել: Դու երբեւիցէ տեսե՞լ ես պարիկներին մարգագետիններում պարելիս: Անշուշտ ոչ, սակայն այդ ապացույց չէ որ նրանք այնտեղ չեն: Ոչ ոք կարող է ըմբռնել կամ երեւակայել չտեսնուած ու չնշմարուելիք բոլոր այն հրաշքները, որոնք կան աշխարհում:

«Դու, մաս-մաս պատուիր պուպրիկները, տես ներսում ինչն է աղմուկի շառաչի պատճառը: Սակայն կայ մի վարագոյր, որը ծածկում է անտեսանելի աշխարհը, ոչ ամենահզոր մարդը եւ ոչ էլ որեւէ ժամանակ ապրած ամենահզոր մարդկանց միացեալ ուժը կարող էին այն պատուել: Միայն հաւատքը, բանաստեղծութիւնը, սէրը, երեւակայութեան սիրերգութիւնը կարող են մի կողմ հրել այդ վարագոյրը եւ տեսնել, եւ նկարահանել այդ երկնային գեղեցիկութիւնը եւ նրա այն կողմի երկնային փառքը: Այդ բոլորը ճիշտ են: Ահ, Վիրճինիա, այս ամբողջ աշխարհում չկայ ուրիշ ոչինչ իսկական ու հաստատուն:

«Ո՞չ Սանտա-Կլաուզ: Փառք Աստծոյն, նա ապրում է եւ ապրելու է յաւիտեան: Վիրճինիա, հիմակուանից հագար տարիներ առաջ, դրանից բացի տասը անգամ տասը հագար տարիներ չեստոյ էլ, նա պիտի շարունակի մանկութեան սրտերը գուարթ պահել»:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
 SERVING BATON ROUGE SINCE 1979

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
 More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
 Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՄԱՍԻՍ - 2013

ՄԱՀԱԶԴԻ



ՅՈՎԱԿԻՄ ԴԱԴԱՅԱՆ

Ծննդյան օգոստոս 10, 1938ին, Դամասկոս, Սուրիա

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնին, հօր, մեծ հօր եւ հարազատին՝ ՅՈՎԱԿԻՄ ԴԱԴԱՅԱՆԻ Մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, Դեկտեմբեր 30, 2012ին:

Տեսակցութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի Յունուար 3, 2013, երեկոյան ժամը 7:00ին, Սուրբ Ղեւոնդ Մայր Տաճարի մէջ 3325 N. Glenoaks Blvd. Burbank, CA:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ Յունուար 4, 2013 կեսօրէ ետք ժամը 1:00ին Սուրբ Ղեւոնդ Մայր Տաճարի մէջ եւ թաղումը Forest Lawn – Hollywood Hills, 6300 Forest Lawn Dr. Los Angeles, CA 90068:

Սգակիրներ՝ Այրիճի Տիկ. Սեդա Դադայան Որդիճի Տէր եւ Տիկ. Վարուժան Եւ Արմինէ Դադայաններ եւ զաւակները Դուստրըի Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Թագուհի Թափլեաններ եւ զաւակները Դուստրըի Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Նեքսալաններ եւ զաւակները Դուստրըի Տէր եւ Տիկ. Էտկար եւ Պերճուհի Աղվանյաններ եւ զաւակը Եղբայրը խաչիկ Դադայան եւ զաւակները - Ֆրանսա Եղբայրը Ազատ Դադայան եւ զաւակները - Հայաստան Եւ համայն Դադայան, Գրիգորյան, Թափլեան, Նեքսալան, Լորեցյան, Աղվանյան եւ Յովակիմեան ընտանիքները:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Armenian Bone Marrow Donor Registry ֆոնտին:

ՅԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Յաւով իմացանք թերթիս բարեկամ՝ Արմեն Կակաչեանի հօր՝ ՄԱՆՈՒԿ ԿԱԿԱԶԵԱՆԻ մահուան տիտղոս լուրը: Այս առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութեան կողմէ մեր խորագրագրացաւակգութիւնները կը յայտենք հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, հարազատներուն յատկապէս զաւակին Տէր եւ Տիկին Արմեն Կակաչեանին:

ՓՈՒՍԱՆ ԵԱՂԿԵՊՍԱԿԻ

ՄԱՆՈՒԿ ԿԱԿԱԶԵԱՆԻ մահուան տիտղոս առիթով Տօքթ. եւ Տիկին Համբիկ Սարաֆեան խորագրագրացաւակգութիւնները կը յայտեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, հարազատներուն եւ յատկապէս զաւակին Տէր եւ Տիկին Արմեն Կակաչեանին եւ առ այդ կը նուիրեն 100 տոլար «Մասիս»-ի ֆոնտին:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ...

Շարունակուած էջ 40-էն

մը յառաջացած էր արդէն եւ կը փորձէր իր տեղը գրաւել սփիւռքահայ գրականութեան մէջ: «Երազային Հալէպը» իր մթնոլորտով պահելու առաջադրանքով: Երազով...:

Յեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ Լիբանանի ու Սուրիոյ հայ գաղութները կարեւոր դեր ունին կատարելիք՝ որպէս Արեւմտեան Հայաստանի մերձ շրջաններ: Սուրիական տագնապին մէջ թրքական գործօնին ներկայութիւնը կը վտանգէ հայկական պահանջատիրութեան թափը: Կարելի չէ անտեսել թրքական ռազմավարութեան մէջ սուրիահայ յառաջապահ գաղութը ջլատելու եւ տարտըղնելու թշնամական միտումը: Հայ քաղաքական միտքը արթնորէն հսկելու է, որ դրական չէզոքութենէն հայ համայնքը չչեղի...: Թուրքիան պատրաստ է գայն շահագործելու Սուրիոյ իր դաշնակիցներուն միջոցաւ: Քանզու մի թիրախ ընտրուած հայկական կառույցները շատ բան կ'ըսեն

այդ մասին...: Թուրքիոյ հակառակ պետականորէն հակազդեցութիւններուն՝ ցեղասպանութեան միջազգային ճանաչումը իր ընթացքը կը շարունակէ: Անկախ Հայաստանը պետական մակարդակով ցեղասպանութեան ճանաչումը դարձուցած է իր արտաքին քաղաքականութեան առանցքը: Կը մնայ, որ ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ հայկական միասնականութիւնը ամրանայ եւ ճիւղերն ու պայքարը ուղղուին դէպի նոր յաղթանակներ: Յաղթանակներ ներքին եւ արտաքին ճակատներու վրայ: Ներքինը՝ Հայաստանի եւ Սփիւռքի նորահաս սերունդներու գիտակցութեան եւ հոգիին մէջ կորսուած Արեւմտահայաստանի երազը մշտարժարժ պահելու աննահանջ պայքարն է: Սրբազան Լեւոն Արարատին համեմատելու եւ տիրանալու ուխտով...: Արտաքինը՝ ցեղասպանութեան միջազգային ճանաչումի երթը շարունակելն է՝ Հայ Դատի հետապնդման ուղիով: Սփիւռքը Հայաստանին նեցուկ

ՆՈՐԱԳԻՏ ԳԻՐՔԵՐ

Շարունակուած էջ 39-էն

Արդիւնքը ցնցիչ է: Այսպէս? V=5 + I=1 + C=100 + A=0 + R=0 + I=1 + V=U=5 + S=0 + F=0 + I=1 + L=50 + I=1 + I=1 + D=500 + E=0 + I=1 =666:

Հրատարակիչ ընկերութիւնը հաստատուած է մայրաքաղաքի կալթա թաղամասին մէջ: Իբրեւ թղթակցութեան հասցէ, գիրքի անուննաթերթին վրայ գրուած է հետեւեալը. Ալման Փոսթմանէսի, Քուլթու 109: (Գերմանական նամակատուն, արկղ? 109) Գիրքը 138 էջ է: Առաջին թերթին վրայ կայ ձեռագիրը նշում, որ գրուած է մանիշակագոյն մելանով, 1914 Մեպ. 24տէն (ալաբուսի) ասկէրիլիմիզ օլտու: Վէ պիզի էտիրնէյէ սէվզ էյլէտիլէր 28 Մէպ.տէ: Վէ պու էօմիւրն էատիկարը հալինտէ իշպու սէվկիւլիլէ թիթապ պանա իսթանպոլտան կէօնտէրիլտի: Թէչէքիւր էտէրիմ: Ասատուր Ա. Քէօսէեանէ:

Յօդուածին վերջին գիրքը՝ իր չափերով ամենագոյնիւր, նուիրուած է փոքրիկ ընթերցողներուն. «ՊԱՐՏԷՉ ՀՈԳԵՒՈՐ»: 6x10 սմ. գիրք մը, որ հրատարակուած է 1865 թուականին Թ. Տիփթեանի տպարանին մէջ: Տպարանը գտնուած է Պոլսոյ Վէզիր Խանին մէջ: Այս խանը, կառուցուած 17րդ դարու առաջին կէսին, Պոլսոյ ամենամեծ խաներէն մէկն է: Գիրքը 370 էջ է: Իր էջերէն ներս ան ունի իւրաքանչիւր օրուան համար աղօթք, չորս Աւետարաններէն հատուածներ, ինչպէս նաեւ «Պատմութիւն վարուց սրբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսին, Հրաժարումն, Չղջումն, Արձակումն, Աղօթք Ապաշխարութեան, Քարոզ Ապաշխարութեան եւ Շարականք Ապաշխարութեան»: Անունանաթերթին հանդիպակած էջին վրայ տպուած է փայտափորագրութիւն մը, որ կը նկարագրէ անմեղ մանկիկ մը իր մօր գրկին մէջ: Անոնց գլխուն վրայ կայ Ս. Հոգին՝ աղանիի կերպարով, որ իբրեւ

պահապան կը հսկէ բարեպաշտ քրիստոնեայ ընտանիքին:

«Հնատիպ» կը կոչուին հայկական այս գիրքերը, որոնք 1512էն մինչեւ 1850 թուականը տպուած են: Անոնց թիւը ներկայիս 1611 հատ է: Սակայն, միշտ կայ այն հաւանականութիւնը, թէ գիրք մը վրիպած կրնայ ըլլալ մատենագէտներու ուշադրութենէն, դուրս մնացած է բոլոր ցուցակներէն, կամ՝ այս կամ այն պատճառներով բոլորովին «կորսուած» է ու մեզի չէ հասած: Վերը յիշուած գիրքերը «Հնատիպ» չըլլալով հանդերձ, կը հարստացնեն հայ տպագրութեան պատմութիւնը: Բոլոր հաւաքողներուն կոչ կ'ուղղենք վերատեսութեան ենթարկել իրենց համեմատաբար հին գիրքերը եւ եթէ ունին հատորներ, որոնք չեն ներառուած Յակոբ Մեղապարտ Մրազին կողմէ, տեղեակ պահել Հայաստանի Հանրային գրադարանը: Ասիկա է, մեր համեստ կարծիքով, հայ պատմութեան եւ մշակոյթին նուիրուած ամենամեծ ծառայութիւնը:

[*Հայաստանի Հանրային Գրադարանը - որ հրապարակողն է աշխարհի վրայ հրատարակուած հայերէն բոլոր գիրքերու ամբողջական ցանկին, ներկայիս յոյսով մէջ ներկայացուած գիրքերը իր ցանկին մէջ ներառելու աշխատանքին մէջ է: Ցանկը հրապարակուած է տպագիր եւ առցանց տարբերակներով: Առաջինը կը կոչուի «Հայ Գիրքը»: Քառահատոր աշխատասիրութիւն մը, որ իւրաքանչիւր հատորի մէջ կ'ընդգրկէ ժամանակագրական մէկ շրջան. 1512-1800, 1801-1850, 1851-1900, 1901-1920: Առցանց տարբերակին կարելի է հասնիլ այցելելով հետեւեալ կայքէջը. «nla.am/arm/meghapart»: Կայքէջը ունի առաւելութիւն մը. Ան կ'ընդգրկէ մինչեւ 1921-1930 ժամանակահատուածի հրատարակութիւններն ալ:]

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԵՆՃԵԱՆ

Շարունակուած էջ 20-էն

- (11) Նոյն, էջ 178:
(12) «Երիտասարդ Հայաստան», 1919 Ապրիլ 23:
(13) Ա. Կէնճեան, «Սոց. Դեմ. Հնչակեան Կուսակցութիւնը եւ Կիլիկեան Ինքնավարութեան Աֆթը», Պէյրուք, 1958, քերթոց «Արարատ» թիւ 27, էջ 98:
(14) Նոյն, էջ 110:

- (15) Նոյն, էջ 219:
(16) Նոյն, էջ 275:
(17) Միհրան Աղազարեան, «Սիսի Վերջին Արոտակալը եւ Իր Մեղապարտ Գաւառակալը», Պէյրուք, 1926:
(18) Արսէն Կիտուր, «Պատմութիւն Ա.Դ. Հնչակեան Կուսակցութեան», Բ. Հ., Պէյրուք, 1963, էջ 605-608:

եղած է դժուար օրերուն: Առանց Հայաստանի Սփիւռքը կը մնայ անհորիզոն եւ անհեռանկար գոյացութիւն: Ահա թէ ինչու՞ համեմատական կեցածքը անհրաժեշտութիւն է անկախ հանրապետութեան ամրացումին համար: Կը մնայ, որ «կոռուպցիա» ի դէմ պետական պայքարի քաղաքականութեան միանայ արտագաղթի կասեցման յատուկ մօտեցումը, ուր բացառապէս երեւալ պետութեան մտահոգութիւնը՝ արտագաղթի երեւոյթին նկատմամբ: Ան ալ կախում ունի ընկերային վիճակէն՝ աղքատացումի վերացու-

մով եւ գործազրկութեան բարելաւումով: Բարգաւաճ եւ ժողովրդավար Հայաստանի երազը կը մնայ ընդհանրական հայութեան երազը...: Պատերազմի վտանգը առկայ է ռազմատենչ Ատրպէյճանի տարուէ տարի ակուսները սրող սպանալիքներով: Սաֆարովի արտայանձնումը եւ ներման արժանացնելը, ինչպէս նաեւ Ստեփանակերտի օդանավակայանին բացման պատրաստութիւնները ձգտուածութիւնը լարուած կը պահեն: Աստուած բարին ընէ մեր ժողովուրդին ու հայրենիքին...:

«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի Կլենտլի
380-րդ կայանից

Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը



Կը շնորհաւորէ իր բոլոր ընկեր-ընկերուհիներուն,
հայ ժողովուրդի եւ իր զոյգ հանրապետութիւններուն՝
Հայաստանի եւ Արցախի
Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը

Այս բարեբաստիկ առիթով ան բոլորին կը մաղթ,
որ 2013 տարին ըլլայ քաջառողջութեան, արեւշատութեան
եւ յաջողութեան,
ինչպէս նաեւ ազային ձգտումներու նուիրագործման,
Հայրենիքէն ներս բարօր կեանքի ստեղծման,
Սփիւռք-Հայրենիք կապերու առաւել սերտացման,
ազգային միասնութեան ձեռքբերման եւ աշխարհի
խաղաղութեան բախտորոշ տարի:

قوى الرابع عشر من آذار



تيار المستقبل



القوات اللبنانية

يتقدمون
من

أبناء الجالية اللبنانية الكرام
بأحر التهاني وأصدق الأمنيات
بمناسبة عيدي



الكتائب اللبنانية



حزب هتشانك

الميلاد المجيد و العام الجديد

راجين ان تحل عليهم جميعا روح الميلاد المجيد أمنا وسلاما
 ويحمل لهم العام الجديد الأمن والأمان والصحة والتوفيق
 وان تتفتح بلادنا وشعوبنا والعالم بالتسامح
 وتؤلف المحبة بين قلوبهم